

ՅՈՎԵԱՆ ԱՐԲ. ՏԷՐՏԵՐԵԱՆ

*Փռնիզ ևր
Բարոյնէտը*

Հարոր ԺԶ

Spiritual Reflections

2021

Ի Հայրապետութեան
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ազնիւ մեկենասութեամբ՝
ՍԻՊԻԼ ԱՔՐԱՀԱՄԵԱՆԻ

*“Իմ ապաստանս եւ ապաւինս ես, ոյլ Աստուած,
եւ Քեզի կը վստահիմ” Սաղմոս 91:2*



This publication was made possible
through the generous contribution of
SYBILLE APRAHAMIAN

*“You are my refuge and my fortress;
my God, in You I will trust.” Psalms 91:2*

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	Էջ
Առաջաբան	6
Գիտակից Հաւատք	12
Էմմանուէլ՝ Աստուած ընդ մեզ	14
Քահանայութեան Խորհուրդը	17
Ոսկի Դարձները մեր սիրտը	18
Խօսք նուիրուած Սբ. Էջին	19
Երկինքէն իջած Հացը	21
Նորոգենք մեր Քահանայութիւնը	24
Կոմիտասեան Պատարագը	26
Աւագ Շաբաթ	35
Աւագ Հինգշաբթի	43
Նոր Պատուիրան	45
Աստուածորդու պատարագեալ կեանքին խորհուրդը	48
Ես եմ Յարութիւնը եւ Կեանքը	51
Քրիստոսի Յարութիւնը՝ Ապահովագրումը նոր արշալոյսներու	58
Հովուական Նամակ	61
Պատմութեան բառարանին մէջ Հայութիւնը կը նշանակէ Լինելութիւն	63

	Էջ
Հովուական Գիր Թեմի Հոգեւոր Հովիւներուն	66
Կոչումի ու Ծառայութեան Կեանք	71
Անժամանցելին	73
Ոգեկոչում Հայաստանի Հանրապետութեան 1918թ.	75
Հոգեւոր Տեսիլքով	76
«20-րդ դարը ծայրէ ծայր դարձաւ մահուկէնաց պայքար, բայց յաղթեցինք»	81
Մբ. Էջմիածին	86
Մբ. Էջմիածինը՝ «Հայու Վերածնութեան Աւագանը»	88
“Էջմիածին ի Հօրէ ի սիրտս ձեր”	92
Եկեղեցին՝ Լոյսին տանող Դուռը	95
«Ընկալցի զքեզ, Տէ՛ր»	97
Հոգիին Խորհուրդը	103
«Տէ՛ր, բարօք է մեզ աստ լինել»	105
Սրտաբուխ Կոչ	108
«Փառաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն մէջ»	110
Աստուծոյ Խօսքը լսել	113
Քրիստոնէական Նկարագրի Ոգին	115
Քաւ լիցի որ պարծենամ	117
Աստուծմով Հարստանալ	121

	Էջ
Կոչ Արցախի համար	123
Մեր զինուորները աղօթքն են կեանքին	125
Հայրենի հողը սուրբ է	128
Զօրակցության Աղօթք	130
Շնորհակալութիւն մեր զինուորներուն	132
Աղօթքի Հրաւեր	133
Միասնական Աղօթք	136
Սիրոյ եւ Միաբանութեան Հրաւեր	138
Սիրոյ Պատուիրանը	140
Խաչին Խորհուրդը	144
Կոչ Միասնականութեան	148
Ինչպէս փոխուեցաւ մեր կեանքը	150
Վերապրեցնենք Հայոյ Հոգին	151
Հովուական Գիր	
Նոր Տարուոյ եւ Ս. Ծննդեան Տօներու սեմին	155

ԱՌԱՋԱԲԱՆ

Սիրելիներ ի Քրիստոս,

Ուրախ ենք ներկայացնելու Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան Թեմի Առաջնորդ, գերաշնորհ Տեր Հովնան Արք. Տերտերյանի թվով 16-րդ «Փունջ մը Քարոզներ»-ի հավաքածուն, որը կազմված է Սրբազան հոր 2020թ.-ի ընթացքում գրի առնված քարոզներից:

Գերաշնորհ Տ. Հովնան Արք. Տերտերյանը 2020թ.-ը սկսեց Հայ Քրիստոնյայի Ինքնության տարի հռչակելով: *«Այս տարի իմ աղօթքներու և հովուական առաքելութեան կենտրոնացումը պիտի լինի հայ քրիստոնէային ինքնութեան գիտակցութիւնն ու ոգին: Ինչու՞ համար կարևորել ինքնութիւնը և ի՞նչ կը հասկնանք ինքնութիւն ըսելով: Ինքնութիւնը մեր նկարագիրն է, մեր պատկանելութիւնը, որը պիտի ունենայ իրեն յատուկ գաղափարախօսութիւնն ու գործելակերպը»...* «այն իր մէջ կ'ընդգրկէ նաև այն բոլորը, որոնք Աստուծոյ տուածն են. եկեղեցի, հայրենիք, մշակոյթ, բարոյակաւնութիւն, հոգևոր արժէքներ»:

2020թ.-ը դեռ նոր էր սկիզբ առել, երբ «Կորոնա» անվանումը կրող համավարակը աստիճանաբար նվաճեց ամբողջ աշխարհը եւ իր մահացու ճիւղաններով մարդկության մէջ ահ ու սարսափ մտցրեց:

Նախ անհրաժեշտ էր գիտակցել, թե ինչն էր խնդրի իրական պատճառը. *«Մեկուսացումի այս օրերուն մենք բոլորս կը գիտակցինք, որ դեռ մինչև երեկ ինչքա՞ն հեռացած էր մարդկութիւնը Աստուծմէ: Աշխարհիկ արժէքներէ շրացած՝ մարդը մոռցած էր իր Մտեղծիչը և*

երկրպագութիւն կը մատուցէր նիւթին առջև, որը ժամանցելի է»։ Իսկ ' «Անժամանցելին Աստուած ինք է։ Աստուծոյ մէջ կը գտնենք մեր հոգու պատկերը, ճանապարհը մեր կեանքին, նպատակը մեր քայլերուն»։

Հստակ էր, որ մարդկության տառապանքը, ոչ թե անտեսանելի վարակի հետեւանք էր, այլ աստվածային սիրո բացակայության. *«Աշխարհն այսօր կը տառապի սիրոյ ծարաւէն», եւ «ինչ որ այսօր կը տեսնենք աշխարհի կեանքի մէջ՝ բացակայութիւնն է Քրիստոսի սիրոյն ու երկնային իմաստութեան»։*

Փաստորեն, այս մարտահրավերը որքան, որ նյութական էր, նույնքան եւ առավել հոգեւոր, եւ վերջինիս պետք էր դիմագրավել հավատով եւ Աստծուն ապավինելու անհրաժեշտությամբ. *«Վերջին շրջանի փորձութիւնները լաւ դաս մը սորվեցուցին մեզի։ Առաքելի խօսքերով՝ «Զգացինք որ մահուան վճիռը կախուած է մեր վրայ։ Բայց ասիկա եղաւ, որպէսզի սորվինք մենք մեզի չապաւինիլ, այլ՝ Աստուծոյ, որ կը յարուցանէ մեռելները» (Բ. Կորնթ. 1:9)։*

Աստծուն ապավինող անձինք անկոտրում են իրենց հավատի մէջ, Տիրոջն ունեն՝ իբրեւ իրենց կյանքի ցուպ եւ ապավեն։ Նրանք պատրաստ են Տիրոջ հետ քայլել կյանքի ակիքների վրայով եւ հայտարարել. *«Թող չտուինք և ոչ ալ թող պիտի տանք, որ վարակը ընկճէ մեզ»։*

Հովնան Սրբազանն իր բազմաթիվ հովվական նամակներով եւ քարոզներով խրախուսեց եւ գոտեպնդեց թեմի բոլոր ծուխերին, որպէսզի մնան հաստատակամ՝ զինված քրիստոնեական հավատով ու հույսով *«Երբէք չվախնանք ու չերկմտենք, երբ մեր կեանքի ճանապարհին խաչը կը կրենք, փորձութեան բովէն կ'անցնինք, որովհետև խաչը կրել քրիստոնեային համար կը նշա-*

նակէ դոյզն իսկ չափով զգալ ցաւն ու տառապանքը մեր Տիրոջ, որը և սիրով վերցուց իր վրայ»:

Սրբազան Հայրը չդադարեց գոտեպնդել իր հավատավոր հոտին մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի, հրաշափառ Հարության ավետիսով, որը թերեւս Հայոց պատմության մեջ առաջին անգամը լինելով՝ տոնախմբվում էր առանց հավատացյալների ներկայության: Սրբազան հայրը շարունակեց հիշեցնել մեր քրիստոնեական ինքնության պահպանման սրբազան առաքելության մասին. «Քրիստոսի յեղաշրջող յարութիւնը տօնախմբելով կը վերահաստատենք մեր յանձնառութիւնը հաւատքի ուսուցիչներ դառնալու մեր զաւակաց համար, որպէսի անոնք երբեք չխոտորին ճշմարտութեան ճամբաներէն»:

Մեր Քրիստոնեական ինքնության գրավականը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, որը մեր օրերում բոլորիս հոգածության կարիքն ունի, քանզի այսօր ժամանակավորապէս դադարել են մեր սրտաբուխ աղոթքների մրմունջը նրա հազարամյա սրբազան պատերի ներքո: Հիշենք, որ «Մ. Էջմիածինը կը բացատրէ Աստուծոյ այցը մեր մայր հողի վրայ, և Անոր ներգործութիւնը մեր ազգի կեանքին մէջ: Մենք պիտի գուրգուրանք Աստուծոյ կողմէ մեզի տրուած մեծ պարգևին՝ Մ. Էջմիածնին, որը մեր առջն կը բանայ ճանապարհը յաւերժութեան»:

Սբ. Էջմիածնի աստվածադրոշմ տաճարում էր, որ Սրբազան հայրը 40 տարի առաջ՝ 1980թ.-ին, ստացավ իր քահանայական օծումը, ինչն էլ իր հերթին դուռ բացեց “յաւերժութեան ճանապարհի”.

«Կուզենք, անկեղծ սրտով ու համարձակ յայտարարել, որ քառասուն տարիներու մեր ծառայական կեանքը միշտ փորձեցինք հաւատքի կեանքով արժևորել՝ Աստուծոյ խօսքին քա-

բողիչը դառնալով, խոնարհ հովիւի սպասաւորութեամբ, հայրենական ծառայութիւններով իմաստաւորելով մեր կեանքը, արդիւնաւորելով մեր քահանայութիւնը բազմաբնոյթ գործունէութեամբ առաջնորդելու մեր հաւատաւոր ժողովուրդը»:

Սրբազանի խորհուրդը հստակ է ու պարզ՝ *«Ազգերը կ'սպարին սրբութիւններով»*, երբեք չմոռանանք այս ճշմարտությունը:

2020թ.-ի սեպտեմբերի 27-ին մեր դարավոր թշնամին կրկին անգամ հերոսական Արցախի մեջ սանձազերծեց արյունալի մի պատերազմ: Արեւմտեայ անսպասելի էր: Սրբազան հայրը լծվեց գործի՝ իր կարելին կատարելով, որ զսպվեր արյունախում ոսոխը, դիմելով գրեթէ ԱՄՆ-ի հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդներին եւ կազմակերպութիւններին: Միեւնոյն ժամանակ Սրբազանը անընդհատ հիշեցնում էր իր հավատաւոր հոտին մեր Տիրոջ խրախուսական խոսքերը՝ *«Ոտքի՛ ելէք, մի՛ վախնաք»*: Պետք չէր վախենալ, քանզի ունենք մեր Տիրոջն ու պահապան զինվորներին, ովքեր *«աղօթքն են մեր կեանքին»*:

Արդարեւ, ինչպէս դարերի հոլովույթում այնպէս էլ այսօր մեր մահու կենաց պայքարն ուղղված է մեր ինքնության դեմ, քանզի թշնամին ցանկանում է խեղաթուրել պատմական ճշմարտութիւնը եւ կոտրել մեր ոգին, սակայն՝ ապարդյուն. քանզի *«Ինչպէս մեր նախնեաց, այնպէս ալ այսօր և յաիտեան մեր կեանքի ճանապարհորդութիւնը կը կոչուի Պայքար. Պայքար յանուն հաւատի և հայրենեաց»*: Այո, *«Հայոց ցեղասպանութիւնը կը շարունակուի, բայց մեր քաջարի ու սուրբ երիտասարդները ի խնդիր բոլոր ժամանակներու հայրենիքին՝ իմացեալ մահուամբ անմահութիւնը կը կերտեն»*:

Սրբազան հայրը խաղաղության ջատագով է, մենք օտարի ինչքերին աչք չենք տնկել. *«Մենք կ'ուզենք ապրիլ Աստուծոյ տուած հողին վրայ, և երիտասարդներու արեամբ նուիրականացած հողը պահելու սրբազան պարտք ունինք»*: «Հայուն էութիւնը կը դրսևորուի խաղաղ ու ստեղծագործ կեանքով, ինչպէս անցեալին է եղած և այսօր ու յաւիտեան: Չմոռանանք՝ Հայաստանը դրախտավայր է, տունը բոլորիս և Աստուծոյ»:

Մեր այս օրհասական օրերին ուղղակի հրամայական է դասեր քաղել մեր հարուստ անցյալից, ուղիղ եւ աստվածահաճո ճանապահի վրա դնել մեր ներկան, որպէսզի ունենանք կայուն ապագա, չէ որ *«Հայ ազգը պատմութեան ընթացքին շատ փորձութիւններ տեսած է՝ աղէտներ, պատերազմներ, սով եւ հիւանդութիւն: Սակայն մեր հայրերու հաւատքին շնորհիւ մենք միշտ վեր յառնած ենք փիւնիկի պէս»*:

«Արդարև, երբ Քրիստոսի Աւետարանն է ուղեցոյցը մեր կեանքին, ապա ամէն պատգամ մեզ կ'առաջնորդէ դէպի Աստուած՝ կեանքն ուղեգծելով Քրիստոսի կողմէ բացուած ճանապարհին վրայ: Քրիստոսի Աւետարանը պէտք է ըլլայ մշտական ուղեցոյցը մեր կեանքին, այլապէս կը խարխափինք խաւարին մէջ»:

Տարեվերջում հստակ դարձավ, որ ինքնության տարի հռչակելը խորհրդանշական իմաստ ունեւ քանզի անցնող 2020թ-ը եղավ մեր ազգի հազարամյա պատմության ամենից ծանր եւ փորձություններով լեցուն տարիներից մեկը եւ այդ փորձությունների հաղթահարման միակ կովանը ոչ թե գենքն էր կամ դիվանագիտությունը, այլ՝ ազգային ինքնագիտակցության բարձրացումը եւ համախմբումը քրիստոնական մեր անմար արժեքների շուրջ.

Ուստի, ինչպես տարեսկզբին այնպես էլ տարվա ավարտին, Սրբազան հոր կոչը հստակ է. *«Մենք հաւատարիմ մեր ինքնութեան, սրբութեամբ խնկարկենք յիշատակը մեր սուրբ նահատակաց, որպէսզի մեզմէ իւրաքանչիւրին կեանքը դառնայ նոր կեանք, նոր հայրենիք, նոր եկեղեցի, նոր ժողովուրդ վաղուան սերունդներու կեանքին մէջ»:*

Որդիական ակնածանք՝
Հայկ Մադոյան

Փետրվար, 09, 2021

ԳԻՏԱԿԻՅ ՀԱՒԱՏՔ

Ս. Ծննդեան Տօնին ընդառաջ քրիստոնեայ հաւատացեալը պարտ է ունենալ նախապատրաստութիւն հոգեւորապէս, որպէսզի գիտակից հաւատքով դիմաւորէ Քրիստոսի ծնունդը եւ անոր խորհուրդը՝ իր կեանքն առաջնորդելով դէպի նոր կեանք:

Քրիստոսի Ծնունդը Աստուածորդու՝ երկինքէն երկիր էջքն է, մարդեղութեան խորհուրդը, խոնարհութեան կենդանի պատգամը, որպէսզի մարդը բարձրանայ առ Աստուած:

Ի՞նչ է խորհուրդը Ս. Ծննդեան, յատկապէս նոր տարուայ սեմին. պարզ բացատրութեամբ մը՝ անցեալ կեանքին, անցնող տարիին վերաբժեւորումն է, որպէսզի մեր առջեւ բացուող նոր տարին ապրինք հաւատքով ու աղօթքով: Նոր տարին դեռ չթելակոխած՝ վերջին օրերուն էր, երբ պատեհ առիթէն օգտուելով մուտք գործեցինք եկեղեցիէ մը ներս, որտեղ ունեցանք աղօթքի ու խոկումի առանձնակի պահ մը: Վերադարձին թուղթին յանձնեցինք մեր մտորումները...

Այս տարի իմ աղօթքներուս եւ հովուական առաքելութեան կեդրոնացումը պիտի կատարեմ հայ քրիստոնեային ինքնութեան գիտակցութիւնն ու ոգին: Ինչո՞ւ համար կարեւորել ինքնութիւնը եւ ի՞նչ կը հասկնանք ինքնութիւնը ըսելով: Ինքնութիւնը մեր նկարագիրն է, մեր պատկանելիութիւնը, որ պիտի ունենայ իրեն յատուկ գաղափարախօսութիւնն ու գործելակերպը: Օրեր առաջ դիմատետրի միջոցով մեր մտածումները ամփոփեցինք հետեւեալ սահմանումներուն մէջ.

- Հաւատք առ Աստուած / Faith in God (որդեգիր ենք Աստուծոյ)

- Ի պաշտպանություն մեր Ժառանգին / Embracing our Heritage (ընտանիքը, հոգևոր դաստիարակությունը)
- Յարգանք մարդկության / Respect for Humanity
- Կամուրջ առ հայրենիք եւ Ս. Էջմիածին / Establishing the Bridge to the Motherland and Holy Etchmiadzin
- Մարդասիրական ծրագրեր / Reflecting on Humanitarian Missions
- Խաղաղության ճարտարապետներ / Becoming Architectures of Peace:

Հայ քրիստոնեան պարտ է ունենալ ուղեգծուած ճանապարհ, որուն ամբողջ ընթացքին մեր հայեացքը պիտի ուղղենք դէպի Աստուած եւ Մայր Հայաստան-Ս. Էջմիածին: Այս երկու գերագոյն ճշմարտութիւններով պիտի առաջնորդուի մեր կեանքը, որոնք մեր ինքնութեան դրոշմն են: Ժամանակները հետզհետէ նոր մարտահրաւերներու առջեւ կը բերեն մեզ, եւ մենք ամէն օր աւելիով պիտի պատրաստենք մեզ՝ զինուելով ինքնութեան կարեւորագոյն յատկանիշներով. գիտութիւն եւ տնտեսութեան նոր բարձունքներ կ'ապահովեն մարդկութեան կեանքին մէջ, բայց առանց հաւատքի ու աղօթքի կեանքը շուտով կը խարխլի եւ փուլ կու գայ մարդկութեան կեանքը: Ուրեմն՝ հաւատքը դարձնենք հիմնաքարը մեր կեանքին:

Յունուար 5, 2020

ԷՄՄԱՆՈՒԷԼ՝ ԱՍՏՈՒԱԾ ԸՆԴ ՄԵԶ

Էմմանուէլ՝ Աստուած ընդ մեզ . այս է ողջ խորհուրդը Ս. Ծննդեան տօնախմբութեան մեր կեանքէն ներս Աստուծոյ ներկայութեան՝ մանուկ Յիսուսի Ս. Ծննդեան հրաշքին ի տես: Յիսուս մանուկին ծնունդով Աստուած Ինք կ'այցելէ մարդկութեան՝ մեկնարկը տալով Իր երկրային փրկչագործ առաքելութեան: Աստուած կը մարդանայ մեզի հետ ըլլալու, մեր մէջ բնակելու, Իր հրաշալի ծնունդով մեզ վերստին ծնունդ պարգեւելու, որպէսզի մեր կեանքը ուղեգծենք Իր կեանքին կենդանի օրինակով ու Աստուծոյ պատուիրաններուն համահունչ:

Ամէն անգամ, երբ կը տօնախմբենք մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի Ծնունդը, մեր կեանքէն ներս Իր մշտամնայ եւ մշտանորոգ ներկայութիւնը եւ ներգործութիւնը կը խոստովանինք նախեւառաջ, կը վկայենք, թէ «*Աստուած ընդ մեզ*» է եւ այդ գիտակցութեամբ մեր կեանքին ընթացքը կ'ուղղենք դէպի բարին եւ գեղեցիկը, դէպի աստուածային կատարելութիւն ու ստեղծագործ կեանք:

Երբ կ'անդրադառնանք մեր կեանքէն ներս Աստուծոյ ներկայութեան, յայտնութեան պահ մըն է, որ կ'արձանագրենք, որով եւ հոգեւոր վերածնունդ կ'ապրինք՝ նոր խոստովանելով, նոր տեսիլքներով եւ նոր յանձնառութիւններով զարդարելով մեր կեանքը:

Ս. Ծննդեան եւ Ամանորի հոգեզմայլ տրամադրութիւններով խանդավառ, որպէս հոգեւոր սպասաւոր Հայց. Առաքելական մեր մայր Սուրբ Եկեղեցւոյ՝ մենք մեր աղօթքը կը բարձրացնենք առ Աստուած, որպէսզի Տէրը մեր սրտերը վերածէ բեթղեհէմեան մսուրի՝ մանուկ Յիսուսը հոն պատսպարելու համար: Եւ անշուշտ

մեր աղօթքին մէջ կը յիշենք Խաղաղական Ժամերգութենէ Ս. Ներսէս Շնորհալիին «Շնորհեա՛ Մեզ Տէր» երգը, ուր կ'ըսէ. «Եւ քանզի մանուկ ծնաւ, Որդի եւ տուաւ մեզ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ որոյ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց, զի Աստուած ընդ մեզ է: Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ սքանչելի խորհրդակից, զի Աստուած ընդ մեզ է: Եւ Աստուած հզօր իշխան, զի Աստուած ընդ մեզ է: Եւ իշխան խաղաղութեան, Հայր հանդերձելոյ յաւիտենին Տէր Աստուած ընդ մեզ է»:

Մեր նախնիք Աստուծոյ մշտական ներկայութեան գիտակցութեամբ եւ հաստատումով առաջնորդած են իրենց կեանքի ճամբան՝ կերտելով հայրենիք ու եկեղեցի, հոգեւոր առաքելութիւն եւ արժէքներ, բարոյականութեան բարձր չափանիշներ եւ մշակոյթ, գիտութիւն եւ արուեստ: Առանց երկնչելու, ընկրկելու կամ վարանելու մեր նախնիք կերտած են ապագայ գալիք սերունդներուն համար, որովհետեւ համոզումն ունէին, թէ «Տէր Աստուած ընդ մեզ է»:

Աստուած ընդ մեզ. քրիստոնէայ հաւատացեալը երբ բարձրաձայն կ'արտասանէ այս բառերը, անկասկածօրէն անդրադարձումի պահ մը կ'ունենայ, հոգեւոր պայծառակերպութիւն մը, որ իր մէջ կ'արթնցնէ շարժումը նոր կեանքին: Հոգեւոր բարձր ինքնագիտակցութեան կամ, եթէ կ'ուզէք՝ ինքնավստահութեան այդ զգացողութեամբ կարելի կ'ըլլայ պատասխանել Աստուծոյ կոչին՝ մեզի տրուած կեանքը Իրմով արժեւորելու համար:

Այսօրուայ աշխարհի նոր պայմաններու բերումով յաճախ կը թերանանք աղօթքով համեմել մեր կեանքը, որուն որպէս արդիւնք ինքնըստինքեան կը հեռանանք Աստուծմէ՝ նմանելով այն ծառին, որու արմատները հողին մէջ չեն եւ բնականօրէն՝ կեանքը սահմանա-

փակուած է ժամանակի մը մէջ: Մարդու պարագային ժամանակի մը մէջ սահմանափակուած կեանքը հոգեւոր բոլորութիւն է, այն ալ՝ չափազանց վտանգաւոր: Մարդը իր բնութեամբ անքակտելիօրէն կապուած պիտի մնայ Աստուծոյ հետ՝ առանց մոռնալու, որ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած է: Այլապէս՝ ան կը դադրի կենսագործելէ եւ ծառին նման կը չորնայ:

Սիրելիներ՝ ի Քրիստոս,

Յիսուսի Ծննդեան պատկերին մէջ գտեք ձեր կեանքին նոր ուղին: Ապրեցէ՛ք հաւատքով, կեանքը մշակեցէ՛ք հոգեւոր ու բարոյական արժէքներով, ձեր հոգիին սլաքը միշտ ուղղեք դէպի Աստուած, զեղուն պահեք ձեր սէրն ու եռանդը Հայրենիքի ու Ս. Էջմիածնի հանդէպ: Սի զլանաք ձեր զաւակաց որպէս ժառանգ աւանդել մեր ազգի ու եկեղեցւոյ սրբութիւնները, որպէսզի հոգեւորապէս զինած ըլլաք զանոնք դիմակայելու ժամանակի բոլոր մարտահրաւերները:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,
Օրհնեա՛լ է Յայտնութիւնն Քրիստոսի

Թող Աստուած աշխարհին պարգեւէ խաղաղութիւն ու բարգաւաճ կեանք, մեր երկրին՝ Հայաստանին, մնալուն վերելք, մեր Ս. Եկեղեցւոյ անսասանութիւն, ազգիս Վեհափառ Հայրապետ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ կենաց արեւշատ օրեր, որպէսզի շարունակէ առաջնորդել մեր ազգն ու եկեղեցին դէպի նորանոր բարձունքներ:

Էմմանուէլ՝ Աստուած ընդ մեզ, Աստուած մեր ժողովուրդին հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Յունուար 6, 2020

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Քահանայութիւնը Քրիստոսի կեանքին նմանակցութեամբ ապրուած կեանքն է: Կաթողիկէ եկեղեցւոյ մեծագոյն աստուածաբան եւ աղօթող հայրապետներէն Թովմա Աբուինացին զարգացուցած է հետեւեալ մտածումը երկու բառերու մէջ՝ Imitate Christ:

Արդարեւ, երբ Քրիստոսի Աւետարանն է ուղեցոյցը մեր կեանքին, ապա ամէն պատգամ մեզ կ'առաջնորդէ դէպի Աստուած՝ կեանքն ուղեգծելով Քրիստոսի կողմէ բացուած ճանապարհին վրայ: Քրիստոսի Աւետարանը պէտք է ըլլայ մշտական ուղեցոյցը մեր կեանքին, այլապէս կը խարխափինք խաւարին մէջ: Ուրիշ խօսքով՝ քահանան առաւելագոյնս, քան քրիստոնեայ հաւատացեալը, պիտի ըլլայ կենդանի ու ապրող Աւետարան իր կեանքին ընթացքով: Եւ որո՞նք են այն միջոցները, որոնք մեզ կը պահեն այն ճանապարհորդութեան մէջ, որ մեր կեանքը կ'առաջնորդեն ապրելու Քրիստոսի նմանակցութեամբ. հիմնականին մէջ խոկումն ու աղօթքի կեանքը, որոնք միաձոյլ կը դառնան հայելին մեր ներաշխարհին եւ անով իսկ կը կողմնորոշենք մեր կեանքին ընթացքը՝ մեկնակէտ ունենալով Աստուած:

Ուրեմն, որպէս սպասաւոր մեր ս. եկեղեցւոյ, քահանայութիւնը պիտի ապրինք սրբութեամբ, աստուածապաշտութեամբ, բարեգործ ու ծառայակերպ կեանքով, եւ այն ժամանակ փառաւորած կ'ըլլանք զԱստուած եւ մեր մէջ կը ճառագայթէ Քրիստոսի ներկայութիւնը, այն իմաստով, որ մեր կեանքը ապրած կ'ըլլանք Քրիստոսի նմանակցութեամբ:

ՈՍԿԻ ԴԱՐՁՆԵՆՔ ՍԵՐ ՍԻՐՏԸ

*«Մեզ պետք չեն ոսկի սկիհներ,
մեզ պետք են ոսկի քահանաներ»,*

Սր. Յովհան Ոսկեբերան

Մեծ հայրապետին այս չափազանց խորհրդաւոր խօսքը որոշապէս մտածելու հիմնական առիթ կ'ընձեռէ մեզի, որպէսզի աւելի խորապէս ըմբռնենք խորհուրդը քահանայութեան եւ սպասումը՝ ժողովուրդին: Որովհետեւ Քրիստոսի Ս. Եկեղեցւոյ հաւատացեալները ուրիշ աչքերով կը նային քահանային՝ զինք կոչելով սուրբ հայր, եւ անոր մէջ տեսնելու Քրիստոսի պատարագեալ անձին ներկայութիւնը: Ուրեմն, քահանան իր ողջ էութեամբ պիտի ունենայ սրբութեամբ ապրուած կեանքի ընթացք մը, աղօթքով մշտանորոգ կեանք մը, հաւատքով լեցուն սիրտ մը, ծառայութեամբ իմաստաւորուած կեանք մը, եւ տակաւին ինչքա՛ն պարտաւորութիւններ կը դրուին քահանային վրայ, որոնք ինքնըստինքեան զինք կը դարձնեն ոսկի քահանայ, եթէ երբէք մեր կեանքին ընթացքը կ'ապրինք Քրիստոսի նման:

Կեանքը կ'ուսուցանէ մեզ փորձով, որ նիւթական արժէքները ժամանցելի են, եւ էականը մարդու հոգին է եւ հոգեւոր արժէքները, որոնք պետք է ընդունինք որպէս անժամանցելի: Այս իսկ պատճառով մեծ հայրապետը կը զգուշացնէ, հետամուտ չըլլանք ոսկիին ու նիւթական արժէքներուն, որոնք չեն կրնար լոյս տալ մեր հոգիին: Այլեւ, ոսկի դարձնենք մեր սիրտը, որպէսզի սէր բաշխենք մեր շուրջիներուն:

Յունուար 12, 2020

ԽՕՍՔ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԻՆ

Ժողովուրդներու կեանքին մէջ ծնունդ են առած Սրբութիւն Սրբոցներ, որոնք Աստուածադրոշմ են եւ որոնք ուղեգծած են նոյն ժողովուրդներու կեանքին ճանապարհը: Սրբութիւն Սրբոցները եղած են հոգեւոր ու բարոյական, ազգային ու հայրենական գաղափարախօսութեանց դարբնոցը: Մեր ազգի կեանքին մէջ Սրբութիւն Սրբոցն է Ս. Էջմիածինը, քանզի Աստուածահիմն այն ներկայութիւնն է, որն իր մէջ կը խտացնէ մեր ողջ պատմութիւնը՝ իր անցեալով, ներկայով ու գալիքին տեսիլքով: Ս. Էջմիածնի Մայր Տաճարը իր անուամբ իսկ կը խորհրդանշէ Աստուծոյ այցը մեր ազգի զաւակաց՝ Լուսաւորիչ հայրապետի տեսիլքով:

Դարերով նուիրականացած է Ս. Էջմիածինը, քանզի անոր Ս. Խորանի առջեւ է ամրագրուած մեր քրիստոնէական հաւատքը՝ Մեսրոպաշունչ Աստուածաշունչով, Վարդանանց տեսիլքով՝ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց», Սարգսրապատի հերոսամարտով եւ դեռ բազում հանգրուաններով իմաստաւորուած ու պատմութիւն դարձած դէպքերով, որոնց առանցք են դարձած տեսլապաշտ հայորդիք՝ հոգեւորական, թէ աշխարհական առաջնորդներ:

Ս. Էջմիածինը մեր ազգի «Մայր դաստիարակն» է եղած իր մշտարթուն ներկայութեամբ: Դարերու ընթացքին իր տիրական ներկայութեամբ ունեցած է բազում վերանորոգութիւններ, բայց անոնցմէ եւ ոչ մէկը հաւասար է իր տարողութեամբ այս օրերուն Վեհափառ Հայրապետի նախաձեռնութեամբ ձեռնարկուած վերանորոգութեանց: Այս վերջին տարիներուն հիմնապէս կը վերանորոգուի Մայր Տաճարը, որն իրապէս անյե-

տաձգելի աշխատանք մըն էր: Ձեզի ներկայացուած պատկերները յստակօրէն կը բացատրեն վերանորոգչական աշխատանաց տարողութիւնը:

Ի՞նչ է մեզմէ սպասուածը. սերունդներէն մեզի որպէս աւանդ վստահուած Սրբութիւն Սրբոցը փոխանցել գալիք սերունդներուն համազգային աղօթանուէր մասնակցութեամբ, որպէսզի Ս. Էջմիածինը շարունակի մնալ բոլորիս միաւորող սրբազան կառոյցը, որուն մէջ պիտի տեսնենք մեր հոգու պատկերը եւ մեր ինքնութեան արմատը:

- Ս. Էջմիածինը հայուն հոգեւոր հայրենիքն է:

- Ս. Էջմիածինը քրիստոնէայ Հայաստանին կնիքն է:

- Ս. Էջմիածինը կամուրջն է՝ մեզ առ Աստուած առաջնորդող:

- Ս. Էջմիածինը բաբախող սիրտն է հայութեան:

Էական է, որ բոլորս մասնակցենք վերանորոգութեան աշխատանքին՝ մեր հոգու պարտքը կատարելով, ամէն մէկս մեր կարողութեան սահմաններուն ներածին չափով, որպէսզի այն շարունակէ մնալ պատկերը մեր ամբողջականութեան ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Ս. Էջմիածինը մեր ինքնութիւնը բացատրող խորհուրդն է: Ով իր կեանքը կ'ապրի Սուրբ Էջմիածնով, այդ անձը փաստօրէն կը դառնայ մանրակերտը Ս. Էջմիածնի:

Յունուար 24, 2020

Գահիրէ

ԵՐԿԻՆՔԷՆ ԻԶԱԾ ՀԱՅԸ

«Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ, երկինքէն իջած հացը չէր: Հայրս է, որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ հացը ան է, որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին» (Յովհաննէս, 6:32-33):

Տիրոջ այս խօսքը արձանագրած է Յովհաննէս Աւետարանիչ, որ իր մէջ կ'ամփոփէ Աստուծոյ սիրոյ անսահմանելիութիւնը աշխարհի մարդկանց նկատմամբ, մարդեղութեան խորհուրդը՝ Աստուածորդու խոնարհումը երկինքէն երկիր, եւ Տէրը՝ որպէս ճշմարիտ հացը՝ անժամանցելի ու կենսատուն:

Քրիստոս այս խօսքերը կ'արտասանէ՝ ուղղեալ այն մարդկանց, որոնց մտքին մէջ կար շփոթ ու կասկած: Անյստակօրէն կը բացատրէ ճշմարտութիւնը, որ անպատին մէջ Մովսէսի կողմէ տրուած հացը երկինքէն չէր: Ճշմարիտ հացը կը պայմանաւորուէր Իր՝ Աստուծոյ մարդեղութեամբ, որ երկինքէն երկիր իջաւ, որպէսզի նոր կեանք բաշխէր աշխարհին ու մեր առջեւ բանար ճանապարհն առ Աստուած: Եթէ աւելի խորքը թափանցենք Քրիստոսի խօսքերուն, ապա մենք կ'ըմբռնենք այն, որ Քրիստոս առաւել կը խորացնէր բոլորի մտքերուն մէջ այն, որ իր աշխարհ գալուստը ճշմարիտ հացն էր, հրաւերը նոր կեանքին, որուն պատասխանելու համար անհրաժեշտ էր հոգեւոր պատրաստութիւն, աշակերտութիւն Քրիստոսի Աւետարանին ու անկէ ճառագայթող բոլոր պատգամներուն, որոնք մեզի կը ներկայանան դրուագներով, հրաշքներով ու առակներով եւ

որոնք բոլորն ալ կը միտին մշակել մեր մէջ ճշմարիտ քրիստոնեան: Ամենէն էականը, սակայն, մեզի համար կը մնայ Քրիստոսի կեանքին օրինակը, որուն հետեւելով մենք կը մնանք դէպի Աստուած առաջնորդող ճանապարհին վրայ: Եւ Քրիստոսի ծնունդէն յետոյ մեզի ներկայացող գլխաւոր հանգրուանն է Տեառնընդառաջը, Աստուածորդու՝ մանուկ Յիսուսին տաճար ընծայումը, որուն պատկերը մեզ կը թելադրէ ըլլալ երախտագէտ Աստուծոյ հանդէպ եւ կեանքն ընծայաբերելու Աստուծոյ: Այս արարքը անհրաժեշտ է անընդհատ կրկնել մեր կեանքին մէջ, որպէսզի մեր հոգեւոր կապը Աստուծոյ հետ պարբերական չըլլայ, այլէ մնայուն ու անքակտելի: Եւ երբ կը հետեւինք Քրիստոսի օրինակին ու Անոր քարոզած Աւետարանին, ապա այն ժամանակ մեր կեանքը կը սնուցանենք ճշմարիտ հացովը, որ կեանք կու տայ աշխարհին:

Միրելի բարեպաշտ հայորդիք, Քրիստոսի պատգամը պարզ է ու յստակ, որ կեանքին մէջ փնտռենք ոչ թէ կորստական հացը, այլէ յաւիտենականը: Ահաւասիկ այդ տեսիլքով է, որ մեր քայլերը կ'առաջնորդենք դէպի եկեղեցի, ուր կ'ուզենք հաղորդ դառնալ Աստուծոյ խօսքին՝ որպէս ճշմարիտ հացը: Նոյն տեսիլքով կը հետեւինք Քրիստոսի կեանքին ու Անոր Աւետարանին, որպէսզի մեր մէջ կրենք Աստուծոյ ներկայութիւնը: Եւ վերջապէս, նոյն տեսիլքը մեզի կը պարգեւէ քրիստոնեայի ինքնութիւնը, առանց որու մեր կեանքը պիտի նմանի այն ծառին, որ արմատ չունի:

Ս. Ծննդեան տօնին մեր պատգամին մէջ հրաւեր կարդացինք՝ մեր հաւատացելոց ըսելով, որ 2020 տարին մեզի համար պիտի ըլլայ ինքնութեան տեսիլքի տարի: Մեր կոչն է, որ 2020 տարւոյ ամբողջ ընթացքը նուիրենք

մեր քրիստոնեական ինքնութեան տեսիլքը նորոգելու գաղափարին ու ձգտումին, եւ գործնապէս ապրինք մեր քրիստոնեական հաւատքը: Քանզի քրիստոնեական ինքնութեան տեսիլքը կողմնորոշիչն է մեր կեանքի ընթացքին, որպէսզի մեր քայլերը մշտապէս ուղղենք դէպի Աստուած, դէպի բարին ու գեղեցիկը, դէպի ծառայութիւն՝ մարդկութեան հանդէպ:

Ս. Պետրոս Հայց. Եկեղեցի, մեր հովուական այցը առիթ կ'ընձեռէ մեզ, որպէսզի տեսնենք այս ընտանիքը իր հաւատքի կեանքին մէջ, խանդավառութիւնք ու քաջալերենք ձեզ, որպէսզի ձեր կեանքով մնաք միշտ Տեառնընդառաջ, խոնարհումով ու ծառայութեամբ, համախմբուած ձեր հովիւի գլխաւորութեամբ ու անոր ընկերակցող ծխական ու յարակից մարմիններով միասին մէկ մարմին կազմած եւ ձեր հայեացքն ուղղած դէպի երկինք, ուրկէ մեզի կը տրուի ճշմարիտ հացը, որ կեանք կու տայ աշխարհին: Այդ ճշմարիտ հացը Քրիստոս է: Ինչպէս Պօղոս Առաքեալը կ'ըսէ. «Ձի ինձ կեանք Քրիստոս է» (Փիլ. 1:21):

Փետրուար 9, 2020

ՆՈՐՈԳԵՆՔ ՄԵՐ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ

Սրբոց Ղեւոնդեանց տօնն է այսօր, եւ ի սրտէ կը շնորհաւորենք ձեզ բոլորդ, որպէսզի Աստուծոյ օգնականութեամբ շարունակէք ձեր հոգեւոր առաքելութիւնը՝ մեր ժողովուրդին քարոզելու համար Աստուծոյ խօսքը եւ ձեր ծառայութեամբ լուսաւորելու համար մեր հաւատացելոց հոգեւոր կեանքը՝ Քրիստոսի նմանակցութեամբ:

«Եղի զքեզ ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ ի փրկութիւն մինչեւ ի ծագս երկրի» (Գործք 13:7): «Քեզ դրկեցի, որ լոյս ըլլաս հեթանոսներուն, փրկութեան պատճառ ըլլալու աշխարհի բոլոր կողմերուն»:

Գործք Առաքելոցի մէջ արձանագրուած՝ Տիրոջ այս պատգամին հաղորդ դառնալով՝ կը նորոգենք մեր քահանայութիւնը: Բոլորս ալ քաջ գիտենք, որ սա ինքնին կը բացատրէ մեզի տրուած առանձնաշնորհումը, որպէսզի մեր քահանայական կոչումը կեանքի կոչելով՝ լոյս դառնանք հեթանոսներուն եւ փրկութեան պատճառ բոլոր հաւատացելոց համար:

Արդարեւ, իւրաքանչիւրս մեզի վստահուած ծառայութեան դաշտին մէջ բոլորանուէր կեանքով անսահման պարտականութիւններով ենք ծանրաբեռնուած եւ ի մասնաւորի՝ նոր ժամանակներուն պատճառած մարտահրաւերներուն առջեւ: Անշուշտ եկեղեցին ունի իր ուղեգծած ճանապարհը իր կանոններով, եւ սակայն հովիւը պարտ է իւրովի հովուական լուծումներ տալու մասնաւոր պարագաներուն, որոնք մեր առջեւ կը դրուին եւ կը պահանջեն վայրկեանի լուծումներ: Որպէսզի մենք յաջողինք մեր հոգեւոր առաքելութեան մէջ, ապա անհրաժեշտ է, որ մշտապէս աշակերտ մնանք, ուսանինք

յարաժամօրէն եւ անդադրում աղօթքով լուսաւորենք մեր անհատականութիւնը:

«Եղի գրեզ ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ ի փրկութիւն, մինչեւ ի ծագս աշխարհի (երկրի)»:

Միրելի հոգեւոր եղբայրներ, Արեւմտեան թեմի մէջ, նկատի ունենալով մեր հաւատացելոց մեծ թիւը, մեր փոքր ածուն, քահանան պէտք է իր առաւելագոյնը ի կատար ածէ: Հոգեւորականներու ներքին միաբանութիւնը մեր մէջ կը գոյացնէ անչափելի զօրութիւն: Անցնող գրեթէ երկու տասնամեակներուն մեր հոգեւորականաց ընդհանուր ժողովներուն ընթացքին մենք քանիցս ենք շեշտած այս մտածումը, որ միմեանց հանդէպ դրսեւորենք հոգածու վերաբերմունք եւ հովուական ծառայութեան մէջ միմեանց նկատմամբ ցուցաբերենք զօրակցութիւն: Բոլորս անխտիր մեր առօրեայ կեանքին մէջ բազում փորձութիւններու առջեւ կը կանգնինք: Բոլորին կը յաղթենք, երբ մեր հաւատքը կեանքի կը կոչենք գործնապէս կեդրոնացած ըլլալով մեր հոգեւոր առաքելութեան վրայ եւ ի մասնաւորի իրար նկատմամբ ցուցաբերած յարգանքով ու սիրով:

Մեր սրտագին բարեմաղթութիւնները անգամ մ'եւս բոլորիդ Ս. Ղեւոնդեանց քահանայից Տօնի առիթով: Թող Աստուած մշտապէս օրինէ բոլորս եւ զօրացնէ մեզ մեր քահանայական կոչմանը մէջ ի փառս մեր Ս. Եկեղեցւոյ:

Փետրուար 18, 2020

ԿՈՄԻՏԱՍԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ

Կոմիտաս Վարդապետը մեր ժողովրդի եւ եկեղեցւոյ անհասանելի բարձունքն է, որուն ստեղծագործական կեանքին մէջ կարելի է տեսնել պատկերն ու ճանապարհորդութիւնը Հայոց երկնականարի տակ ապրած կեանք մը ժողովուրդի եւ եկեղեցւոյ պատմութեան: Իր ապրած օրերէն միշտ այսօր անթիւ հրապարակումներով արժեւորուած է Կոմիտաս Վարդապետը՝ Հայոց Եկեղեցւոյ անբասիր, տեսլապաշտ ու երաժշտագէտ հայ հոգեւորականը: Եւ անոր ստեղծագործական կեանքի մէջ իր առանձնայատուկ տեղը կը գրաւէ մեր Սուրբ Պատարագը: Ի զուր չէ նաեւ, որ հոգելոյս Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանը (նախկին առաջնորդերէն Արեւմտեան եւ Արեւելեան թեմերու) երբ կը խօսի Կոմիտաս Վարդապետի մասին, որպէս հմուտ կոմիտասագէտ հետեւեալ կերպ կը սահմանէ Հայ Երգի Վեհափառը՝ *«Կոմիտասի հանճարը իր Պատարագին մէջ»*: Նոյն այս վերտառութեամբ հանգուցեալ Պատրիարքի գրչին կը պատկանի աշխատութիւն մը, ուր մանրակրկիտ կերպով կը վերլուծէ Կոմիտաս Վարդապետի հոգեծին Պատարագին ստեղծագործութիւնը:

Արդ, մենք միայն համեստ փորձ մը պիտի կատարենք՝ բոլորի մօտ արթնցնելու համար սէր ու հետաքրքրութիւն Կոմիտաս Վարդապետի անձին ու Ս. Պատարագին հանդէպ, միայն այն գիտակցութեամբ, որ ժողովուրդներու կեանքը կ'ամրագրուի ու վաւերական կը դառնայ, երբ հաղորդակցութեան մէջ ենք անոր հերոսներուն եւ հանճարներուն հետ:

Կոմիտասեան Ս. Պատարագի մասին գրեթէ անկարելի է համապարփակօրէն խօսել միայն մէկ ներկայացման մէջ: Նիւթն այնքան ծաւալուն է, որ դասախօսական շարք է անհրաժեշտ լիարժէք կերպով գնահատական տալու համար Կոմիտասեան Պատարագին: Կոմիտասեան Պատարագի ծիրէն ներս կան բազում շերտեր, որոնք իրենց հերթին առանձնայատուկ ուսումնասիրութիւններու կը կարօտին: Մեր այս խօսքին մէջ որոշակիօրէն կ'ուզենք շեշտը հաստատել այն գլխաւոր մտածումին վրայ, թէ ինչպէս Կոմիտաս Վարդապետը գերազանցօրէն ձեռք է բերած ներդաշնակութիւն Ս. Պատարագի խորհուրդին՝ իր բառերուն մէջէն մեզի հաղորդած, մտքին ու հոգիին յատուկ դաշնաւորումով մը:

Մենք կրնանք հաստատակամօրէն ընդգծել, որ Հայ Երգի Վեհափառը գերազանցած է ինքզինք, որովհետեւ լիապէս ըմբռնած է Ս. Պատարագի խորհուրդը՝ այնտեղ տեսնելով Աստուծոյ խոնարհումը Քրիստոսի մարդեղութեան խորհուրդովը: Ան որոշապէս եւ լիակատար կերպով հասկցած է Ս. Պատարագի խորհուրդին մէջ պարուրուած աստուածաբանութիւնը եւ իր ստեղծագործութեան տեսլականով որոնած է եւ գտած ուղին՝ հայ հաւատացեալը բարձրացնելու առ Աստուած:

Ս. Պատարագը իբրեւ խորհուրդ եւ պաշտամունք ներկայացնելով իր չորս բաժանումներով.-

1. Պատրաստութիւն,
2. Ճաշու պաշտօն,
3. Զոհագործութիւն եւ
4. Վերջին օրհնութիւն եւ արձակում

Կոմիտաս Վարդապետը երաժշտագիտութեան իր հանճարով կ'ապահովագրէ բոլորի մասնակցութիւնը՝ քահանային, սարկաւագներուն ու ժողովուրդին, մասնայատուկ մեկնաբանութեամբ: Իւրաքանչիւր մաս իրեն

յատուկ երաժշտականութեամբ մեզ կ'առաջնորդէ դէպի «խորհուրդ խորին»ը: Այսպէս, երբ խօսքը կը վերաբերի Ս. Պատարագի առաջին մասին՝ Պատրաստութեան, իրօք Կոմիտաս Վարդապետի յօրինումները կը պարտաւորեցնեն բոլորս ունենալու խոկումի առանձնակի պահ մը, լարելու մեր միտքն ու հոգին հոգեւորապէս ու մտաւորապէս ընդառաջ երթալու Ս. Խորանի առաջ: Մեղեդիներն ու շարականները կարծէք հարիւրապատիկ իմաստով կը ներշնչեն մեզ զգալու Ս. Պատարագի խորհուրդին ահաւորութիւնը եւ յանձնատու ըլլալու Աստուծոյ ձեռքերուն մէջ: Այս պահը իրօք տրամադրող է, եւ ով մասնակից է Ս. Պատարագին իր սկզբնաւորութենէն, անտարակոյս կ'ունենայ վերացումի պահը, ինքզինք նախապատրաստելով ճաշու պաշտօնին, որ միտքի ու հոգիի լուսաւորութեան պահն է քրիստոնեայ հաւատացեալին համար: Բայց նախ քան երկրորդ մասին մեր տալիք պարզ բացատրութիւնները կ'ուզենք մէկ կամ երկու օրինակներով բացայայտել մեր զգացողութիւնը, հասկնալով հանդերձ, որ միշտ չէ, որ բառերը բաւարար են լիիրաւ մեկնաբանութիւններով փոխանցելու մեր ճշգրիտ եւ ամբողջական պատգամը խորհուրդին, որ առաւելաբար երգով կ'արտայայտուի:

ՊԱՏՏԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. Պատարագին առաջին մասը, որ վերնագրուած է Պատրաստութիւն, Կոմիտաս Վարդապետը այնքա՛ն իմաստաւորեալ կերպով է դաշնաւորած, որ ակամայ հաւատացեալը մոտք կը գործէ «խորհուրդ խորին»էն ներս իր մէջ եւ իր հոգեւոր ներաշխարհին մէջ կը սկսի անբացատրելի ճանապարհորդութիւն մը, որուն ամբողջ ընթացքը կ'ըլլայ ինքնալուացում, զոյում, պատ-

րաստութիւն, որպէսզի իւրաքանչիւրիս մտքի ու հոգիին պատրաստութեան վրայ գծագրուի Աստուծոյ պատկերը եւ նոյնին մէջ տեսնելու մեր էութեան խորքը: Մեղեդիին հաղորդած յուզական երաժշտականութիւնը զգալու համար կ'արժէ հատուած մը ունկնդրել Կոմիտասեան երաժշտութենէն:

Այս բոլորը այնքան դրամատիկ են, որ հաւատացեալը անտարակոյս կը ներկայացնէ անքակտելիօրէն ներդաշնակուած Ս. Պատարագի բառերուն եւ երաժշտութեան մէջ եւ ինքզինք կը տրամադրէ Ս. Պատարագի երկրորդ մասին, որն է «Ճաշու պաշտօնը»:

ՃԱՇՈՒ ԺԱՄ ԿԱՄ ՊԱՇՏՈՆ

Կոմիտասեան Պատարագի երկրորդ մասը, որ Ճաշու Ժամն է, իր բովանդակութեամբ ունի ուսուցողական բնոյթ: Կոմիտաս Վարդապետ այնքան ներդաշնակօրէն է համակարգած «Սուրբ Աստուած»-էն մինչեւ «Մարմին Տէրունական» շարականի երգեցողութիւնը, որ մասնակիցները բոլորն ալ իրար հետ երկխօսութեան մէջ ըլլալով կ'ընդունին կամ կը յայտարարեն Եկեղեցւոյ դաւանանքն ու անոր հիմքը հանդիսացող «Հաւատամք»-ը:

Եթէ ուշի ուշով հետեւենք արարողական կարգին ու կոմիտասեան երգեցողութեան, այլ խօսքով՝ երաժշտական մեկնաբանութեան, ապա այն ժամանակ կը զգանք եւ կ'ապրինք իմաստը Ս. Պատարագի երկրորդ մասին, որ հոգեւոյս Թորգոմ Պատրիարքի սահմանումով. *«ընտանիքն է, որ կը հաւաքուի միասին կարդալու Աստուծոյ խօսքը, մտիկ ընելու Աստուծոյ խօսքին»*: Եւ իրօք, Կոմիտաս Վարդապետ այնքան հմտութեամբ է ներդաշնակած Ս. Պատարագի երաժշտական իր յօրի-

նումները, որ Ս. Պատարագի հետևողն ու մասնակիցը լիարժեք կերպով կ'ապրի անոր խորհուրդը. «Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք» (Մեր անձերը եւ մենք իրար, միասին, Տիրոջ յանձնենք մենք մեզ: Անոր ուժին, Անոր ողորմութեան, Անոր գթութեան):

Յիրաւի, երբ Ս. Պատարագի երգեցողութիւնը կը կատարուի կատարելապէս, յարգելով Կոմիտաս Վարդապետի յորինումը, այն ժամանակ կը զգանք, որ երաժշտական բոլոր ելեւէջումները համապատասխան են բառերու իմաստին հետ:

ԶՈՀԱԳՈՐԾՈՒՄ

Պատարագի երրորդ մասը՝ վերնագրուած Զոհագործում, վստահաբար իր մէջ կը պարունակէ խորհուրդին սիրտը, թէեւ մնացեալ մասերը նոյնպէս կարելոր են, որովհետեւ միասնաբար ամբողջութիւն մը կը կազմեն: Այստեղ եւս Կոմիտասեան դաշնաւորումը այնքան նուրբ է իր յորինուածքով, որ ակամայ կը զգանք վերացում: Իր նկարագրականին մէջ Թորգոմ Պատրիարք երբ կը խօսի «Մարմին Տէրունական» շարականի մասին, հետեւեալ բառերով կը բնութագրէ. *«Կոմիտասեան դաշնաւորման ալիքաւոր վերելքը եւ վայրէջքը իր ճարտարապետական նուրբ եւ ներդաշնակ կառոյցով միայն կարող է հոգեկան վայելումին ու պաշտամունքին ծառայել»*: Քիչ յետոյ, երբ պահը կու գայ, որ եկեղեցիէն պատգամ ստանան սարկաւազէն *«Ողջոյն տո՛ւք միմեանց»* յայտարարութեամբ, եկեղեցին իր հաւատացեալներով բարձրաձայն, տօնական տրամադրութեամբ կ'երգէ *«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»* շարականը, որն անտարակոյս աղօթող հոգիները ի մի կը բերէ եւ

Չոհագործութեան խորհուրդին մասնակիցները կ'ապրին ուրախութեան գերագոյն պահը, որովհետեւ անտարակոյս, պայծառակերպուած են:

Իրօք, Կոմիտասի յօրինումը բացատրութեան ու մեկնաբանութեան անհրաժեշտութիւն չունի: Բոլորովին տարբեր հարց է, երբ մասնագիտական բացատրութիւններով վեր կը հանուի Կոմիտաս Վարդապետի հանճարը, որպէս հմուտ երաժշտագետ, որ ներթափանցեց մինչեւ ակունքները մեր հոգեւոր ու աշխարհիկ երգերուն եւ անոնց մէջէն դուրս բերաւ այն, ինչ որ հարազատօրէն ծնունդ է մեր նախնեաց հոգեւոր ժառանգութեան:

Մենք պիտի ուզեինք հաստատում մը կատարել եւ ըսել, որ Կոմիտասեան Սուրբ Պատարագի մէջ մենք կը տեսնենք փրկագործութեան խորհուրդին ճշմարիտ եւ ամբողջական, ամենաբովանդակալից եւ ներդաշնակ երաժշտական յօրինուածքը: Ան իր Պատարագին որպէս հիմք է ընտրած 1874 թուականին Վաղարշապատի մէջ հայկական ձայնագրութեամբ տպագրուած եւ Նիկողայոս Թաճեանի ջանքերով խմբագրուած պատարագներու մէջէն քաղուած Պատարագի եղանակները, որոնք առաւել բիրեղացնելով՝ իր զգացողութեան տեսիլքի պրիսմակէն դիտուած դիտարկումներով ստացած են իւրօրինակ արտայայտչականութիւն: Որոշապէս ան բացառիկ կարողականութեամբ ըմբռնած է էութիւնը աստուածային սիրոյ բացայայտումին, Քրիստոսի փրկագործութեան խորհուրդին եւ իր հոգեւոր ճարտարապետութեամբ ձգտումն ու տեսիլքն է ունեցած մարդուն սիրտն ու հոգին բանալու դէպի Աստուած, դէպի Աստուածորդու զոհագործումը եւ այնտեղ հաստատելու մարդը իր կեանքով:

Այսպէս օրինակ՝ երբ կը լսենք «Սուրբ, Սուրբ»-ը, ի տարբերութիւն Եկմալեանի «Սուրբ, Սուրբ»-ին, «Ան կը սկսի բարձունքէն, հրեշտակներու «նուրբ հիացումով»: Կարծէք իր յօրինումը կը մեկնաբանէ մարդեղութեան խրհուրդին աստուածաբանութիւնը, թէ ինչպէս Աստուած խոնարհեցաւ երկինքէն երկիր, որպէսզի մարդը «ովսաննա՛»-ներ երգելով բարձրանայ առ Երկնաւորը:

«Սուրբ, Սուրբ»-էն մինչեւ «Հայր մեր» Կոմիտասեան Պատարագի բոլոր մասերը մեծ ամբողջութիւն մը կը կազմեն, եւ էական է, որ Ս. Պատարագի մասնակից հաւատացեալը ի ձեռին ունենալով Պատարագի բնագիրը՝ խորքը թափանցէ բառերուն, որպէսզի նոյնժամայն հասկնայ եւ ապրի ոչ միայն իմաստը խորհուրդին, այլեւ՝ տրուած շեշտադրումներով բառերուն ու երաժշտութեան հետ միախառնուած ներդաշնակութիւնը: Բոլոր հատուածներուն մէջ կը տեսնենք խորհրդաւորութիւն, վերելք, որ յարաճուն կերպով ամբողջութիւն մը կը կազմեն: Անտարակոյս, Կոմիտաս վարդապետը, որպէս հոգեւորական, լիարժէք կերպով ընկալած էր Ս. Պատարագի խորհուրդը եւ երանի թէ յարգուէր երաժշտական ստեղծագործութիւնը, եւ այն ժամանակ պիտի զգանք, որ Կոմիտասեան Ս. Պատարագը անկրկնելի ստեղծագործութիւն մըն է ու յիշուի սրբութիւն սրբոցը մեր եկեղեցական աւանդութեան մէջ:

Մեր այս ներկայացումը միայն համեստ զեկուցում մըն է եւ շատ հեռու նեղ մասնագիտական մեկնաբանութիւններէն: Մեր շեշտը առաւելապէս դրած ենք այն հիմնական կէտին վրայ, թէ ինչպէս Կոմիտաս Վարդապետ կրցած է բառերուն հարիւրապատիկ երանգ տալ իր ստեղծագործական տաղանդով:

«Հայր Մեր»-ի երգեցողութենէն յետոյ մեզի ներկայացող շարականներն ու եռակողմ երգեցողութիւնները

քահանային, սարկաւագին ու երգչախումբին (ժողովուրդին) միջեւ անքակտելիօրէն կապուած են միմեանց: Այստեղ հատորներ կարելի է գրել Ս. Պատարագին մասին՝ առանձին-առանձին քննելով բոլոր կողմերու երգած շարականները: Յոյս ունինք, որ Կոմիտաս Վարդապետին նուիրուած ելոյթները առիթ կը դառնան, որ յետ այսու իւրովի լսողականութեամբ ըմբռնինք Ս. Պատարագի երգեցողութիւնները:

Մեր Ս. Եկեղեցոյ ամենաթանկ գանձն է Կոմիտասեան Ս. Պատարագը, որովհետեւ Քրիստոսի ներկայութիւնը կ'ապրինք մեր ոչ միայն իմացականութեամբ, բայց մանաւանդ ներքին զգացողութեամբ մը: Այստեղ մենք կը զգանք, որ աղօթող հաւատացեալը անընդհատ կ'առաջնորդուի դէպի Ս. Խորան՝ ստանալու համար Ս. Հաղորդութիւնը՝ «Օրհնեալ է Աստուած» շարականի երգեցողութեամբ մը, այն գերագոյն պահուն, երբ Քրիստոսի Անձին հետ կը դառնանք մէկ ամբողջութիւնը մը: Գէթ մեր ամբողջ կեանքին ընթացքին Ս. Պատարագի երգեցողութեանց մասնակցութեամբ այնպէս զգացինք, որ Ս. Պատարագի մատուցմամբ քայլ մը աւելի ենք մօտեցած Աստուծոյ, բայց դեռ երկար ճանապարհ մը ընթացքին մէջ ենք:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ս. Պատարագի վերջին մասը կը յատկաշնուի գոհաբանութեամբ, որ խտացած է յատկապէս «Լցաք ի բարութեանց» եւ «Գոհանամք զքէն, Տէ՛ր» շարականներու երգեցողութեամբ: Կոմիտաս Վարդապետը այնպիսի յօրինուածքով է ստեղծագործած այստեղ իր տեսիլքը, որ իրօք Ս. Պատարագին մասնակից հաւատացեալը կ'ուզէ արտայայտել իր ներքին գոհաբանական զգա-

ցումները՝ հոգեւորապէս ըմբռնանաձ ըլլալով «խորհուրդ խորին»-ին ընձեռնաձ ոգեշնչող պատգամը՝ նոր կեանքն ի Քրիստոս, ինչ որ Առաքեալը կը պատգամէ. «Զի ինձ կեանք Քրիստոս է»:

Մեր այս համեստ ներկայացումով կ'ուզենք հրաւեր մը յղել բոլորիդ, որ յետ այսու առաւել խոնարհումով հետեւինք Կոմիտասեան Ս. Պատարագին: Մերունդներ են պէտք՝ ըմբռնելու համար Կոմիտաս Վարդապետի հանճարը: Մեզմէ իւրաքանչիւրը յաւերժ խոնարհաձ պիտի մնայ Կոմիտաս Վարդապետի վաստակի առջեւ: Ս. Պատարագի խորհուրդին գիտակից անձը, որ դոյզն իսկ չափով գիտակ է նաեւ երաժշտութեան տաղանդին, այն ժամանակ ինչ-որ չափով մը միայն պիտի անդրադառնայ նաեւ այն գերագոյն ճշմարտութեան, որ Կոմիտաս Վարդապետը կրցաւ խորացնել բիւրեղութիւնը, պահպանել այն հոգեւոր ժառանգութիւնը, որ իր մէջ կ'ընդգրկէ քրիստոնէութիւնը ապրաձ ժողովրդի կեանքը:

Մարտ 27, 2019

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

Քրիստոնեական եկեղեցւոյ կեանքին մէջ Աւագ Շաբաթը, իրօք, ամէնէն խորհրդաւոր շրջանն է հաւատքի կեանքը սնուցանելու տեսանկիւնէն դիտուած: Հայ եկեղեցւոյ տօնացոյցը աւելիով ճոխացուցած է Աւագ Շաբաթը Աստուածաշնչական ընթերցումներով, հրաշալի աղօթքներով ու շարականներով, որոնց խորքը թափանցելով ճշմարտապէս կը դառնանք Նոր մարդ:

ԱԻԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Աւագ Շաբթուան մուտքը Ծաղկազարդն է, որ ինքն ամբողջութիւն մը կը ներկայացնէ իր խորհուրդով: Այստեղ կ'ուզենք, սակայն, կեդրոնանալ Ծաղկազարդի յաջորդ Աւագ Շաբթուան օրերուն, առանց մանրամասնելու իւրաքանչիւր օրուայ ընթերցումներն ու աղօթքները, շարականներն ու մասնաւոր արարողութիւնները, որոնց բացատրութիւնները իրօք հատորներ կը պահանջեն:

Աւագ Երկուշաբթին, օրուայ ընթերցումներով ու աղօթքներով մեզ հիմնականօրէն կը պատմէ ստեղծագործութեան խորհուրդը՝ տիեզերքի եւ մարդու ստեղծագործութիւնը, մինչեւ մարդուն անկումը, որն էլ ճանապարհ հարթեց Քրիստոսի մարդեղութեան: Իրօք արժէ, որ քրիստոնեայ հաւատացեալը ունենայ անդրադարձումի պահը եւ գիտակից դառնայ այն ճշմարտութեան, թէ Աստուած ինչպիսի գեղեցիկ աշխարհ մը պարգեւեց մարդուն իր վայելքին համար: Եւ մենք պարտ ենք պահպանել այն աղօթքով ու հաւատքով, քրիստոնեական կեանքի ընթացքով եւ հազար փառք վերառաքելով առ

Աստուած, որ Աստուածորդու աշխարհ գալովը մեր առջեւ բացուեցաւ վերասին կենդանութեան ճանապարհը:

Օրուայ Աւետարանական ընթերցումներով մեզի կը տրուի երկու հիմնական պատգամ. առաջինը հաւատքի մասին տրուած պատգամն է, որ կը հրամցուի չորցած թզենու պատմութեամբ, որ տեղի կ'ունենայ Ծաղկազարդի յաջորդ օրն իսկ: Չորցած թզենիին պատմութիւնը մեզի կը հրաւիրէ ապրելու հաւատքի կեանքով, ինչպէս Քրիստոս կը թելադրէ իր առաքեալներուն: Շնորհք Պատրիարք երբ կը խօսի հաւատքի մասին, գեղեցիկ խորհրդածութիւն մը կը կատարէ. *«Անհաւատ մարդ չկայ: Ամենքս ալ օժտուած ենք հաւատալու կարողութեամբ: Կան միայն հաւատալու կարողութիւնը չգործածող մարդեր, բթացած հաւատքներ, խաթարուած ու խանգարուած հաւատքներ, սխալ գործող հաւատքներ, ժխտական հաւատքներ, վերջապէս՝ այլասերուած հաւատքներ»:*

Իսկ հաւատքին հրաշագործ զօրութիւնը կ'իրականանայ աղօթքով, որուն համար Քրիստոս իր աշակերտներուն սորվեցուց աղօթել Իր անձին օրինակովը, որովհետեւ *«առանց հաւատքի աղօթքը կը նմանի կանթեղի մը, որուն մէջ պատրաստ են ձէթը եւ պատրոյզը, բայց վառած չէ»:*

Աւագ երկուշաբթիին կը պատկանի նաեւ Տաճարի մաքրագործութեան պատմութիւնը: Դեռեւս մեր մանկութեան տարիներէն խորապէս տպաւորուած ենք այս պատմութեամբ եւ այն նոյնը ներկայացնող պատկերներով, թէ ինչպէս Քրիստոս կը մաքրագործէ տաճարը՝ խաբազանելով այն մարդիկ, ովքեր աղօթքի տունը վերածած էին վաճառատան: Իր խօսքն այնքան դիպուկ է, որ կը վերաբերի բոլորիս, որովհետեւ իւրաքանչիւրին կեանքը կը ներկայացնէ «Տաճար Աստուծոյ»:

«Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն համար, իսկ Դուք այն վերածեր էք աւագակներու որջի»:

«Քրիստոնէական եկեղեցին, որ ինքզինք կը նկատէ Քրիստոսի գործին շարունակողը, եթէ չնետուի «տաճարները» մաքրագործելու պայքարին մէջ, Յիսուսի խիզախութեամբ ու Անոր կորովով, երբէք պիտի չնկատուի արժանաւոր շարունակողը Յիսուսի առաքելութեան»:

Արդ, արժեւորենք Աւագ Երկուշաբթին՝ սնունդ տալով մեր հաւատքին ու մեր մարմինները դարձնելով Տաճար Աստուծոյ, տուն աղօթքի:

ԱԻԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Աւագ Երեքշաբթիի աղօթքները, ընթերցումներն ու շարականները մեզ կը յիշեցնեն ստեղծագործութեան պատմութեան մէջ մարդու անկումի մասին, ջրհեղեղով վերսկսած կեանքի մասին եւ վերջապէս Քրիստոսի Մարդեղութեան խորհուրդին մասին:

Հիմնական շեշտը կը տեսնենք Քրիստոսով մեզի տրուած հրաւերին վրայ: «Քրիստոս ալ սարքած է «հարսանիք» մը եւ հրաւիրած է մարդկութիւնը ներկայ լինելու այդ հարսանեաց սեղանին, այսինքն մաս կազմելու քրիստոնէական եկեղեցիին: Սակայն այստեղ ալ անհրաժեշտ է լրացնել ինչ-ինչ պայմաններ»: Օրուայ Աւետարանական ընթերցումները, փաստօրէն, պայմաններ են, որոնց դժուար է մէկ առ մէկ անդրադառնալ: Գէթ մէկը բաւական կը համարենք մէջբերել այստեղ եւ մնացեալը կը թողունք ընթերցողի յարմարութեանը: «Լսէ՛ Իսրայէլ, քո Տէր Աստուածդ մէկ Տէր է. պիտի սիրես Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ մտքովդ եւ ամբողջ

գորութեամբդ. Այս է առաջին պատուիրանը: Երկրորդն ալ ասոր նման է. պիտի սիրես ընկերդ անձիդ պէս» (2. Օրէնք, 6:5, 11:1, Ղեւտ. 19:19):

Օրուան Աւետարանական շարքին է «Տասը կուսանաց» առակը, որուն հիմնական պատգամն այն է, որ մեր էութիւնն ամբողջ, որպէս կանթեղ, լեցուն ըլլայ ձէթով, հաւատքով ու սիրով, որպէսզի լոյս տանք եւ պատրաստ ըլլանք դիմաւորելու փեսան՝ Քրիստոս:

Տրուած պատգամներու շարքին է նաեւ քանքարներու առակը, որում մէջ այնքան խորք կայ եւ այն կարելի է մանրամասնօրէն բացատրել ու մեկնաբանել: Բայց կ'ուզենք բաւարարուել մէկ կամ երկու կարեւոր մտածումներ բաժնելով ընթերցողին հետ:

Ա. «Առակը պատմում է ոչ այնքան գովելու եւ գնահատելու իրենց տրուած տաղանդները շահագործողները, որքան՝ դատապարտելու չշահագործողները»:

Բ. «Տաղանդները թէեւ հաւասար չեն, բայց հաւասար են պատեհութիւնները»:

Արդ, խորհրդածենք կեանքի մասին, որպէս հրաւեր Աստուծմէ մասնակցելու համար սարքուած հարսանիքին եւ գիտակից դառնանք մեզի տրուած նուէրներու մասին, թէ ինչ ձեւով պիտի շահագործենք անոնք:

ԱՒԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Այսօր շարականներն ու Աւետարանը մեզի կը խօսին հիմնականօրէն երկու գլխաւոր նիւթերու մասին. Մէկը՝ Մարդեղութիւնն Քրիստոսի եւ միւրը՝ դաւադրութիւնը Յիսուսի դէմ: Մարդեղութեան խորհուրդը բացատրող շարական է՝

«Դուն, որ Հօր հետ փառքի աթոռ բազմաթ էիր,
Ո՛վ անսկզբնակից Բանդ Աստուծոյ,

Այսօր հողեղէններու հետ բազմիլ յանձն առեր:
Քու ծառայական կերպարանքդ օծուած էր արդէն
Անճառելի Աստուածութեամբ
Այսօր մեղաւորներու իւղով ալ հաճեցար օծուելու»:

Յիսուսի դէմ դաւադրութիւնը նկարագրող շարական.

«Այսօր մարդոց որդիները հաւաքուած՝
Կը խորհին մահուան մատնել Աստուծոյ Որդին:
Այսօր արծաթով Քեզ կը վաճառեն,
Քեզ, որ ստեղծիչն են բոլոր հարստութեանց:
Այսօր ահաւոր նոր բան մը կը նշմարենք
Աշխարհի վրայ, հողեղէններու մէջ
Արարածները Արարիչը սպաննել կ'ուզեն»:

Աւագ Չորեքշաբթին իր ամբողջ խորհուրդով մեզ
մօտ կը պահէ Քրիստոսին, եւ առաւել խորապէս ըմբռ-
նելու իմաստը Մարդեղութեան խորհուրդին, թէ ինչ-
պէս Աստուածորդին երկինքէն երկիր իջաւ մարդկանց
բերելու համար հոգիները փրկող աստուածային լոյսը:
Նոյն մարդը, սակայն, խաչը բարձրացուց Աստուածոր-
դին, քանզի իր մէջ ունեցաւ տկարութիւն ու Աստուծմէ
հեռու մնացած ըլլալու հանգամանքը:

Սա է պատկերը մեր կեանքին, կը լսենք, բայց կը
մոռնանք: Բայց երբ աղօթքի մէջ ենք, անգամ մ'եւս կը
հրաշագործենք մեր կեանքը:

ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Աւագ Հինգշաբթին ինքնին Աւետարանի մէջ խտա-
ցեալ Աւետարան մըն է: Աւագ Հինգշաբթին կը կարեւո-
րուի եկեղեցւոյ կեանքին մէջ երեք գլխաւոր ու ապրող

պատգամներով. Վերջին ընթրիք, Ուտնլուայ եւ Վերջին կտակ: Եկեղեցական արարողութիւնները այնքա՛ն հոգեպարար են եւ՝ իրենց շարականներու հաղորդած յուզականութեամբ, եւ՝ ընթերցումներով ու մանաւանդ անոնց բոլորին մէջէն մեզի հասնող աստուածային լոյսին առատացումովը:

Վերջին ընթրիք - Ահաւասիկ այստեղ է, որ կը հաստատուի ս. պատարագին խորհուրդը, որուն հաղորդակցութեան կը հրաւիրէ նաեւ Քրիստոս իր առաքեալները: Այս պահուն է, որ Յուդան մտայղացքը կ'ունենար մատնութեան: Բայց չմոռնանք նաեւ այն հանգամանքը, որ առաքեալները դժուար թէ կ'ըմբռնէին իրենց հաղորդուած պատկերին խորքն ու խորհուրդը, ինչպէս այսօր շատ անգամներ զաւակներ օրին չեն ըմբռնէր տրուած պատգամներու կարեւորութիւնը:

Քրիստոս վերջին ընթրեաց արարքին մէջ կ'ամփոփէր փրկական խորհուրդը, որ իր անձին գոհագործութեամբ ու պատարագումովը մարդկութիւնը կ'առաջնորդէր հոգիներու փրկութեան: Եւ մեզի տրուած կեանքն ալ պարտ ենք ապրիլ գոհողութեան խորհուրդով:

Ուտնլուայ - Այս պատկերը ցնցող է: Բոլորիս համար ալ յստակ է, որ գլխաւոր դասը, որ կը քաղենք մեզի տրուած պատգամէն՝ խոնարհութիւնն է: Ինչ որ շատ հետաքրքիր է մեզի համար, այն է, որ Քրիստոսէ առաջ այս ուտնլուայի արարքը կը կատարէին գերիները որպէս պատժամիջոց: Քրիստոս, փաստօրէն, իր վրայ վերցուց գերիներու տառապանքը եւ անոր տուաւ նոր իմաստ մը, եւ այն էլ խոնարհութեան դասն է: Անհրաժեշտ չէ յաւելեալ բացատրութիւն տալ այս պատկերին: Այն պարզապէս պէտք է ապրիլ: Ուտնլուայի արարո-

դութեանը մէջ կարելի է ամփոփել բազում խորհուրդներ: Յատկանշական կը համարենք Շնորհք Պատրիարքի հետեւեալ մտածումը, որ մեզի կը ներկայացնէ որպէս եզրակացութիւն Ոտնլուայի արարողութեան ընդմէջէն մեզի տրուած դասին. «Քրիստոնէայ ըլլալ կը նշանակէ խոնարհ ըլլալ... իսկ խոնարհութիւնը՝ ինքնաճանաչումն է»:

Վերջին կտակ - Քրիստոսի Աւետարանը իր ամբողջութեանը մէջ անկողոպտելի գանձ ու կտակ է՝ տրուած մարդկութեան: Յովհաննէս Աւետարանիչ իր գրչով արձանագրած է պատգամներ, որոնք Վարդապետը արտասանած է որպէս բալասան մարդկանց վիրաւոր հոգիներին համար.

«Նոր պատուիրան մը կուտամ ձեզի, որ սիրէք զիրար: Դուք պարտիք սիրել զիրար այնպէս, ինչպէս ես ձեզ սիրեցի: Ասով պիտի ճանչնան մարդիկ, թէ իմ աշակերտներն էք, եթէ սիրէք զիրար» (Յովհ. 13:33-35):

Երանի՛ թէ աշխարհի մարդիկ Քրիստոսի այս ոսկի պատուիրանի խորհուրդով առաջնորդէն իրենց կեանքը: Մարդն այսօր հոգեւոր ծարաւն ունի այս պատգամին: Միքել զիրար կը նշանակէ մէկզմիւսին մէջ տեսնել Աստուծոյ ներկայութիւնը:

ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ

Աւագ Ուրբաթ ամբողջ օրը խաչի ճանապարհն է դէպի Գողգոթա: Չարչարանաց պատկերներու մէջ պատարագուող Վարդապետն է, Աստուածորդին, որ կամաւորապէս յանձն առաւ խաչը բարձրանալ Իր մահուամբ մահը պարտութեան մատնելու համար:

Աւետարաններու ընթերցումը, շարականներու ոգեզմայլ յուզականութիւնը բոլորիս հոգին կը լեցնէ լոյսով:

Հագարումէկ բացատրութիւն կարելի է արձանագրել Աւագ Ուրբաթը ներկայացնելու համար: Թէեւ կարճ, բայց մէկ հաստատումով կարելի է տալ խորհուրդը Աւագ Ուրբաթին: Քրիստոսի խաչելութեամբ կը հաստատուի եկեղեցին: Եւ փաստօրէն նոյն մտածումը կը շարունակուի նաեւ գործնականօրէն քրիստոնէական եկեղեցւոյ մէջ, երբ առաջին դարերու մարտիրոսներ ու նահատակներ կեանքի մէջ իրենց անձերու պատարագումովը հաստատեցին՝ «Արիւն մարտիրոսաց, հիմն եկեղեցւոյ»:

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ ՃՐԱԳԱԼՈՅՑ ԵՒ ԶԱՏԻԿ

Եւ թափուր գերեզմանէն կը ճառագայթէ լոյսը՝ Քրիստոսի Յարութիւնը, աղբիւրը Նոր կեանքին: Երկհագարամեակ մը Քրիստոսի եկեղեցւոյ հաւատացեալներ վերածնած են Քրիստոսի Յարութեան խորհուրդին լոյսին մէջ:

Այս օրերուն, երբ ողջ աշխարհը անտեսանելի թշնամու մարտահրաւերին առաջ է կանգնած, նոյն մարդկութիւնը հորիզոնէն անդին կը տեսնէ նոր արշալոյսը կեանքին ի Քրիստոս, եւ բարձրաձայն կը յայտարարէ.

«Քրիստոս Յարեալ ի մեռելոց,
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

«Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին: Քանզի միշտ մեք, որ կենդանիքս եմք, ի մահ մատնիմք վասն Յիսուսի, զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր»:

(Բ. Կորնթ. 4: 10-12)

Առաքելի այս բառերն իրենց մէջ կ'ամփոփեն խորհուրդը Քրիստոսի փրկագործութեան, քանզի Իր Անձին պատարագումովը մեզի պարգեւեց վերստին կենդանութեան շունչը, կեանքն ապրելու նոր ոճը, որն է Աստուծոյ հետ ճանապարհորդուած կեանքը:

Ուրեմն, այս գիտակցութեամբ մեր մէջ, մեր մարմիններուն մէջ մշտապէս պիտի ապրինք Յիսուսի մահը, որպէսզի մեր մարմիններում մէջ ալ տեսանելի ու շօշափելի դառնայ Յիսուսի կեանքը:

Աւագ Հինգշաբթին Աւագ Շաբթուայ ճանապարհորդութեան առանցքային նշանակութիւն ունեցող օրն է: Օրուայ ամբողջ խորհուրդը կը կենտրոնանայ Քրիստոսի Անձին պատարագումի վրայ: Պէտք է քայլ առ քայլ ապրիլ Քրիստոսի հետ, օրուայ ընթերցումներու, շարականներու ու աղօթքներու առաջնորդութեամբ, որպէսզի Քրիստոսի Անձին հետ դառնանք մէկ միացած Անոր հոգու ամբողջ զօրութեամբ, մեր մէջ զգալու նաեւ Անոր պատարագումը իր ամենալայն առումով մարդկային մեր տկար էութեանը սահմաններուն ներածին չափով, որպէսզի ըմբռնենք խորապէս ճշմարտութիւնը պատարագումին:

Ծնողներ, ձեր կեանքին մէջ խմորուած պատարագումի խորհուրդին աղբիւրը Քրիստոս է, Իր իսկ Անձին պատարագումին օրինակովը: Ուրեմն եթէ Քրիստոս Իր զոհաբերեալ կեանքին պատարագն է աշխարհին ձօնուած, ապա ձեր կեանքն ալ մանրակերտն է Քրիստոսի կեանքին օրինակին:

Հետեւաբար Աւագ Շաբաթուայ տօնակատարութիւններուն մէջ մնալով՝ մեր հոգեւոր կեանքը կ'անցնենք վերանորոգութեան բովին ընդմէջէն: Այլ խօսքով՝ մեր մէջ կը վերաբրնանայ Քրիստոսի կեանքին առաքելութիւնը, մարդեղութեան խորհուրդը՝ մինչեւ հրաշալի Յարութիւնը: Ուրեմն, թող Քրիստոս դարձնենք հայելին մեր կեանքին, որպէսզի կեանքն ապրինք Քրիստոսի նմանակցութեամբ՝ մեր մէջ կրելով Քրիստոսի մահը, եւ ապա մեր մէջ վերապրելով Անոր կեանքը:

Փետրուար, 2020

ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆ

Խաւարման երեկոյին քրիստոնեայ հաւատացեալը իր հոգիին մինչեւ խորքը կը լսէ Քրիստոսի ձայնը, որուն մեջէն մեզի կու գայ դարերու հոլովոյթով անընդհատ կրկնուած «նոր պատուիրանին» խորհուրդը.

«Նոր պատուիրան մը կու տամ ձեզի, որ սիրէք զիրար: Դուք պարտիք սիրել զիրար այնպէս, ինչպէս ես ձեզ սիրեցի: Ասով պիտի ճանչնան մարդիկ, թէ իմ աշակերտներն էք, եթէ սիրէք զիրար» (Յովհ. 13.33-35):

Քրիստոսի այս պատուիրանը ուրիշ բան չէ, եթէ ոչ բոլոր ժամանակներու համար ամենէն անհրաժեշտ հոգեւոր սնունդը, ճշմարիտ խորհուրդը կեանքին, որուն մէջ երբ կը մկրտենք մեր կեանքը, ապա այն ժամանակ կերպարանափոխած ենք տրուած կեանքը դէպի բարին ու գեղեցիկը, դէպի Աստուածընդունելին: Բայց դեռ աւելին կը հաղորդէ մեզի Քրիստոսի այս պատգամը, այն ալ «նոր պատուիրան»-ին ապրող պատկերը Քրիստոս, ինչպէս Ինք կը հաստատէ. «Դուք պարտիք սիրել զիրար, այնպէս՝ ինչպէս ես ձեզ սիրեցի»:

Քրիստոսի մարդեղութիւնը աստուածային սիրոյ արտացոլումն է: Եւ Քրիստոսի պատարագումը խաչին վրայ աստուածային սիրոյ անսահմանելիութիւնն է:

Աւագ հինգշաբթին ճշմարտապէս գագաթնակէտն է Քրիստոսի կեանքի պատարագումի խորհուրդին: Եւ մեզմէ իւրալանջիրին ուղղուած հրաւեր է սա, որպէսզի հետեւինք Քրիստոսի, մեր կեանքն ապրինք Վարդապետին հետ, մեր կեանքով նմանակից ըլլանք Քրիստոսի: Եւ մէկ խօսքով՝ դառնանք մէկ ի Քրիստոս: Որովհետեւ եթէ այս չէ մեր կեանքի ընթացքը, ապա բարոյական իրաւունքը չունինք կոչուելու աշակերտներ Քրիստոսի:

Աւագ Շաբաթը իր ամբողջ խորհուրդով, որուն մէջ է ամփոփուած Քրիստոսի կեանքին ամենէն կարեւոր հանգրուանները, իւրաքանչիւրին կը հրաւիրէ խոնարհութեան, որովհետեւ խոնարհութեան մէջ միայն կրնանք ունենալ ինքնաճանաչումի պահը: Ով խոնարհ է կեանքով, այդպիսին կը տեսնէ իր ներքին աշխարհը եւ անտարակոյս կ'ունենայ քաջութիւնն ու համարձակութիւնը ուղղելու իր անձը, սրբագրելու իր սխալները եւ վերադառնալու դէպի Աստուած:

Աշխարհին այսօր կը տառապի սիրոյ ծարաւէն: Մարդիկ դարձած են գերին նիւթին, նիւթական արժէքներուն եւ բառացիօրէն կը կոխկոտեն հոգեւոր ու բարոյական արժէքները, կ'անարգեն սրբութիւնները, իրենց նիւթական հարստութեան յենած՝ կը դառնան երկրպագուն ժամանակաւորին:

Մարդը կանչուած է յաւիտենականի խորհուրդին առջեւ խոնարհելու: Մարդուն կեանքը պիտի ըլլայ աստուածորոնումի ճանապարհ: Այսօրինակ կեանքը մարդը կը բարձրացնէ առ Աստուած, եւ նոյն մարդը կը դառնայ սիրոյ հոգեւոր գործիք, խաղաղութեան խորհրդանիշ:

Երբեք չվախնանք ու չերկմտենք, երբ մեր կեանքի ճանապարհին խաչը կը կրենք, փորձութեան բովէն կ'անցնինք, որովհետեւ խաչը կրել քրիստոնեային համար կը նշանակէ դոյզն իսկ չափով զգալ ցաւն ու տառապանքը մեր Տիրոջ, որ եւ սիրով վերցուց իր վրայ: Չէ՞ որ ծնողներ եւ սիրով լեցուած մարդիկ եւս խաչը կը կրեն կեանքի մէջ իրենց զաւակաց համար ու հարազատներու ի խնդիր: Քրիստոսի չարչարանաց ու խաչելութեան պատկերին առջեւ մարդուն կրածը աննշմար է:

Խաչը կրել մեր կեանքին մէջ կը նշանակէ սիրով զարդարել մեր կեանքը, Աստուծոյ սէրը ապրիլ եւ այն բաշխել մեր սիրելիներուն հետ եւ անխտիր բոլորին

հետ: Ուրեմն, մեր մեջ կրենք խաչը Քրիստոսի, որպէս
աղբիւրը սիրոյ, այն դարձնելու համար լոյսն աշխարհի.
ամէն:

Ապրիլ 10, 2020

ԱՍՏՈՒԱԾՈՐԴՈՒ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ ԿԵԱՆՔԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Սուրբ Աստուած
Սուրբ եւ հօր,
Սուրբ եւ անմահ,
(որ խաչեցար) որ թաղեցար վասն մեր,
Ողորմեա մեզ...»:

Քրիստոնէական եկեղեցւոյ սուրբ ասանդութիւնը Աւագ շաբթուայ արարողակարգի մէջ յատուկ հանդիսաւորութեամբ կը կատարէ թաղման կարգը, որովհետեւ Քրիստոսի գերեզմանէն կը սպասէ լոյսը՝ Նոր կեանքին: Խոր հաւատքով լեցուած մեր սրտերէն աղօթանուէր մաղթանքներ կը վերառաքենք առ Աստուած՝ փառաւորելով Քրիստոսի խաչելութիւնն ու մեծացուցանելով Անոր սուրբ թաղումը: Աղօթքի մէջ միացած հաւատացեալներու հոգեւոր կեանքին մէջ կը զգանք եւ կը գիտակցինք այն ճշմարտութեան, որ Աստուածորդին երկինքէն երկիր իջնելով Իր կեանքը պատարագեց մարդկանց հոգիներու փրկութեան համար: Եւ երբ կը կարդանք Աւետարանը, ապա այնտեղ մեզի համար յստակ կը դառնայ այն, որ Քրիստոս ամէն քայլափոխի կը քննադատէր հրեայ քահանայապետերը, ովքեր օրէնքը կը յարմարեցնէին իրենց ապրած կեանքին: Իսկ Քրիստոս կը պատգամէր քաջ ու համարձակ, որ Ինք է «լրումն օրինաց»:

Աստուածորդու պատարագեալ կեանքին խորհուրդի առաջ կ'երկպագենք, կը փառաւորենք Անոր խաչելութիւնն ու չարչարանքները եւ կը մեծացուցանենք Անոր

թաղումը՝ երգելով. «Մուրք Աստուած, Մուրք եւ հօր, Մուրք եւ անմահ, (որ խաչեցար) որ թաղեցար վասն մեր, Ողորմեա՛ մեզ...»: Գիտակից ենք, թէ ինչպիսի խորհուրդ մը կ'իրականանար, որով եւ կը յեղաշրջուէր մարդկանց կեանքը, աշխարհի կեանքը: Խորապէս կ'ըմբռնենք ճշմարտութիւնը մարդեղութեան խորհուրդին, եւ ի մասնաւորի Քրիստոսի չարչարանաց ու խաչելութեան: Ինչո՞ւ, որովհետեւ ինչպէս Աստուած սիրեց աշխարհը եւ Իր սիրոյ որպէս արտայայտութիւն աշխարհ զրկեց Իր Միածին Որդին, որ Իր Անձին պատարագումովը մեզ պարգեւեց վերստին կենդանութեան լոյսն ու յոյսը, ահա նոյն հոգին կ'ապրի նաեւ մարդը, որ իր չափերովն ու մարդկային կարողութեան սահմաններուն ներածին չափովը գիտէ իր անձը պատարագել, այլ խօսքով՝ զոհաբերել իր ընտանիքին համար, իր զաւակաց համար, իր ընկերներուն համար: Եւ եթէ մարդը չունենայ այս ոգին ծառայութեան, ապա չունի ձգտումը նմանուելու Քրիստոսի ու Անոր ծառայակերպ կեանքի օրինակին: Բայց մարդը եւ առաւելաբար Քրիստոնեայ մարդը ամէն վայրկեան իր մէջ պիտի առատացնէ պատարագումի խորհուրդը:

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ, Քրիստոսի չարչարանքները, Քրիստոսի ս. խաչելութիւնը եւ ս. թաղումը կը փառաւորենք, քանզի այս բոլորին մէջ կը տեսնենք պատկերը մեր կեանքին: Աւագ Ուրբաթը հայ քրիստոնեայի կեանքին մէջ ունի իւրայատուկ նշանակութիւն, եւ անջնջելի յիշողութիւն կը թողու այս օրը մեր հոգեւոր կեանքի գիտակցութեանը մէջ:

Եւ ինչո՞ւ, որովհետեւ երբ կը նայինք Քրիստոսի չարչարանաց պատկերին, Անոր խաչելութեան խորհուրդին առջեւ խոնարհած՝ յստակօրէն կը տեսնենք չարչարանաց ու խաչելութեան պատկերները մեր

նախնեաց, որոնք հարիւր եւ ասելի տարիներ առաջ ունեցան իրենց կեանքի Գողգոթան Տէր Զօրի անպատին մէջ: Ինչպէս Քրիստոսի գերեզմանը դարձաւ լոյսի աղբիւրը ողջ մարդկութեան, այդպէս ալ մեր անշիքիմ սուրբ Նահատակաց Տէր Զօր անունը կրող անապատը դարձաւ Նոր կեանք արձանագրող «գերեզմանը»՝ գալիք բոլոր սերունդներու համար:

Այսօր՝ Աւագ Ուրբաթ, վերջին հանգրուանին ենք Աւագ շաբաթուայ հոգեւոր ճանապարհորդութեան, եւ Ճրագալոյցի Ս. Պատարագով եկեղեցին պիտի յայտարարէ Քրիստոսի հրաշալի ու յաղթական Յարութիւնը: Բոլորի համար ալ Զատկական այս տօնախմբութիւնը իր տեսակով անսովոր է: Բայց այս տեսակին մէջ գտէք նոր իմաստ մը: Թող մեր բոլորի տուները դարձնենք Յարութեան լոյսով օծուն եկեղեցիներ, որպէսզի աղօթքով ու նորոգեալ հաւատքով տօնախմբենք Յարութիւնը: Չէ՞ որ այս ոգին է, որ մեր տուները կը տանինք Զատկական ս. պատարագէն յետոյ: Մնացէք հոգեւոր հաղորդակցութեան մէջ մեզի հետ եւ Աստուծոյ կամօք, Քրիստոսի ս. Գերեզմանին առջեւ խոնարհումով, հաւատքով զօրացած, վաղը եւ յաւիտեան պիտի տօնախմբենք մեր Տիրոջ հրաշալի Յարութիւնը:

Ապրիլ 10, 2020

ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ

«Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի: Կը հաւատա՞ս ո՞ր ըսածիս»: (Յովհ. 11:25-26)

Մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի՝ Մարթային ուղղուած վերոյիշեալ այս խօսքերով կ'ուզենք սկսիլ մեր զատկական պատգամը, որովհետեւ կը հաւատանք, թէ օրուայ խորհուրդին եւ մեր վերջին ամիսներու տագնապներուն մասին կը խօսի:

Ուրեմն, մտովի փոխադրուինք Բերթանիա, ուր Տիրոջ սիրելի բարեկամը՝ Ղազարոս, արդէն չորս օր մեռած էր: Երբ Յիսուս իր աշակերտներուն հետ հոն հասաւ, Մարթան՝ Ղազարոսին քոյրը այս խօսքերը ըսաւ անոր. «Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ»: (Յովհ. 11:21)

Մարթան, որ կը հաւատար Աստուծոյ եւ մանաւանդ՝ մեռելներու յարութեան, իր եղբոր կորստեան սուգի եւ տրտմութեան պահուն արտասանած խօսքին մէջ թերեւս անգիտակցաբար մեղադրական արտայայտութիւն մը ունեցաւ, որ իր մէջ թերահաւատութեան հնչերանգներ ալ կը պարունակէր: Յիսուս հասկնալով Մարթայի ապրումները հետեւեալ հաստատումը կատարեց. «Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի»: Այնուհետեւ, այս հաստատումը աւելիով ընդգծելու եւ ձեռով մը դիմացի-

նին հոգեւոր մարտահրաւեր նետելու միտումով Յիսուս կը հարցնէ. «Կը հաւատա՞ս ըսածիս»:

Միրելինէ՛ր, այս հարցումը ոչ միայն Մարթային ուղղուած էր այլ նաեւ Յիսուսի աշակերտներուն: Յատկանշական է, որ աշակերտներուն մէջ էր նաեւ Թովմասը, որ Երկուորեակ կը կոչուէր, ինչպէս աւետարանիչը կը վկայէ. նո՛յն Թովմասը, որ թերահաւատօրէն ուզեց մատները դնել խաչեալ Փրկչի ձեռքերու գամերուն տեղերը եւ ձեռքը դպցնել անոր կողին: (Յովհ. 20:25)

- Կը հաւատա՞ս ըսածիս, - Յիսուս կը հարցնէ մեզմէ իւրաքանչիւրին: - Կը հաւատա՞ս, որ Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի:

Այս օրերուն, երբ աներեւոյթ թշնամու՝ Գորոնա ժահրի մարդասպան ճիրաններուն մէջ ողջ աշխարհը տակաւին կը տառապի, շատերս յաճախ հոգեւոր տրտմութենէ մղուած Մարթայի բառերով կ'ըսենք. «Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր՝ ասիկա պիտի չպատահէր մեզի»: Մարդկային է, անշո՛ւշտ, տկարութիւնը, վախը, տագնապը, կասկածամտութիւնը եւ անվստահութիւնը: Աղէտալի պայմաններու տակ, կորստեան վտանգին առջեւ, երբ վերահաս մահը այնքան մօտ կը թուի, մարդ արարածը ինքնակորոյս վիճակին մէջ հոգեկան ցնցում կ'ունենայ. ցնցումը մը, որ մինչեւ անոր էութեան խորքը կը թափանցէ՝ հաւատքի պարիսպները խարխւելու համար: Փոխանակ մեր հաւատքը զօրացնելու, մեր վախերը կը սնուցանենք՝ մոռնալով Տիրոջ անսուտ խոստումը առ այն, որ «միշտ մեզի հետ պիտի ըլլայ, մինչեւ աշխարհիս վախճանը» (Մատթ. 28:20):

Երբ Գորոնա ժահրը վայրագօրէն խուժեց մեր քաղաքները ու տունները, հիմնարկներ, հաստատութիւն-

ներ, դպրոցներ գոցուեցան: Հանրային առողջապահութեան պատասխանատուներ զանազան ցուցումներով փորձեցին կանխել վարակին տարածումը: Մեզի ցուցուեցաւ ինքնամեկուսանալ եւ ուրիշներէ վեց ոտքի չափ ընկերային հեռավորութիւն պահպանել (social distancing): Ժահրի կանխարգելման միջոցառումներու ընթացքին, մինչ ընկերային հեռավորութեան վրայ սեւեռուած էինք, ցաւօք շատերս կորսնցուցինք մեր հոգեւոր մտերմութիւնը Աստուծոյ հետ: Մեծ Պահոց 40օրեայ շրջանը, որ հոգեւոր առանձնացումի շրջան մըն է (spiritual quarantine), շատերուս համար, մեզմէ անկախ պատճառներով, դարձաւ մեր սեփական վախերուն հետ ինքնամեկուսացումի շրջան մը՝ նմանողութեամբ Դանիէլ մարգարէի, որ առիծի որջին մէջ բանտարկուած էր գիշատիչ գազանին հետ միս մինակ: (Դանիէլ 6)

Բորորս կը յիշենք համաճարակի առաջին օրերուն պարենային խանութներու վրայ խուճապային յարձակումները, թէ ինչպէս մարդիկ իրարու հրմշտելով ու կոխկրտելով կը խուժէին խանութները գէթ 2-3 շաբաթի համար առաջին անհրաժեշտութեան ապրանքներ գնելու: Վերջին օրերը յիշեցնող գոյութենական պայքարի ահասարսուտ տեսարանը կարծես Յայտնութեան Գիրքէն ըլլար: Դիմատետրի (Facebook) եւ լրատուական այլ կայքերու միջոցաւ տարածուող, յաճախ՝ ուղղորդուած լուրերը աւելի կը բորբոքէին արդէն իսկ շիկացած իրավիճակը: Յաւ ի սիրտ պէտք է արձանագրենք, որ մեզմէ շատեր փոխանակ «Բարի Լուր»ին (Good Tidings) ապաւինելուն՝ սփռուող կեղծ լուրերուն (fake news) կը հետեւէին:

Մեր տունները եւ պահեստները պայթելու չափ լեցուցինք մոռնալով Տիրոջ խօսքը՝ ուղղուած հարուստ հողագործին. «Անմի՛տ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ

քեզմէ պիտի առնեն. որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ»:
(Ղուկ. 12:16-21)

Յովհաննէս Մկրտիչ կ'աղաղակէր ըսելով՝ «Ապաշխարեցէք, վասն զի երկնքի թագաւորութիւնը մօտեցած է: (Մատթ. 3:2) Յովհաննէսի մատնուելէն յետոյ Յիսուս նոյնը կը քարոզէր ըսելով՝ «Ժամանակը լրացած է եւ Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է. Ապաշխարեցէ՛ք ու աւետարանին հաւատացէ՛ք»: (Մարկոս 1:14) Ան Աստուծոյ արքայութեան Աւետարանը կը քարոզէր եւ ժողովուրդը կը բժշկէր բոլոր ցաւերէն ու հիւանդութիւններէն: (Մատթ. 4:23) Նոյնիսկ այդ բժշկութիւնները եւ աստուածային մեծագոյն հրաշքները տեսնելէն յետոյ մեզմէ շատեր անտարբեր մնացին ու ականջալուր չեղան մեր սուրբերու գոչիւնին՝ հոգեւորապէս պատրաստուելու Տիրոջ երկրորդ գալստեան: Մինչդեռ, լրահոսէն մեզի հասած պզտիկ ականարկ մը պատճառ դարձաւ նպարատունները գրոհելու մեր մարմնական պէտքերը հոգալու համար:

Ասկէ քանի մը օր առաջ՝ Աւագ Երեքշաբթի յիշատակեցինք տասը կոյսերը: Մատթէոսի աւետարանէն քաղուած առակը կը պատմէ, թէ ինչպէս փեսան դիմաւորելու ելած տասը կոյսերէն հինգը իմաստուն գտնուելով իրենց հետ պահեստի ձէթ առին, մինչ միւս հինգը յիմարաբար ձեռնունայն ներկայացան: Անոնք քունի թմբիրին մէջ էին եւ երբ արթնցան կանթեղները նորոգելու, անդրադարձան, որ ձէթի կարիքը ունին: Մինչ անոնք խանութպաններուն քով ձէթ կը գնէին, փեսան եկաւ եւ հինգ իմաստուն կոյսերը, որ նախապատրաստուած էին, անոր հետ հարսանիքի մտան, եւ դուռը զոցուեցաւ (Մատթ. 25: 1-12):

Միրելի՛ կանթեղները կը խորհրդանշեն մեր հոգիները, իսկ ձէթը Աստուծոյ խօսքն է: Վա՛յ մեզի, եթէ մեր

հոգիները պարպուին աստուածային պատգամներէ եւ մենք անպատրաստ գտնուինք Տիրոջ երկրորդ գալըստեան:

Յիսուս կ'ըսէ. «Այս բաները ձեզի խօսեցայ, որպէսզի ինձմով խաղաղութիւն ունենաք. աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջասի՛րտ եղէք, եւ յաղթեցի աշխարհին»: (Յովհ. 16:33) Եւ յիշատի, մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս յաղթեց այս աշխարհին. օրուան ժամամուտի բառերով՝ «Իր մահով մահը յաղթեց եւ Իր յարութեամբ մեզ նոր կեանք պարգեւեց»: Օրհնեա՛ւ թող ըլլայ մեր Տիրոջ հրաշափառ յարութիւնը:

Զատկական այս առաւօտ, բարեգութ Սաստուած իր առատ ողորմութեամբ նոր կեանքին արշալոյսը ծագեցուց մեր վրայ: Այսօր այդ նոր կեանքին տօնախմբութիւնն է, որ կը կատարենք: Քրիստոսի հրաշալի յարութիւնը աւետելով՝ այսօր մեր էութեան խորքին մէջ Աստուծոյ ներկայութիւնը կը վերահաստատենք: Քրիստոսի լուսաբաշխ յարութեան աւետիսով մեր հաւատքը կը զօրացնենք, քանզի քրիստոնէութիւնը սոսկ փիլիսոփայութիւն չէ, այլ՝ կեանքի ընթացք: Քրիստոսի յեղաշրջող յարութիւնը տօնախմբելով կը վերահաստատենք մեր յանձնառութիւնը հաւատքի ուսուցիչներ դառնալու մեր զաւակաց համար, որպէսի անոնք երբեք չխտորին ճշմարտութեան ճամբաներէն:

Վերջին շրջանի փորձութիւնները լաւ դաս մը սորվեցուցին մեզի: Առաքեալի խօսքերով՝ «Զգացինք որ մահուան վճիռը կախուած է մեր վրայ: Բայց ատիկա եղաւ, որպէսզի սորվինք մենք մեզի չապաւինիլ, այլ՝ Աստուծոյ, որ կը յարուցանէ մեռելները» (Բ. Կորնթ. 1:9): Վախերու, տագնապներու եւ բացասական այլ երեւոյթներու կողքին ականատես եղանք նաեւ գիտակից հաւատքի կենդանի վկայութիւններու եւ գործնական

արտայայտութիւններու: Բորորս ականատես եղանք աշխարհի չորս ծագերու մէջ բժիշկներու եւ բուժաշխատակիցներու բացառիկ եւ անձնուրաց ծառայութեան՝ դիմացինի սիրոյն սեփական կեանքը վտանգելով: Տեսանք աստուածսիրութեան եւ մարդասիրութեան զանազան հրաշալի դրսեւորումներ՝ տարեցներուն կամաւորաբար օգնութիւն հասցնող երիտասարդական առաքելութիւններ, դեղորայքի եւ պարենի ազնիւ նուիրատուներ, կառավարական համապատասխան հիմնարկներու՝ ոստիկանութեան, հրշէջ ծառայութեան, շտապօգնութեան ծառայողներու շուրջօրեայ նուիրեալ աշխատանք: Մեզի յատկապէս ուրախութիւն պատճառեց մեր սիրեցեալ զաւակաց համախմբումը Մայր Հայրենիքին մէջ: Այդ բարերարներու կատարած հերոսական արարքին մէջ մենք Քրիստոսի յարութեան յաղթական ոյժը կը տեսնենք:

Հայ ազգը պատմութեան ընթացքին շատ փորձութիւններ տեսած է՝ աղէտներ, պատերազմներ, սով եւ հիւանդութիւն: Սակայն մեր հայրերու հաւատքին շնորհիւ մենք միշտ վեր յառնած ենք փիւնիկի պէս, ճիշդ այնպէս ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մկրտութեամբ անոր հետ միասին թաղուեցանք եւ մահուան հաղորդ եղանք, որպէսզի ինչպէս Քրիստոս՝ Հօրը փառքով յարութիւն առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մենք նորոգուած կեանքով ապրինք»: (Հռոմ. 6:4)

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, մեր խնդրանքն է, որ չդադրիք աղօթելէ աշխարհի բոլոր հիւանդներու, կարօտեալներու, նեղուցեալներու համար: Չդադրիք աղօթելէ Մայր Հայաստանի, Ս. Էջմիածնի եւ մանաւանդ անոր գահակալի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի համար:

Հաւատացէ՛ք Քրիստոսի հրաշափառ յարութեան
հրաշքին եւ գիտցէ՛ք, որ այս դժուարութիւններն ալ
պիտի անցնին: Մեր հայրական յորդորն է, որ Քրիստոսի
յարութեան այս պատգամով առաջնորդէք ձեր կեանքը՝
անկախ օրուայ պայմաններէն: Մի՛ մոռնաք ձեր Տէր
Աստուածը ուրախութեան եւ հանգստութեան օրերուն,
այլ անդադար փառաւորէք Անոր սուրբ անունը, որ է
օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Քրիստոս յարեալ ի մեռելոց:
Օրհնեա՛լ է յարութիւնը Քրիստոսի

Սուրբ Զատիկ 2020

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ՝

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄԸ ՆՈՐ

ԱՐՇԱԼՈՅՍՆԵՐՈՒ

«Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք, զի մի՛ յանձինս ապաստանիցեմք, այլ յԱստուած, որ յարուցանէ զմեռեալս» (Բ. Կորնթ. 1:9)

Քրիստոսի հրաշալի Յարութեան խորհուրդը յեղաշրջած է մարդկութեան կեանքը դէպի նորը, դէպի Աստուած: Մարդուն կեանքը նոր ընթացքը կ'արձանագրէ Քրիստոսի Յարութեամբ, եւ մենք այդ առկայ կը տեսնենք աշխարհի պատմութեան մէջ, եւ ինչու չէ՝ ի մասնաւորի մեր ազգի պատմութեան ոլորտներուն մէջ արտացոլուած: Գիտակից ենք այս ճշմարտութեան եւ կը տօնախմբենք Ս. Յարութեան տօնը, քանզի Յարութեան խորհուրդին մէջ կը տեսնենք պատկերը հայ ժողովուրդի կենսընթացքին պատմութեան հոլովոյթին ընդմէջէն:

Ուրախ սրտով կը յայտարարենք Քրիստոսի Յարութիւնը եւ մեր սրտերու խորքին կը զգանք նաեւ ներկայութիւնը Աստուծոյ սիրովը պայմանաւորուած նոր կեանքին: Ճիշդ այս մտքին վրայ կ'ուզենք կեդրոնացնել մեր մտածումները Զատկական այս Տօնին եւ հարցումը ուղղելով մենք մեզի քննենք մեր անձերը՝ տեսնելու, թէ ինչքանով կ'ապրինք քրիստոնէական հաւատքը: Եթէ լոկ անցեալի փառքը գովերգելու մղումով կը նշենք Ս. Յարութեան Տօնը, ապա պահն է, որ խոստում կատարենք ու յանձնառու ըլլանք հաւատքն ապրելու լիարժէք, այն դարձնելով կեանքը ճշմարտապէս ապրելու հոգե-

ւոր սնունդը, որպէսզի մեր կեանքն արձանագրէ հաւատքի այն տարողութիւնը, որն էր նաեւ գիտակցութիւնն ու գաղափարականը մեր նախնեաց: Մեր նախնիք Յարութեան խորհուրդով պայմանաւորեցին իրենց կեանքը, եւ Աստուած դարձաւ հիմքն ու ապաստանը իրենց կեանքին: Անշուշտ ունինք այս նոյն ներքին մղումը, բայց այն պէտք է ունենայ ուժեղ արտայայտութիւն, Քրիստոսի մահը մեր մէջ կրելու ոգին, որպէսզի մեր կեանքն արտացոլէ նաեւ Փրկչի Յարութեան լոյսը, որն իր մէջ կ'ամփոփէ ստեղծագործ կեանքին տեսիլքը, մարտիրոսական կեանքին ճանապարհը:

Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան տօներու առիթով մենք 2020 տարին հռչակեցինք «ինքնութեան տեսիլքի» տարին, այն համոզումով ու սպասումով, որ անընդհատ մեր մէջ պիտի ապրեցնենք քրիստոնէական նկարագիրը, որն իր մէջ կ'ընդգրկէ նաեւ այն բոլորը, որոնք Աստուծոյ տուածն են. եկեղեցի, հայրենիք, մշակոյթ, բարոյականութիւն, հոգեւոր արժէքներ: Այսօրուայ աշխարհի կեանքին հոսանքը կը զրկէ մեզ այս բոլորէն: Գիտութեան հետ ձեռք բերուած բոլոր զարգացումները շատ օգտակար են մարդկութեան բարօրութեան համար, բայց երբէք չեն կրնար զուգահեռ կարեւորութիւն մը ունենալ մեր նկարագիրը ապահովող որոշիչ բաղադրեալներով:

**«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:**

Քրիստոսի հրաշալի Յարութիւնը յայտարարելով մեր էութեան խորքին պիտի արմատաւորենք Աստուծոյ ներկայութիւնը:

Քրիստոսի լուսաբաշխ Յարութեան լուրը աւետելով անտարակոյս պիտի վերապրինք քրիստոնէական հա-

ւատքը, քանզի այդ փիլիսոփայութիւն չէ, այլ կեանքի ընթացք:

Քրիստոսի յեղաշրջող Յարութեան հրաշքը կը պարտաւորեցնէ, որ դառնանք հաւատքի ուսուցիչներ մեր զաւակաց համար, որպէսզի անոնց կեանքը դարձնենք նմանակցութիւնը՝ Քրիստոսի կեանքին:

Քրիստոսի Յարութեան խորհուրդը կ'ապահովագրէ մեր կեանքի նոր արշալոյսները: Ահա այդ իմաստով է, որ Առաքեալը կ'ըսէ. «...զի մի՛ յանձին ապաստանիցեմք, այլ եւ յԱստուած, որ յարուցանէ զմեռեալս»:

Զատիկը Քրիստոստով պայմանաւորուած նոր կեանքին տօնն է: Զատիկը հրաւեր է հաւատքով ապրուած կեանքին:

Ս. Յարութեան Տօնը մեզ կ'առաջնորդէ մեր վրայէն թօթափել հին մարդը, մեռեալ հոգին, եւ մեր ներքին էութիւնը զգեստաւորելու Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Զատկական տօներուն մեր առջեւ ծառացած սովորականէն շատ տարբեր փորձառութենէ յետոյ աղօթող ենք եւ յուսալից, որ հետզհետէ ընդհանուր իրավիճակը դէպի բարելաւում պիտի ընթանայ եւ առհասարակ ամենուրեք խաղաղութիւնն ու բնականոն կեանքը վերահաստատուի:

Մեզի համար շատ յստակ է, եւ փաստօրէն տեղեակ ենք, թէ դուք ինչպիսի ջանք ի գործ դրիք, որպէսզի ձեր հօտին վստահուած ժողովուրդը առաջնորդէք արդիական հնարաւոր բոլոր միջոցներով:

Այսու, մեր հովուական գրութեամբ կ'ուզենք ձեզ յղել անգամ մ'եւս մեր երախտիքի խօսքը եւ աղօթք բարձրացնել առ Աստուած, որ ձեզ պարգեւէ առաւել եռանդ ու հաւատքի զօրութիւն, որպէսզի շարունակէք ձեր հոգեւոր առաքելութիւնը Աստուծոյ կամօք ու առաջնորդութեամբ ի փառս մեր սուրբ եկեղեցւոյ եւ ի միսիթարութիւն մեր հաւատացելոց:

Մեր խնդրանքն է, որ աստիճանաբար սկսիք վերակազմակերպել եկեղեցւոյ հովուական-ծառայական կեանքը գէթ վարչական մակարդակով zoom հեռարձակման դրոյթով: Գիտենք, որ արդէն շատեր դիմած են այս միջոցին: Անտարակոյս, մենք մեզ պէտք է գտնենք բազում դժուարութեանց առջեւ, բայց յառաջ պիտի երթանք լուծումներու մասին մտածելով: Դժբախտաբար, համավարակի այս օրերուն մեր սուրբ եկեղեցին ի մասնաւորի Հայաստանի մէջ դէմ յանդիման գտնուեցաւ այլ դժուարութեանց, որոնց լուծումը միասնական աղօթքով ու փոխադարձ յարգանքի ճանապարհով պարտ ենք լուծել:

Որոշ է, որ մինչև Սեպտեմբերի սկիզբը հաւաքական մեծ ձեռնարկները առկախուած են: Գէթ Առաջնորդարանի պարագային ընդհանրապէս մնացեալ տարուոյ կտրուածքով բոլոր միջոցառումները յետաձգուած են: Եկեղեցիներու պարագային ծրագրաւորումներն կը թողունք ձեզ՝ համապատասխանեցնելու տեղական պայմաններուն:

Ինչպէս Աւագ Շարթուրան Զատկական եկեղեցական տօնախմբութիւնները տեղի ունեցան առցանց (հեռարձակումով), ապա այս տարի 24 Ապրիլի արարողակարգերը եւս պիտի ունենանք առցանց (հեռարձակումով): Մայր Տաճարի մէջ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ 24 Ապրիլին եւ այդ մասին առանձինն յայտ ենք հրապարակելու: Եկեղեցիներու պարագային եւս կ'ակնկալենք, որ ծրագրէք յատուկ արարողութիւններ ըստ ձեր յարմարութեանց: Գուցէ կազմակերպենք նաեւ ծաղիկներու տեղադրում յուշարձաններու առջեւ անհատական այցելութիւններով եւ մոմավառութեամբ: Վերջինս կը թողունք ձեր հայեցողութեան:

Մեր այս նամակի առաքումէն յետոյ կրկին կապի մէջ պիտի ըլլանք ձեզ հետ՝ անդրադառնալու համար մի քանի կարեւոր հարցերու, որոնց շարքին պիտի առաջադրենք գաղափարներ, թէ ինչպէս վերսկսել բնականօրէն կեանքը եւ ինչպէս մօտենալ մեր ժողովուրդին՝ տնտեսական աջակցութեան համար:

Ապրիլ 20, 2020

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱՌԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՀԱՅՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ

24 Ապրիլ 1915 թուականը հայ ժողովուրդի պատմության մեջ Գողգոթան կը ներկայացնէ. այլ խօսքով՝ Խաչի ճանապարհը, երբ Օսմանեան կառավարութեան կանխամտածուած ծրագրով մեկուկէս միլիոն հայորդիք ենթակուեցան 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան, ու Տէր Զօրի անապատը դարձաւ տեղահանութեան ճանապարհին յոգնաբէկ հայորդեաց անշիրիմ գերեզմանը:

Մեր պատմութեան այս էջը՝ 24 Ապրիլ 1915 թուականը պիտի յաւերժ մնայ մեր ինքնութեանը հետ շաղախուած անջնջելի ճշմարտութիւնը հայոց Ցեղասպանութեան, բայց նոյնքան նաեւ մեր ազգի Յարութիւնը խորհրդանշող ծննդեան նոր թուականը: Մեր սուրբ նահատակաց ոգին 105 տարիներէ ի վեր կը սաւառնի հայոց երկնակամարին եւ կը խօսի իրաքանչիւրիս հոգիին մէջ:

Պատմութեան բառարանին մէջ հայութիւն կը նշանակէ լինելութիւն: Մեր կեանքի ողջ ճանապարհորդութիւնը պիտի ըլլայ յանուն արդարութեան երթ, որու ամբողջ ընթացքին պահանջատիրութիւնը պիտի դարձնենք մեր արեան անմարելի կանչը: Կեանքն այնպէս պիտի ապրինք, որ իրաքանչիւր հայու կեանքը դառնայ կենդանի պատգամը մեկուկէս միլիոն մեր սուրբ նահատակաց:

Հայոց Ցեղասպանութեան 105-րդ ոգեկոչումը բոլորս կը հրաւիրէ խոնարհելու մեր սուրբ նահատակաց յի-

շատակի առջեւ: Մեր պատգամն է, որ համաճարակի այս օրերուն, ծնողներ՝ ձեր ծունկերու առջեւ պահած Ձեր զաւակներն ու թոռները, պատմէք անոնց մեր ինքնութեան խորհուրդի մասին: Լսել տաք անոնց, որ Ձեր սրտի զարկին մէջ ծրարած էք սրտին զարկը իւրաքանչիւր հայ նահատակին: Անոնք իմացեալ մահը կամաւորաբար յանձն առին եւ անմահութիւնը կերտեցին:

Ժողովուրդներու մեծ ընտանիքին մէջ մենք պիտի ապրինք որպէս հարազատ հայեր՝ մեր էութեանը մինչեւ խորքին պահելով սէրն Աստուծոյ, տեսիլքն հայրենական, հաւատքը Ս. Էջմիածնի, զգացողութիւնը մեր սրբազան աւանդութեանց եւ անշիջանելի պատգամը՝ պահանջատիրութեան:

Նոր աշխարհի մը մէջ կ'ապրինք, բայց մեր նախնեաց տեսիլքերն ու երազները մեր արեան կանչը պիտի մնան: Նոր աշխարհը՝ իր բոլոր մարտահրաւերներով արթուն պիտի պահէ մեզ եւ գալիք սերունդները՝ մնալու միշտ հաւատարիմ մեր պատմութենէ մեզի որպէս ժառանգ վստահուած սրբութեանց: Պարոյր Սեւակ մարգարտաշունչ իր բանաստեղծութեամբ մեր հաւատքն ու կամքը դարձուց աննկուն եւ անտեղիտալի.

“Կա՛նք, պիտի լինենք ու դեռ շատանանք...”

24 Ապրիլը հայութեան համար հրաւերն է կեանքի, տօնախմբութիւնն է նոր կեանքին եւ խոնարհումի օրը՝ մեր սուրբ նահատակներու յիշատակին ընդառաջ: Հայաստան եւ Սփիւռք ապրող մեր ազգի զաւակունք Աստուածաշունչի հետ մէկտեղ իրենց տան մէջ պիտի ունենան հայոց պատմութեան գիրքը, որուն էջերուն մէջ է արձանագրուած հայ Գողգոթան եւ արշալոյսը վերածնեալ կեանքի: Մարդու համար Աստուածային կեանքը առաքելութիւն է եւ յաւերժութիւն խորհրդանշող ոգեղէն ներկայութիւն:

Մնանք հաւատարիմ մեր ինքնութեան, Սրբութեամբ ինկարկենք յիշատակը մեր սուրբ նահատակաց, որպէսզի մեզմէ իւրաքանչիւրին կեանքը դառնայ նոր կեանք, նոր հայրենիք, նոր եկեղեցի, նոր ժողովուրդ վաղուան սերունդներու կեանքին մէջ:

Մեր խօսքը կ'աւարտենք Գարեգին Տրապիզոնցի Պատրիարքի ազդեցիկ պատգամով, որն իրապէս կը ներշնչէ ու կ'ամրացնէ մեզ՝ մնալու հպարտ մեր հայեցի ինքնութեամբ.

«...Ճակատագրուած ենք ապրելու, եթէ հաւատանք: Հաւատքը կը յարուցանէ քառօրեայ մեռեալն անգամ: Փա՛ռք Աստուծոյ, մեր նոր սերունդը մեռեալ մը չէ: Ան լի է կեանքով, լի է կամքով ու հաւատքով: Եւ իր այս կեանքին, կամքին ու հաւատքին մէջ ծածկուած կան տարերքը իր նախահայրերու կեանքին, կամքին ու հաւատքին: Նպատակը ձեր բոլոր ջանքերուն ու զոհողութիւններուն պիտի ըլլայ նոր սերունդին մէջ հիմնաւորել ինչ որ բնիկն է: Եւ այդ՝ թոյլ տալով, որ նոր արժէքները գան յղկել, զօրացնել եւ նոր կերպարանափոխութեամբ մը ապրեցնել զայն ու տեւականացնել»:

24 Ապրիլը, այսօր, խորհրդանշէն է մեր ազգի վերածննդեան:

Ապրիլ 24, 2020

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳԻՐ

ԹԵՄԻ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻՒՆԵՐՈՒՆ

Բոլորիս համար անխտիր անցնող երկու ամիսները եղան իրօք դժուարին բոլոր առումներով, որովհետեւ անակնկալօրէն մեր կեանքի ընթացքը իր հունէն դուրս եկաւ քորոնավիրուսի պատճառով, եւ անհրաժեշտաբար համակերպուեցանք եւ որդեգրեցինք կեանքն ապրելու նոր ոճ մը, ու ծառայութիւնը մեր հաւատաւոր ժողովուրդին փորձինք իրականացնել այլ կամ նորագոյն միջոցներով: Անկասկած, այս ժամանակահատուածին իւրաքանչիւրս ունեցանք խոկումի առանձնակի պահեր, աղօթքով մեր կեանքն ապրելու եւ ընտրելու կեանքն ապրելու նորովի մօտեցում մը:

Մեր մտքերուն հաղորդ կ'ուզենք դարձնելու ձեզ հովուական այս գրութեամբ եւ առաջին իսկ առիթով մեր աղօթքն առ Աստուած կը վերառաքենք ձեզմէ իւրաքանչիւրին համար, որպէսզի դուք մնաք քաջառողջ կեանքով ու հոգեւորապէս զօրացած՝ Տիրոջմով շարունակէք ձեր հոգեւոր ծառայութիւնը Աստուծոյ անդաստանէն ներս, ու ձեզի վստահուած հօտին գաւակներուն հոգիները շարունակէք լեցնել ու զարդարել սուրբ հոգու շնորհներով, ու բոլորին կեանքը առաջնորդելով առ Աստուած:

Որոշ է բոլորիս համար ալ, որ այս աննախնթաց փորձութեան ու փորձառութեան ենթարկուելէ յետոյ մենք կեանքին պիտի նայինք նոր մօտեցումներով, մեր կոչումը մշտապէս նորոգելով ի Քրիստոս, քահանայութեան ճանապարհին՝ Մեծ Վարդապետը դարձնելով մեր առաքելական կեանքին մտատիպարը:

Միքեցեալ հոգեւոր հայրեր, անցնող օրերուն մեր ձեռքին ունեցանք թեմիս Անդրանիկ Առաջնորդ՝ հոգեւորյս Գարեգին Տրապիզոնցի եպիսկոպոսի, այնուհետեւ Պատրիարք Կ. Պոլսոյ հովուական գիրը՝ ուղղուած թեմի հոգեւորականաց, որն իրօք բացառիկ է իր ներշնչող պատգամներու բովանդակութեամբ: Մեր հովուական այս գիրին կը կցենք իր հովուական գիրը եւ խնդրանքով, որ այն անպայման ընթերցէք, ըմբռնէք եւ զգաք, որ հոգեւորյս պատրիարքին պատգամները թոյլք կու տան ձեր հոգիին: Անհրաժեշտ չենք զգար մանրամասն անդրադառնալ անոր գիրին՝ այն թողլով ձեր հայեցողութեանը, առանձնակի պահի մը մէջ ընթերցումի համար: Մեր այս հովուական գրութեանը մէջ ներառելով Գարեգին Տրապիզոնցի պատրիարքին խօսքը՝ կ'ուզենք ընդգծել այն հիմնական մտածումը, որ հովիւը իր քահանայական կոչումով ու պարտականութեամբ պիտի կարողանայ իր հօտին զաւակները առաջնորդել առ Աստուած եւ համախմբել բոլորը, որպէսզի դառնան ապրող եկեղեցին, ընտանիք մը ի Քրիստոս:

Մեր սրտի ջերմ մաղթանքն ու սպասումն է, որ բոլորով աւելիով մեր մէջ զգանք ու գիտակցենք Քրիստոսի կողմէ որպէս Առաքեալ ընտրուած ըլլալու առանձնաշնորհումն ու կոչումը, որ մշտապէս պիտի նորոգենք աղօթքով ու խոկումով, որովհետեւ աշխարհը իրօք յաճախ մեզ կը շեղեցնէ մեր ընտրած ճանապարհէն: Եւ կարծէք համաճարակը մեր հոգեւոր կեանքին մէջ նոր սկիզբ մը կը հաստատէ: Ուրեմն, գուրգուրանք կեանքին վրայ եւ առաւելագոյնս արժեւորենք զայն հաւատքի գործերով:

Բազում առիթներով պատգամ ենք յղած ձեզ եւ խնդրած, որ միմեանց նկատմամբ ցոյց տաք ճշմարիտ սէր ու յարգանք, միշտ հոգատար իրար նկատմամբ,

օգնական ու գնահատող իրարու հանդեպ, որովհետև այսօրինակ վարքագծով կը զօրանայ մեր ներքին միաբանությունը եւ հարիւրապատիկ կը յաջողինք մեր եկեղեցանուէր առաքելութեանը մէջ, որուն գլխաւոր նպատակն է ժողովուրդն առաջնորդել առ Աստուած: Բոլորով ձեռք-ձեռքի տուած, զօրացած Ս. Հոգւոյ շնորհներով պիտի յաղթենք մեր առջեւ ծառացած դժուարութիւններն ու փորձութիւնները եւ ցոյց տանք մեր հաւատքին չափն ու զօրութիւնը: Եւ ինչու չէ՝ եւ՛ անհատական մեր կեանքը, եւ՛ մեր եղբայրութիւնը հրաշագործ պիտի դարձնենք Աստուծոյ փառքին համար:

Հովուական մեր այս գրութեամբ ձեզի կը փոխանցենք երախտագէտ մեր սրտի զգացումները, որովհետև ձեր կարելին ի գործ դրիք եւ մերժեցիք ժամանակին պատճառած նեղութիւնները:

Մեզի համար հոգեկան մխիթարութիւն էր Հինգշաբթի, 30 Ապրիլին zoom conference-ի դրոյթով ունենալ թեմի հոգեւորականաց իր տեսակին մէջ թէւ անսովոր, բայց օգտաշատ խորհրդածողով մը: Ինչպիսին ալ ըլլան պայմանները, մեր ներքին միաբանութիւնը պիտի պահենք ամուր, որպէսզի կամաց-կամաց նախապատրաստուինք վերաբանալու մեր եկեղեցիներու դռները: Առաջին առիթով, երբ յստակութիւններ յայտարարուին, ապա մենք պիտի նախաձեռնենք մեր յառաջիկայ zoom conference-ը: Իսկ այս գրութեամբ ձեր ուշադրութեանը կ'ուզենք բերել հետեւեալ պարագաները.

Ա. Կանոնաւորել Ծխական խորհուրդներու եւ յարակից մարմիններու zoom ժողովները, որպէսզի գէթ հոգեւոր կապը պատկան մարմիններու հետ հետզհետէ իր բնականոն հունին մէջ մնայ:

Բ. Ս. Հաղորդութեան մատուցման պարագան բոլոր պարագաներուն կը յետաձգենք մինչեւ Մայիսի աւարտը: Անհատներու ս. հաղորդութիւն տալու հարցը կը թողունք ձեր հայեցողութեան:

Գ. Ս. Պատարագները ժողովուրդին առջեւ բանալու առաջին կիրակին թեմի եկեղեցիները պիտի կազմակերպեն Դոնբացէքի աւանդական արարողութիւն «Հայր մեր»է առաջ եւ այդ օր պատգամը նուիրել մասնաւոր կերպով դոնբացէքի խորհուրդին վրայ:

Դ. Ձեռնարկել յատուկ նուիրահաւաքի մօտեցում՝ հովուական նամակով մը խնդրելով հաւատաւոր մեր ժողովուրդի տնտեսական զօրակցութիւնը:

Ե. Նկատի ունենալ, որ յառաջիկայ շաբաթներուն ու ամիսներուն անհրաժեշտութիւն պիտի ըլլայ եկեղեցիներու մէջ հաստատելու յատուկ առաքելութիւններ՝ կարենալ օգնելու համար կարիքաւոր ընտանիքներու:

Զ. Ծուխերու մէջ զարկ տալ zoom ձեռնարկներ Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ վարժարաններու, երիտասարդական միջոցառման, Աստուածաշնչական սերտողութեանց: Ուրախալի է, որ մեր եկեղեցիներէն շատեր արդէն ձեռնարկած են այս մօտեցումին եւ հովիւներու առաջնորդութիւնը բոլորի պարագային խիստ անհրաժեշտ է:

Է. Շարունակել անընդմէջ ս. պատարագներու եւ մասնաւոր արարողութեանց առջանց թողարկումները, որոնք այս օրերուն իրօք միախառնութիւն կը պարգեւեն հաւատաւոր մեր ժողովուրդին:

Միքելի հոգեւոր հայրեր, եղբայրներ ի Քրիստոս, մնացէ՛ք հաստատուն ձեր եռանդին մէջ, քանզի մեր հաւատաւոր ժողովուրդը յատկապէս այս օրերուն հացի ու ջուրի պէս պէտքն ունի ձեր հոգածու վերաբերմունքին, Աստուծոյ խօսքին բացատրութեանը: Եւ մեր

խնդրանքն է, որ անպայման ընթերցեք Գաբեգին Տրապիգոնցի Պատրիարքին պատգամը: Միաժամանակ մեր թելադրությունն է, որ վերաքաղեք նաև Գաբեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի «Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան» գիրքը, եւ ի մասնաւորի հովիւին վերաբերեալ ենթագլուխը: Մենք անձնապէս այդ ընթերցումը կատարեցինք երկրորդ անգամ եւ այն գտանք չափազանց օգտաշատ:

Հովուական մեր գրին պիտի յաջորդեն շարք մը հրատարակութիւններ, որոնք եղան արդիւնքը այս օրերու մեր մեկուսացումին, միատեղ կատարելով հանդերձ մեր հովուական ծառայութիւնը:

Թող ամենաբարին Աստուած օրհնէ մեզ բոլորս եւ մեր աղօթանուէր ժողովուրդը: Միասին աղօթենք, միասնական ծառայենք եւ ամուր պահենք Հայց. Եկեղեցին՝ Քրիստոս ի գլուխ ունենալով:

Մայիս 5, 2020

ԿՈՉՈՒՄԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔ

Գոհութիւն եւ փառք ամենակալին Աստուծոյ, որ օրհնած է մեր ս. եկեղեցին ձեր նման ազնիւ ու կոչումի տէր նուիրեալ հոգեւորականներով, որպէս հովիւներ մեր հաւատաւոր ժողովուրդին: Թեմի առաջնորդութեան ծանր, բայց քաղցր լուծը հաւասարապէս բոլորի վրայ կը տարածուի: Ինչպէս միշտ եւ յատկապէս այս դժուարին օրերուն մեր թեմի հոգեւորականութիւնը մնաց ծառայութեան մէջ հաստատ:

Սիրեցեալ հոգեւոր հայրեր եւ եղբայրներ ի Քրիստոս, աղօթք մաղթանքի այս աւանդութիւնը կը հաստատենք մեր թեմական կառոյցէն ներս, որպէսզի հաւատաւոր ժողովուրդի աղօթքներով զօրացնենք նաեւ մեր կոչումի ու ծառայութեան կեանքը, որ ի վերուստ է մեզի վստահուած: Այս դժուարին օրերուն մեր հաւատքին աւելի սնունդ տանք եւ առաւելագոյնս համախմբենք մեր ս. եկեղեցւոյ զաւակները եկեղեցւոյ շուրջը: Եկեղեցին՝ հաւատացելոց համախմբումն է ի Քրիստոս, եւ ժամանակներու մէջ երեւացող փորձութիւնները պարտութեան պիտի մատնենք աղօթքով ու հաւատքի կեանքով:

Ինչքան զեղեցիկ է սահմանած Տրապիզոնցի Պատրիարքը քահանայական կոչումը.

«Դուք օծութիւն ունիք սուրբերէն, ամուր եւ միշտ բռնեցէք այդ կշիռը ձեր օծեալ ափերուն մէջ, ինչպէս անջինջ արդարութեան դրոշմը ձեր միւռնօծ ճակատին վրայ...»:

«Եւ գիտէք դուք, թէ ինչ է ամփոփումը ձեր կոչումի բովանդակ պարտականութեան – ՆՈՒԻՐՈՒՄ»:

Թող Աստուած հովանի ըլլայ բոլորիդ վրայ: Մեր քարի մաղթանքները բոլորիդ անխտիր եւ ի մասնատրի ծննդեան եւ ձեռնադրութեան ամեակներ ունեցող հոգեւորականներուդ:

ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻՆ

*“Պիտի սիրես քու Տէր Աստուածդ քու բոլոր սրտովդ:
Պիտի սիրես քու ընկերդ քու անձիդ պէս”:*

(Մատթ. 22:38-39)

Այս օրերուն, երբ աշխարհն ամբողջ քորոնավիրուսի փորձութեան մէջէն կ'անցնի, Քրիստոսի պատգամները իրօք կը պարտաւորեցնեն բոլորս, որ մեր հոգու աչքերը կեդրոնացնենք Աստուծոյ վրայ, քանզի Աստուած Ինք է աղբիւրը ճշմարտութեան, բարիին ու կատարեալին:

Մեկուսացումի այս օրերուն մենք բոլորս կը գիտակցինք, որ դեռ մինչեւ երէկ ինչքա՛ն հեռացած էր մարդկութիւնը Աստուծմէ: Աշխարհիկ արժէքներէ շրացած՝ մարդը մոռցած էր իր Ստեղծիչը եւ երկրպագութիւն կը մատուցեր նիւթին առջեւ, որ ժամանցելի է: Տարակոյս չունինք, որ ինչպէս մեր անձնական կեանքին մէջ կը զգանք ու կ'ապրինք Աստուծոյ ներկայութիւնը աւելի շեշտուած կերպով, նոյնը կը զգան եւ կ'ապրին ընդհանրապէս մարդիկ:

Միւրեւ զԱստուած՝ կը բացատրէ խոնարհիլ Անոր մեծութեան առջեւ եւ տեսնել այն, ինչ որ նիւթէն աւելի վեր է, հոգեւորն է ու Անժամանցելին:

Անժամանցելին Աստուած ինք է: Աստուծոյ մէջ կը գտնենք մեր հոգու պատկերը, ճանապարհը մեր կեանքին, նպատակը մեր քայլերուն:

Այս օրերը, փորձութեան այս ժամանակը մեզ աւելի մօտեցուց Աստուծոյ եւ ինչու չէ՝ նաեւ մարդուն ընդհանրապէս:

Աստուած կը թելադրէ նաեւ սիրել Աստուծոյ կողմէ ստեղծուած մարդը: Եւ եթէ աշխարհն այսօր կը տառա-

պի, անոր միակ պատճառը Աստուծմէ պարպուած ըլլալն է: Որովհետեւ եթէ Աստուծոյ առջեւ չենք խոնարհիր, ապա ընտրած ենք նիւթը եւ այն աւելի բարձր պահած, քան Աստուածսիրութիւնը:

Այս տողերը թուղթին կը յանձնենք, որպէս ճշմարիտ ու անկեղծ արտայայտութիւնը մեր հաւատքին Աստուծոյ հանդէպ: Եւ այդ ալ է պատճառը մեր հոգու մէջ փայփայած խաղաղութեան, խղճի հանգստութեան:

Մայիս 10, 2020

ՈԳԵԿՈՉՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 1918թ.

Մայիս 26 Սարդարապատ եւ Մայիս 28, 1918 թուականները մեր ժողովուրդի պատմութեան մէջ արձանագրուած պիտի մնան յաւիտեան որպէս Յարութեան խորհրդանիշներ: Մոխիրներուն մէջ դեռ հազիւ նոր բողբոջ դարձած մեր ազգի զաւակունք մեզի որպէս ժառանգ վստահեցան Մայր Հայաստանը՝ Սարդարապատի յաղթանակով ու Հայաստանի Հանրապետութեան հռչակումովը 1918 թուին:

Ոգեկոչել պատմական այս հանգրուանը մեր ազգի պատմութեան մէջ՝ կը նշանակէ լսել արեան կանչը մեր անմահ հերոսներուն, ովքեր Ս. Էջմիածնի դոզանջներուն ներքոյ ուխտ կատարեցին՝ փրկելու Հայաստանը եւ այն դարձնելու լոյսի ու յոյսի փարոսը բոլոր սերունդներու համար:

Ոգեկոչել Հայաստանի Հանրապետութեան 1918 թուականը՝ կը պարտաւորեցնէ մեզ բոլորս մշտապէս աղօթել հայրենի պետականութեան ամրապնդմանը ի խնդիր եւ Հայաստանը պահել մեր մտասեւեռումի կիզակէտի տակ: Աշխարհասփիւռ հայութեան միութիւնը պայմանաւորուած է Մայր Հայրենիքով, որուն տեսիլքը իր ծնունդն է ունեցած Ս. Էջմիածինը: Ահա այն սուրբ տեղին մէջ իրենց ուխտը կատարեցին հայոց քաջարի զինուորը, եւ Ս. Էջմիածնի խորանէն հաղորդուելով Սարդարապատ մեկնեցան յաղթանակի դոզանջը իրենց սրտերուն մէջ:

Մայիս 28, 2020

ՀՈԳԵԻՈՐ ՏԵՍԻԼՔՈՎ

«Եւ մի՛ վախնաք անոնցմէ, որ մարմինը կը սպաննեն,
բայց հոգին սպաննել չեն կրնար»:

(Մատթ. 10.28)

Քրիստոսի այս խօսքերը իրօք կը յուսադրեն բոլորիս մտքերն ու հոգիները մանաւանդ այս օրերուն, երբ արտաքին բազում ազդակներ ու պատճառներ կը խանգարեն մեր կեանքի բնականոն ընթացքը: Պէ՞տք է վախնալ ու յուսալքուիլ ստեղծուած իրավիճակներէն: Մեր անձնական տեսակէտը եւ պատասխանը պիտի ըլլայ անշուշտ՝ ոչ, եւ աւելին՝ արտաքին աշխարհէն մեզի հասնող բոլոր փորձութիւնները պէտք է յաղթել եւ ընդունիլ, որ Աստուծոյ ստեղծած մարդը իր մէջ ունի հոգին, որուն ուժականութիւնը ժայռի պէս ամուր է, երբ լեցուն է հոգեւոր ու բարոյական արժէքներու գիտակցութեամբ: Աստուածաստեղծ մարդը, երբ իր հոգին կը լեցնէ Աստուծոյ սիրովն ու Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող ճշմարտութեան պատգամներով, ապա նոյն մարդը ինքզինքին թոյլ չտար, որ իր հոգին աղարտող ու սպաննող վիճակներ իր անձին շուրջը արմատ նետեն:

Ահաւասիկ գրեթէ չորս ամիսներու յաջորդականութեամբ ամբողջ աշխարհի կեանքը իր բնականոն հունէն դուրս եկաւ: Եւ առհասարակ մարդը տոկաց բոլոր տեսակի փորձութեանց, որովհետեւ ապահովեց իր հոգիին զօրութիւնը՝ աղօթքի կեանքով, իր մէջ աճեցնելով համբերութեան չափն ու կամքին տոկունութիւնը: Մարդը թոյլ չտուաւ, որ արտաքին աշխարհէն եկող փորձութիւնները հոգին սպաննեն եւ իր մտածումները

րուն ամբողջական լարումովը նոյն մարդը պարտ է՝ շարունակելու իր կեանքը Աստուծոյ կամքին համաձայն:

«Եւ մի՛ վախնաք անոնցմէ, որ մարմինը կը սպաննեն, բայց հոգին սպաննել չեն կրնար»: Այս եղաւ մեր պատգամը անընդհատ մեր ս. եկեղեցիներու խորաններէն կիրակնօրեայ ս. պատարագներու կամ մասնաւոր հոգեւոր առիթներով թեմի հոգեւորականներու հետ միասին, որոնց հետ սերտ գործակցութեամբ փորձեցինք Աստուծոյ խօսքը հասանելի դարձնել բոլորին՝ եկեղեցին տանելով տուներէն ներս, որպէսզի Աստուած եւ մարդ կապը մնար հաստատ ի մասնաւորի այս փորձութեանց օրերուն: Մեր թեմի հոգեւորականաց դասի հետ միասին հաւատաւոր ժողովուրդը հրաւիրեցինք աղօթքի աշխարհի խաղաղութեան համար, բժիշկներու ու բուժաշխատողներու համար, մանուկներու ու աշակերտներու համար, հայ ընտանիքի սրբութեան ու անսասանութեան համար, եւ Երկուշաբթի, 8 Յունիսէն սկսեալ աղօթքի մնայուն աւանդութիւն կը հաստատենք թեմի հաւատացելոց համար հոգեւորականութեան առաջնորդութեամբ, շաբաթուան իւրաքանչիւր օրը նուիրելով յատուկ նպատակի մը:

Եւ այս աւանդութիւնը կը հաստատենք՝ ներշնչուելով Առաքեալին Փիլիպպեցւոց գրուած նամակէն քաղուած պատգամին վրայ, որն աղօթքի կը հրաւիրէ բոլորս.

«Միշտ ուրախ եղէք Տիրոջմով. Դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք: Թող ձեր հեղութիւնը յայտնի ըլլայ բոլոր մարդոց: Տէրը մօտ է: Հոգ մի՛ ընէք, այլ աղօթքներով ու աղաչանքներով ձեր խնդրանքները գոհաբանութեամբ թող յայտնի ըլլան Աստուծոյ: Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ վեր է ամէն միտքէ, պիտի պահէ ձեր սրտերը եւ մտածումները Քրիստոս Յիսուսով» (Փիլիպպեցւոց, 4: 4-7):

Երկուշաբթի - աղօթք ձօնուած անգործներուն, առաջնորդութեամբ Սանթա Քլարիթայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Զաւէն քինյ Մարկոսեանի:

Երեքշաբթի - աղօթք ձօնուած տարեցներուն, առաջնորդութեամբ Արարատ Տան (Լոս Անջելոսի) հոգեւոր հովիւ Արժ. Տ. Երեմիա քինյ Խաչատրեանի:

Չորեքշաբթի - աղօթք ձօնուած բժիշկներուն եւ բուժաշխատողներուն, առաջնորդութեամբ Քուրերտինոյի Ս. Անդրէաս եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Տաթեւ Ա. Քահաւայ Յարութիւնեանի:

Հիշնգշաբթի - աղօթք ձօնուած սգաւորներուն, առաջնորդութեամբ Կլենտլի Ս. Պետրոս Հայց. Եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Եղիա քինյ Իսայեանի:

Ուրբաթ - աղօթք ձօնուած հիւանդաց, առաջնորդութեամբ Թահանկայի Սրբոց Առաքելոց եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Աւետիս քինյ Արովեանի:

Շաբաթ - աղօթք ձօնուած բանտարկեալներու, առաջնորդութեամբ Սաքարմենթոյի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Եղիշէ քինյ Քսաչիկեանի:

Կիրակի - աղօթք ձօնուած մենակեացներու, առաջնորդութեամբ Արժ. Տ. Վազգէն քինյ Մովսէսեանի:

Ինչու՞ այս քայլին կը դիմենք: Որովհետեւ նայելով Քրիստոսի կեանքի օրինակին՝ խորապէս կ'ըմբռնենք, որ վարդապետն իր աղօթքի կեանքով ի մի բերաւ աշակերտները, ու անոնց կեանքը պայծառակերպեց՝ յաղթահարելու համար կեանքի փորձութիւնները: Ուրեմն, հետեւինք Քրիստոսի կեանքի օրինակին, պատասխանենք մեր հոգեւորականներու աղօթքի հրաւերին, որպէսզի մեր մէջ զօրանայ ու առաւել ամրապնդուի եկեղեցին, որուն խորանէն կը քարոզենք Քրիստոսի պատգամները:

«Եւ մի՛ վախնաք անոնցմէ, որ մարմինը կը սպաննեն, բայց հոգին սպաննել չեն կրնար»

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ, այսօր մենք կը հրաւիրենք ձեզ եւ թեմի բոլոր հաւատացեալները, որպէսզի աղօթք կատարենք հոգեւորականաց համար: Ինչքա՛ն ձեր աղօթքը առ Աստուած բարձրացնենք հոգեւորականաց համար, այնքան կ'ամրապնդուի բոլորի մէջ կոչումի գիտակցութիւնը, ծառայութեան ոգին:

Ո՞վ է հոգեւորականը: Աստուծոյ կողմէ կոչում ստացած այն անձն է, որ խոնարհաբար իր ծառայութիւնը պիտի բերէ իր ժողովուրդին: Եւ ինչքա՛ն մեր կոչումը կը ստանանք Աստուծոյ կողմէ, նոյնքան եւս հոգեւորականը ժողովուրդէն կը ստանայ իր կոչումը: Ուրեմն, Աստուծոյ առաջնորդութեամբ եւ ժողովուրդի աղօթքներով՝ քահանային կեանքը կը դառնայ նուիրում:

Այսօր մեր խնդրանքն է, որ աղօթք կատարենք մեր թեմի ողջ հոգեւոր դասին համար: Փառք տուէք Աստուծոյ, որ Արեւմտեան թեմն ունի նուիրեալ հոգեւորականներու հոյլ մը, որուն մէջ ծառայող մէն մի քահանայ հրաշալի հայր է ու սպասաւոր իրեն վստահուած ծուխին կամ պաշտօնին մէջ: Եւ հաւատացէք, որ ձեր աղօթքներով կը գօտեպնդէք զիրենք: Աղօթեցէք նաեւ իրենց ընտանիքներուն համար, երեցկանաց եւ զաւկաց համար, որովհետեւ անոնք բոլորը կ'ապրին քահանայութիւնը:

Այսօր ի մասնաւորի յիշատակենք անունները այն հոգեւորականներուն, որոնց ծննդեան թէ ձեռնադրութեան յոբելինական տարին է, որ կը նշուի այս տարի:

Ծննդեան տարեդարձներ. Տ. Յարութիւն - 50, Տ. Մանուկ - 65, Վաչէ Սրբազան - 90, Տ. Միքայէլ - 80, Հ. Տաճատ - 75, Տ. Յովսէփ - 70, Հ. Բագրատ - 50:

Ձեռնադրություններու թուականներ. Տ. Արշակ - 60, Տ. Զարեհ - 30, Տ. Նարեկ - 40, Տ. Տաթև - 30, Հ. Սասուն - 35:

Մեր սրտի ջերմ շնորհատրանքները բոլորին անխտիր եւ մեր աղօթքն առ Աստուած, որ անսասան պահէ մեր ազգն ու ս. եկեղեցին իր հոգեւորականներով՝ ի գլուխ ունենալով ազգին Վեհափառ Հայրապետը, որպէսզի միասնական աղօթքով, սիրոյ միաբանութեան մէջ թոյլ չտանք, որ արտաքին աշխարհի ուժեր հոգին սպաննեն:

Միշտ պիտի յիշենք Տիրոջ խօսքը. «Մի՛ վախնաք անոնցմէ, որ մարմինը կը սպաննեն, բայց հոգին սպաննել չեն կրնար»:

Յունիս 8, 2020

«20-ԲԴ ԴԱՐԸ ԾԱՅՐԷ ԾԱՅՐ ԴԱՐՁԱԻ
ՄԱՀՈՒԿԵՆԱՅ ՊԱՅՔԱՐ,
ԲԱՅՅ ՅԱՂԹԵՅԻՆՔ»*

- Աստուած օգնական Սրբազան Հայր,
Ինչպէս կը դիտարկէք մեր ժամանակները. մէկ
կողմէ մարդկութեան հոգելըքութեան ատեններ, եւ միւս
կողմէ անասելի եւ անսպասելի «քորոնա» ժահրին երե-
ւումը. իրապէս ինչպիսի՞ փուլ մը կը մտնէ մարդկու-
թիւնը:

- Ձեր հարցումին ընդառաջ կ'ուզենք պատասխա-
նել պարզ բացատրութեամբ մը միայն: Թերեւս ժամա-
նակները կը փոխուին, բայց խորքին մէջ մարդկութիւնը
ինքզինք կը կրկնէ: Ինչքան ալ գիտութիւնը կը զարգա-
նայ, դեռեւս մարդկութիւնը կը յամենայ բարձրանալ
բարոյական կեանքի այն մակարդակին, որուն ակնկա-
լութիւնը Աստուած միշտ ունեցաւ, եւ սակայն նոյն մարդ-
կութիւնը միշտ ալ նահանջեց: «Քորոնա» ժահրին անսպա-
սելի երեւումը թող երբէք չզարմացնէ մարդկութիւնը,
քանզի նոյն մարդկութիւնը հեղինակն է եղած այսպիսի
ժահրերու: Բոլոր պարագային ալ ժամանակի մը հա-
մար մարդկութիւնը ապրած է հոգելըքութեան ատեններ
եւ, սակայն, շուտով այն մոռացութեան է տրուած:

* Հարցումներ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Արեւմտեան Ամերի-
կայի թեմի բարեջան Առաջնորդ Տ. Յովնան արք. Տէրտէրեանին, «Ժամանակ» օրա-
թերթ, 2020, Մայիսի 28, Սագո Արեան:

- Կայ տեսակէտ, որ մարդկութիւնը անգոր դուրս եկաւ այս մահաբեր վարակին առջեւ, եւ ամէն անգամ, որ մարդիկ տկարանան, տկարութիւն զգան՝ կը դիմեն բարձրեալին: Այս անգամ ա՛յլ այդպէս էր. ինչ կը մտածէր այդ մասին:

- Մարդը տկար է, երբ հեռու կը մնայ Աստուծմէ եւ կամ արդէն իսկ հեռացած է Արարիչ Աստուծմէ: Վարակը չի կրնար հոգին մեռցնել, եթէ հաւատքը արմատ է նետած մեր ներաշխարհին: Մենք մեր անձնական կեանքի օրինակով կ'ուզենք հաստատել, որ թերեւս երբեմն ունեցանք տկարութեան պահեր, բայց մեր հաւատքին զօրութիւնը աւելի շեշտադրուած կերպով կեանքի կոչեցինք: Եւ ինչպէ՞ս. աղօթքով, կարգապահ կեանքով, աւելի աշխատունակ կեանքի ընթացքով: Մէկ խօսքով՝ թոյլ չտուինք եւ ոչ ալ թոյլ պիտի տանք, որ վարակը ընկճէ մեզ: Յիշենք մեր պատմութեան դասերը: 20-րդ դարը ծայրէ ի ծայր դարձաւ մահուկենաց պայքար: Բայց յաղթեցինք: Միայն թէ վարակը մեր մէջ չծնի, որովհետեւ այլապէս դուրսէն հասած վարակին հմուտ էր յաղթել:

Իսկ եթէ մարդը վարակի պատճառած վտանգէն ազդուած կը դիմէ Աստուծոյ, ապա իմ մաղթանքն ու աղօթքն է, որ այսուհետեւ իր կեանքը շարունակէ Աստուծոյ երկիւղով:

- Պիտի ուզէինք սեղմ տողերու մէջ իմանալ ձերդ սրբազնութեան առաջնորդած թեմին կատարած աշխատանքներու մասին, եւ առհասարակ՝ ինչպէ՞ս կը գնահատէք թեմի ընդհանուր կացութիւնը:

- Արեւմտեան թեմը ամէն օր յառաջընթացի մը մէջ է, եւ հակառակ վարակի ստեղծած ծանր պայմաններուն՝ հոգեւորականներուս հետ ձեռք-ձեռքի տուած հնարաւոր բոլոր միջոցները ի գործ կը դնենք, որ եկեղեցին շարունակէ իր առաքելութիւնը: Այս ընթացքին եւ՝ թեմի սահմաններէն ներս, եւ՝ մինչ Հայաստան մեր մարդասիրական ծառայութիւնները ի կատար կ'ածենք եւ քաջ կը գիտակցինք, որ դեռեւս գալիք ամիսներն ու տարիները կրնան նոր դժուարութեանց դուռ բանալ մեր առջ: Բայց երբէք չպիտի տկարանանք: Հայ քրիստոնեայի հաւատքը կը մերժէ տկարութիւնը: Եւ այս ընդհանուր իրավիճակին մէջ տակաւին նոր եւ պատասխանատու ծրագրեր կը վերցնենք մեր ուսերուն՝ մեր թեմի կարգ մը ծովներու մէջ ձեռնարկելով եկեղեցական կառոյցներու նոր ծրագրերու իրականացումը: Կարճ ասած՝ թեմը իր առաքելութիւնը կը շարունակէ բազմերանգ ծրագրերով. եւ՝ հոգեւոր, եւ՝ մշակութային, եւ՝ ընկերային առումներով:

- Իմացանք նաեւ, որ ձերդ Սրբազնութեան առաջնորդած թեմը այս դժուարին օրերուն կարեւոր նեցուկ ցոյց տուաւ Մայր Աթոռին. տեղեկութիւններ կարո՞ղ ենք ունենալ այդ նախաձեռնութեան մասին:

- Արեւմտեան թեմը մշտապէս զօրավիգ է Մայր Աթոռին: Բոլոր թեմերու համատեղ կատարած ջանքերով պիտի զօրակցինք Մայր Աթոռին: Արդէն տեղեակ դարձաք մամուլէն, որ կոկիկ գումարով մը մեր մասնակցութիւնը բերինք Մայր Աթոռին եւ նոր յանձնառութիւններով պիտի շարունակենք մեր աշխատանքը: Այստեղ յստակ կերպով կ'ուզենք ընդգծել, որ մեր թեմը եւ բոլոր թեմերը միասին երախտապարտ ենք Մայր

Աթոռին ու Նորին Սրբութեան, որ անցնող քսան տարիներուն հրաշքի համագօր ու ծաւալային ծրագրեր են իրականացուցած, եւ կը զարմանանք, թէ ինչպէս մարդիկ կը դժուարանան գնահատել կատարուածը: Լուսաւոր էջեր են բացուած մեր ս. եկեղեցւոյ կեանքին մէջ, եւ եթէ կան թերութիւններ, ապա բարի տրամադրութեամբ բոլորով պարտ ենք ծաղկեցնել եկեղեցին: Դատաւորն Աստուած է, եւ մենք մնանք ծառայական կերպի մէջ:

- Գիտնականներ, լրագրողներ, հանրային կարծիք ձեւաւորողներ կը խօսին յետ-քորոնայի ժամանակներուն մասին. կա՞յ այդպիսի բան, ի՞նչ է ձեր կարծիքը Սրբազան հայր:

- Անտարակոյս յետ քորոնայի հետքեր պիտի մնան, բայց այս պահուն դեռ շատ կանուխ է եզրահանգումներ կատարելը: Ժամանակի մէջ բարդութիւններ կը լուծուին, եւ եթէ նոյնիսկ որոշակի նոր դրոյթներ դառնան հետքերը գալիք սերունդներու համար, ապա նոր ժամանակները անկասկած կը համակերպին բոլորին: Յուսալից ենք, սակայն, որ մարդը մնայ պատասխանատու Աստուծոյ տուած կեանքի պարգեւին եւ բնութեան նկատմամբ:

- Ձեր կարծիքով «քորոնա»ն դաս մը եղաւ մարդկութեան համար, կամ առհասարակ այս համաճարակի մարումէն ետք մարդկութիւնը վերատեսութեան պիտի ենթարկէ՞ իր մօտեցումները:

- Քորոնան այսօր, եւ անցեալի բոլոր համաճարակներն ալ, անկասկած մեզ կ'առաջնորդեն անդրադար-

ձումի մը: Մարդը իր բովանդակ կեանքով պիտի ապրի աղօթքով, որ եւ մեզ կը պահէ մշտական ինքնաճանաչումի մէջ, որպէսզի վտանգներու պահին իր մէջ վերածնի յաղթելու ոգին: Մեր աղօթքն է, որ այս դժուարին ու փորձութեան օրերուն մեկուսացումը ընդունինք աղօթքի հրաւեր եւ աղօթենք, ինչպէս Քրիստոս մեկնեց անապատ եւ այնտեղէն վերադարձաւ երկիր՝ սկսելու համար իր աստուածային առաքելութիւնը, յեղաշրջելու մարդուն կեանքը, եւ այն ուղղորդելու դէպի Աստուած:

ՄԲ. ԷԶՄԻԱԾԻՆ

Ժողովուրդներու կեանքին մէջ ծնունդ են առած Սրբութիւն Սրբոցնէր, որոնք Աստուածադրոշմ են եւ որոնք ուղեգծած են նոյն ժողովուրդներու կեանքին ճանապարհը: Սրբութիւն Սրբոցնէրը եղած են հոգեւոր ու բարոյական, ազգային ու հայրենական գաղափարախօսութեանց դարբնոցը: Մեր ազգի կեանքին մէջ Սրբութիւն Սրբոցն է Ս. Էջմիածինը, քանզի Աստուածահիմն այն ներկայութիւնն է, որն իր մէջ կը խտացնէ մեր ողջ պատմութիւնը՝ իր անցեալով, ներկայով ու գալիքին տեսիլքով: Ս. Էջմիածնի Մայր Տաճարը իր անուամբ իսկ կը խորհրդանշէ Աստուծոյ այցը մեր ազգի զաւակաց՝ Լուսաւորիչ հայրապետի տեսիլքով:

Դարերով նուիրականացած է Ս. Էջմիածինը, քանզի անոր Ս. Խորանի առջեւ է ամրագրուած մեր քրիստոնէական հաւատքը՝ Մերոպաշունչ Աստուածաշունչով, Վարդանանց տեսիլքով՝ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց», Սարդարապատի հերոսամարտով եւ դէռ բազում հանգրուաններով իմաստաւորուած ու պատմութիւն դարձած դէպքերով, որոնց առանցք են դարձած տեսլապաշտ հայորդիք՝ հոգեւորական, թէ աշխարհական առաջնորդներ:

Ս. Էջմիածինը մեր ազգի «Մայր դաստիարակն» է եղած իր մշտարթուն ներկայութեամբ: Դարերու ընթացքին իր տիրական ներկայութեամբ ունեցած է բազում վերանորոգութիւններ, բայց անոնցմէ եւ ոչ մէկը հաւասար է իր տարողութեամբ այս օրերուն Վեհափառ Հայրապետի նախաձեռնութեամբ ձեռնարկուած վերանորոգութեանց: Այս վերջին տարիներուն հիմնապէս կը վերանորոգուի Մայր Տաճարը, որն իրապէս

անյետաձգելի աշխատանք մըն էր: Ձեզի ներկայացուած պատկերները յստակօրէն կը բացատրեն վերանորոգչական աշխատանաց տարողութիւնը:

Ի՞նչ է մեզմէ սպասուածը. սերունդներէն մեզի որպէս աւանդ վստահուած Սրբութիւն Սրբոցը փոխանցել զայիք սերունդներուն համազգային աղօթանուէր մասնակցութեամբ, որպէսզի Ս. Էջմիածինը շարունակի մնալ բոլորիս միաւորող սրբազան կառոյցը, որուն մէջ պիտի տեսնենք մեր հոգու պատկերը եւ մեր ինքնութեան արմատը:

- Ս. Էջմիածինը հայուն հոգեւոր հայրենիքն է:

- Ս. Էջմիածինը քրիստոնէայ Հայաստանին կնիքն է:

- Ս. Էջմիածինը կամուրջն է՝ մեզ առ Աստուած առաջնորդող:

- Ս. Էջմիածինը բաբախող սիրտն է հայութեան:

Էական է, որ բոլորս մասնակցենք վերանորոգութեան աշխատանքին՝ մեր հոգու պարտքը կատարելով, ամէն մէկս մեր կարողութեան սահմաններուն ներածին չափով, որպէսզի այն շարունակէ մնալ պատկերը մեր ամբողջականութեան ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Ս. Էջմիածինը մեր ինքնութիւնը բացատրող խորհուրդն է: Ով իր կեանքը կ'ապրի Սուրբ Էջմիածնով, այդ անձը փաստօրէն կը դառնայ մանրակերտը Ս. Էջմիածնի:

Յունուար 24, 2020

Գահիրէ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ՝ «ՀԱՅՈՒ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԱԻԱԶԱՆԸ»

Ս. Էջմիածին - այս անուանումը մեր ս. եկեղեցույ եւ ազգի կեանքին մէջ ունի իր խոր իմաստը: Էջմիածին - կը նշանակէ Աստուծոյ Միածին Որդոյն երկինքէն երկիր այցը մեր հայրենական հողին վրայ, որուն տեսիլքն ունեցաւ Լուսաւորիչ հայրապետը, եւ նոյն տեսիլքին հաղորդակցութեամբ մեր ազգի զաւակունք Քրիստոսի ներկայութեամբ պայմանաւորեցին իրենց կեանքի նոր ընթացքը՝ ապրելու քրիստոնէական հաւատքով, որ կը թելադրէ Քրիստոս դարձնելու մտատիպարը մեր կեանքին, ու կեանքն առաջնորդելու Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող պատգամներով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Կաթողիկոս երբ կը խօսի Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մասին, կը կատարէ հետեւեալ հաստատումը.

«Մեր հոգու առաջ կենդանանում է հայի հոգեւոր վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հսկայ անձնաւորութիւնը իւր կենսաբեր գործունէութեամբ եւ հետեւանքներով: Նա անձեռագործ մի արձան կանգնեցրեց աւելի տեւական ու աւելի խօսուն, քան պղինձն ու երկաթը, բայց եւ այդ անձեռագործ արձանի յայտարար հիմնեց այն անշուք շէնքը, որը, սակայն, հայի վերածնութեան աւագանն է եղել դարէ ի դար»:

Ս. Էջմիածինը՝ «Հայի վերածնութեան աւագանը»: Յովսէփեանց Կաթողիկոս Ս. Էջմիածնի աստուածակերտ տաճարին մէջ կը տեսնէ Քրիստոսի ներկայութիւնը եւ Անով մեր ազգի կեանքին մէջ ուղեգծուած ճանապարհը նոր կեանքին: Հայոց քրիստոնէական

հաւատքին մէջ ներթափանց կեանքով ապրած Կաթողիկոսը մեզ կը յիշեցնէ Տիրոջ խօսքը՝ այն դարձնելու համար էութիւնը մեր կեանքին, եւ նոյն խօսքով մեր կեանքը դարձնելու մանրակերտը Ս. Էջմիածնի. *«Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ»* (Յովհ. 3):

Այս խօսքի մէջ մենք կ'ըմբռնենք այն գերագոյն ճշմարտութիւնը, որ ի Քրիստոս մկրտութեամբ մենք կը դառնանք նոր: Քրիստոսի մէջ կը գտնենք ճշմարիտ կեանքի աղբիւրը, «մի նոր եւ ճշմարիտ կեանքի սկիզբ»:

Մեր խօսքը կ'ուզենք կառուցել մի քանի հիմնական խորհուրդներու վրայ: Առաջինը, Ս. Էջմիածնի մայր լինելու հանգամանքն ու առաքելութիւնն է: Այս ուղղութեամբ անփոխարինելի մտածումներ ու բացատրականներ հասած են մեզի:

«Նա (Ս. Էջմիածինը) հիմնուած էր հոգեւոր դաստիարակութեան մայր լինելու, նորանից պիտի բխէին Աւետարանի լուսոյ ճառագայթները՝ հայութեան սրտի խորքերը լուսաւորելու» (Գարեգին Յովսէփեանց):

Հոգեւոր Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոս ինք եւս կը շեշտէ Ս. Էջմիածնի մայր լինելու հանգամանքին վրայ հետեւեալ բառերով. *«Քրիստոնէական հաւատքի վաւերականութիւնը, պատմականութիւնը եւ կենդանութիւնը մեր ժողովուրդի գիտակցութեան մէջ երաշխաւորուած են ու խորհրդանշուած միմիայն մեր ազգային մայր եկեղեցիով եւ աստուածակառոյց Սուրբ Էջմիածնով, Մայր Աթոռիս՝ մեր ս. եկեղեցու միւս երեք նուիրապետական-տեղական Աթոռների հետ միութեան, հաղորդակցութեան եւ եղբայրական գործակցութեան պայմաններում»:*

«Մեր եկեղեցու եւ ազգի պատմութեան վերջին մօտ երկու հազար տարիների ընթացքում, սուրբ Աւետա-

բանի լոյսի ճառագայթումը ու արտայայտութեանց բոլոր ձևերը եղել են ու մնացել ստեղծագործորէն ինքնուրոյն: Հայ գիրն ու լեզուն, հայ հոգեւոր գրականութիւնն ու բանաստեղծութիւնը, միջնադարեան նկարչութիւնն ու երաժշտութիւնը շաղախուած են Քրիստոսի Աւետարանի լոյսով ու հանդիսանում են նոյնքան վաւերականօրէն ազգային արժէքներ, ինչքան քրիստոնէական: Հայաստանեայց Առաքելական եկեղեցին՝ սուրբ Աւետարանի ոգին ու քրիստոնէական մտածողութիւնն ու զգայնութիւնը վաւերականօրէն արտայայտող ինքնատիպ ոճերից մէկն է համաքրիստոնէական պատմութեան հորիզոնի վրայ: Այս ժառանգութիւնը մենք պէտք է պահպանենք եւ պիտի պահպանենք, որովհետեւ առանց դրան՝ քրիստոնէութիւնը պիտի դառնար նուազ հարազատ հայոց հոգիներին»:

Ս. Էջմիածինը ծննդավայրն է մեր ս. եկեղեցւոյ: Ս. Էջմիածինը աստուածադրոշմ այն ներկայութիւնն է, որն ամենալայն ու ամենէն ամբողջական իմաստով իր մէջ կը բովանդակէ ազգի մը վաւերականութիւնը, ամենէն էական որոշիչները՝ հաւատքին ճառագայթումը, հայրենական գիտակցութիւնը, մշակոյթի ըմբռնողութիւնը: Հայց. Եկեղեցւոյ սիրտն է Ս. Էջմիածինը եւ Յովսէփեանց Կաթողիկոսի բառերով՝ «Հայի վերածնութեան աւագանը»:

Ս. Էջմիածինը կը բացատրէ Աստուծոյ այցը մեր մայր հողի վրայ, եւ Անոր ներգործութիւնը մեր ազգի կեանքին մէջ: Մենք պիտի գուրգուրանք Աստուծոյ կողմէ մեզի տրուած մեծ պարգեւին՝ Ս. Էջմիածին, որը մեր առջեւ կը բանայ ճանապարհը յաւերժութեան:

Ժամանակներու հոլովոյթին մէջ նոր պատգամ կը հաղորդէ Ս. Էջմիածինը մեր ազգի զաւակաց, մանա-

ւանդ այսօր, երբ ամէն վայրկեան վտանգ կը սպառնայ մեր երկրին եւ ժողովուրդի գոյութենականութեան:

Պատմութեան ամբողջ ընթացքին եւ այսուհետեւ Ս. Էջմիածինը մեր կեանքը ապահովագրող աստուածային ներկայութիւնը կը շարունակէ մնալ:

Ս. Էջմիածնի յաւերժականութիւնը խորապէս զգացած են մեր նախնիք, եւ այդ այնքա՛ն գեղեցկապէս արտայայտուած է Հայց. Եկեղեցւոյ եւ մեր ազգի մեծանուն կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեան՝ Հայոց Հայրիկը իր «Հրաւիրակ Երկրին Արարատեան»-ի նուագ երրորդին մէջ.

*«Ահա զոր անդ խոստացայ, աստ կատարեմ
սիրողապէս,
Առեալ զձեզ, ո՛վ մանկտիք, տանիմ անդրէն՝
Վաղարշապատ
Ի տաճարն աստուածակերտ, ի Մայրն մեր
ամենածին,
Ի վեհ եւ գերապանծ Աթոռ Հայոց Լուսաւորչին:
Աստանօր ցուցաւ ահա տեսիլն այն մեծ
զարմանասքանչ
Հսկողին զիշերածամ առ փրկութեան գերեալն
նզույս,
Բացումն խորանաշէն երկնից յարկին
հաստատութեանն,
Իջանել լուսաւոր առն ուռն ի ձեռին ոսկիաձոյլ,
Որ բախեալ զյատակ երկիս հնչեաց թնդիւն
ի խոր անդունդս»:*

Իր խօսքին մէջ Խրիմեան Հայրիկ կը մարգարէանայ՝ Ս. Էջմիածնի մէջ տեսնելով յաւերժականութիւնը մեր ազգին, քանզի անդ Աստուած ներկայ է.

*«Ձի սա է լեառն ընդ որում Տեառն հաճեալ յերկնուստ
անտի, էջ բոլոր աստուածութեամբն եւ բնակեցաւ ի սմա
ի սպառ, խոստացաւ այլ եւս աստէն ոչ բաժանուիլ ի
յաւիտեան»:*

Մարտ 10, 2020

“ԷՋ ՄԻԱԾԻՆ Ի ՀՕՐԷ Ի ՍԻՐՏՍ ՁԵՐ”

(Կոչ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարի Նորոգութեան)

Փառք Ամենակարողին, որ ողջ հայութեան նուիրական հոգեւոր կեդրոնի՝ Սբ. Էջմիածնի Կաթողիկէի, սիրտը կը բաբախէ եւ անընդհատ իր սիրոյ պատգամը կը յղէ իր զաւակաց, նոյնիսկ այս օրերուն, երբ ան իր դռները փակած է անյետաձգելի աշխատանքներու բերումով:

Իրազեկ էք արդէն, որ բաւական երկար ժամանակ է ինչ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարը վերանորոգութեան ընթացքի մէջ է: Վեհափառ հայրապետի տնօրինումով մենք նշանակուած ենք նորոգութեան նուիրահաւաքի ընդհանուր պատասխանատուի պարտականութեան եւ ամիսներ շարունակ լծուած ենք աշխատանքի, որպէսզի համազգային մասնակցութեամբ կարելի ըլլայ գոյացնել վերանորոգութեան համար սպասուած պիտւոճէն:

1700 եւ անցի տարիներ շարունակ Սբ. Էջմիածինը իր Մայր Տաճարով եղած է մեր ժողովրդի զաւակները իրար կապող ու միացնող հոգեւոր մագնիսը: Դարերու ընթացքին ի՞նչ փորձութիւններ ու վտանգներ են հասած Սբ. Էջմիածնին, եւ սակայն Աստուծոյ Աջը պահպանած է Սրբութիւն Սրբոցը մեր ազգի, որպէսզի այն դառնայ Մայրը բոլոր սերունդներու համար:

Մեր պատմութեան ամենէն կարեւոր հանգրուանները ծնունդն են Սբ. Էջմիածնի: Այնտեղ է ծնունդ առած քրիստոնէայ Հայաստանը, այնտեղ է թարգմանուած Աստուածաշունչ Մատեանը, Վարդանանք իրենց մէջ են գտած ճանապարհն ու նպատակը իրենց կեանքին՝ Սբ. Էջմիածնի Խորանին վրայ պատարագուած

Քրիստոսի հաղորդակցութեամբ: Ան դարերով եղած է լոյսի եւ յոյսի փարոսը անթիւ սերունդներու: Սբ. Էջմիածնի լուսոյ Խորանէն մեզի կը բաշխուի Սբ. Միւռնը, որով կը դրոշմենք մեր մանուկները:

Մայր Տաճարը մշտաբարուն ներկայութիւնն է եղած անցնող սերունդներուն, ներկայութիւնը այսօրուան եւ գալիքին:

Սբ. Էջմիածինն այն սրբազան տեղն է ուր Աստուած իջաւ եւ հանդիպեց մեր ժողովուրդին, եւ այդ պահէն սկսած, մենք դարձանք առաջին քրիստոնէայ պետութիւնը աշխարհի երեսին:

Սբ. Էջմիածինը խորհուրդն է մեր գոյութեան: Խոնարհուենք Սբ. Էջմիածնի խորհուրդին առջեւ, որպէսզի Աստուած բարձրացնէ եւ առաջնորդէ մեր ազգը դէպի յաւերժութիւն:

Սբ. Էջմիածին, այս սրբանուէր անունն իր մէջ կ'ամփոփէ մեր ազգային լինելիութիւնը պայմանաւորող բոլոր հիմնական որոշիչները՝ մեր հաւատքն առ Աստուած, մեր սէրն առ հայրենի հողը, պատմութեան զգացողութիւնը, ներկային ոգին եւ տեսիլքը վաղուան:

Հայոց սրբազան լեռ Արարատի դէմ կանգնած մշտաբարուն հսկիչն է Սբ. Էջմիածինը:

Հայ Եկեղեցւոյ միութիւնը եւ հայ հաւատացեալ ժողովրդի ազգային միասնութիւնը հնարաւոր է հաստատել հայրենի հողի վրայ խարսխուած՝ Մուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան վէմին վրայ, որուն հաւասարագոր ուրիշ հեղինակութիւն կամ կեղբուն չէ եղած եւ չի կրնար ըլլալ:

Ինչ է որ կը կատարուի այսօր հիմնապէս կը վերականգնուի Սբ. Էջմիածնի Մայր Տաճարը: Այս մեծածախս առաքելութեան մէջ մեր բոլորի մասնակցութիւնը էական է՝ ոչ միայն գոյացնելու համար համապատասխան

պիտճէն, այլեւ՝ առաւել միաւորելու համար մեր ազգի զաւակները:

Սբ. Էջմիածնի Մայր Տաճարի վերականգնումի աշխատանքին մէջ մեր մասնակցութիւնը կոչում մըն է Աստուծմէ: Պատասխանենք Աստուծոյ կանչին քաջութեամբ ու համոգումը ունենանք, որ այդ առանձնաշնորհում մըն է:

Միբելի հայորդիք, պատմութեան մէջ քիչ անգամ կը պատահի, երբ նման առանձնաշնորհումը կը տրուի մեզ, ուստի մեր հոգու պարտքը կատարենք հպարտութեամբ, գիտակից հաւատքով եւ այն մտածումով, որ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգութեան նուիրական պարտականութիւնը մերն է:

Մայր Տաճարի վերանորոգութիւնը մեր ե՛ւ պարտքն է, ե՛ւ պատիւը:

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԼՈՅՍԻՆ ՏԱՆՈՂ ԴՈՒՌԸ

«Եկեղեցին անարատ Մայր է եւ անկէ կը ծնինք լոյսի եւ ճշմարտութեան զաւակներ, եւ ան մեզի համար կեանքի լոյս է եւ անով կը գտնենք հոգիի փրկութիւնը, եւ ան մեզի համար արդարութեան ճամբայ է եւ անով կ'ելլենք մեր Երկնաւոր Հօր Քրիստոսի մօտ»:

Դոնբացէքի արարողութիւն

Դոնբացէքի արարողակարգէն քաղուած այս հաստատումը արդարեւ կը խօսի եկեղեցւոյ առաքելութեան մասին: Ս. Մկրտութեամբ հոգեւորապէս կը վերածնինք, որպէս որդեգիր Աստուծոյ, որպէս *«լոյսի եւ ճշմարտութեան զաւակներ»:*

«Լոյսի եւ ճշմարտութեան զաւակներ» կը դառնանք, երբ կը հետեւինք Քրիստոսի ու Անոր Աւետարանին: Եկեղեցին աղբիւրն է լոյսի, քանզի եկեղեցւոյ մէջ դէմ յանդիման ենք Աստուծոյ, ու Անոր ներկայութիւնը մեզի կը ներշնչէ հոգւոյ փրկութիւնը ու մեր առջեւ կը բանայ ճանապարհը արդարութեան, որը եւ մեզ կ'առաջնորդէ երկնաւոր Հօր՝ Քրիստոսի մօտ:

Եկեղեցին կամուրջն է Աստուծոյ եւ մարդուն միջեւ, եկեղեցւոյ մէջ ըլլալ կը նշանակէ բարձրանալ առ Աստուած: Եւ մարդուն եւ այս պարագային քրիստոնէայի կեանքին նշանաբանը պիտի ըլլայ ընտրել դէպի Աստուած տանող ճանապարհը:

Քորոնավիրուսի համաճարակի մեկուսացման օրերը անտարակոյս իւրաքանչիւրիս կեանքը այլակերպեց ու լուսաւորեց առաւել Աստուածգիտութեամբ՝ ունենալու ինքնաճանաչման գիտակցութեան մնայուն անդրադարձումը մեր ապրած կեանքի ընթացքին, որպէսզի

մեր մէջ չնուազի Աստուծոյ սէրը, եւ հոգւոյ շնորհներով ապրելու կամքն ու ոգին:

Քորոնավիրուսի համաճարակը աշխարհի կեանքը շատ կտրուկ կերպով նոր ընթացքի մը մէջ դրաւ: Երանի թէ մարդիկ միշտ մօտիկ մնան Աստուծոյ, հոգեւորը վեր դասեն նիւթական արժէքներէն, որոնք կը պղտորեն մեր միտքն ու հոգին՝ հեռու պահելով մեզ հոգեւոր կոչումէն, որուն գիտակցութեամբ կ'ապրինք իմաստաւորեալ կեանք մը: Քորոնավիրուսի մեկուսացման այս օրերուն մարդկային կարողութեանցս ներածին չափով ջանք չխնայեցի՝ ունենալու աղօթքի ու ներհայեցողութեան մասնաւոր առիթներ, որոնք իմ մէջ կրկնապատկեցին տոկալու ու համբերելու չափերը: Անկենդօրէն եղան ժամանակներ, երբ մարդկային տկար էութիւնս յաղթեց, եւ ունեցայ ցրումի պահեր, բայց փառք Աստուծոյ, շատ արագ հեռու վանեցի ինձմէ այդպիսի պահեր: Եւ անկասկած բոլորս ալ մեր հոգու մէջ ունինք զօրութիւն, զորս կը բխի ու կը զօրացնէ մեզ:

Փորձութեան այս օրեր շուտով կ'անցնին, եւ երբ դէպի բնական կեանք կը վերադառնանք, հետեւինք Դոնբացէքի արարողութենէն քաղուած պատգամին, որպէսզի մեր մէջ նորոգենք կոչումը քրիստոնէական, ուխտը՝ եկեղեցւոյ ծառայութեան, եւ մեր հոգու հայեացքն ուղղենք առ Աստուած: Այս իմաստով անցնող օրերն ու ամիսները ինձ համար եւ վստահօրէն շատերու համար եւս եղան լոյսի օրեր:

Մայիս 24, 2020

«ԸՆԿԱԼՑԻ ԶՔԵԶ, ՏԷ՛Ր»

Այս երեք բառերուն մէջ է ամփոփուած խորհուրդը քահանայութեան, որ կը բացատրէ, թէ Աստուած է մեզ կանչողը ծառայութեան, Աստուած է, որ մեզ կը հաստատէ քահանայութեան կարգին մէջ:

Այս խօսքը կը քաղենք Ձեռնադրութեան Մաշտոցէն, որուն մէջ կը կարդանք այն հիմնական ճշմարտութիւնը, որ քահանայութիւնը կ'ընդունինք Ս. Հոգւոյ իշխանութեամբ եւ շնորհներով, եւ այդ պահէն սկսեալ մեր կեանքի ճանապարհը կ'առաջնորդենք դէպի Աստուած:

Ուղիղ քառասուն տարիներ առաջ, Կիրակի, 8 Յունիսին, Ս. Էջմիածնի Տօնին օրը, հոգեւոյս Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսի ձեռամբ ստացայ քահանայական ձեռնադրութիւն եւ օծում Մայր Տաճարի աւագ խորանին վրայ: Այդ օրը կրնամ թարգմանել որպէս կարեւորագոյն հանգրուանը իմ Աստուածատուր կեանքին, որովհետեւ հաւատով ու երկիւղածութեամբ ընդունեցի կոչումն Աստուծոյ կողմէ եւ պատասխանեցի ուրախ սրտով:

Քահանայական ձեռնադրութեան եւ օծման օրէն անցած է արդէն քառասուն տարի: Այսօրուան ուխտի պատարագը մտածել կու տայ ինձ, թէ ինչպէս արժեւորեցինք քառասուն տարիներու քահանայական կեանքը: Անշուշտ գիտենք անցնող քառասուն տարիներու մէջ ամփոփուած աշխատանքը, եւ սակայն խոնարհաբար կրնանք ըսել, որ դեռ աւելին կրնայինք իրագործել, որովհետեւ Աստուած իւրաքանչիւրին պարգեւած է անսահման շնորհներ ու կարողութիւններ, որոնք պարտ ենք կեանքի կոչել: Բայց քանի որ մարդ ենք եւ տկար էութեամբ, ապա միշտ չէ, որ մեզի վստահուածը կրցանք

կատարել սպասուածին չափով: Կ'ուզենք, սակայն, անկեղծ սրտով ու համարձակ յայտարարել, որ քառասուն տարիներու մեր ծառայական կեանքը միշտ փորձեցինք հաւատքի կեանքով արժեւորել՝ Աստուծոյ խօսքին քարոզիչը դառնալով, խոնարհ հովիւի սպասաւորութեամբ, հայրենական ծառայութիւններով իմաստաւորելով մեր կեանքը, արդիւնաւորելով մեր քահանայութիւնը բազմաբնոյթ գործունէութեամբ առաջնորդելու մեր հաւատաւոր ժողովուրդը: Եւ երբ ի մի կը բերենք կատարուած աշխատանքը, ապա տեսնելով հանդերձ արձանագրուած յաջողութիւնները, որոշապէս կը գտնենք նաեւ թերիներ, որոնք պէտք է լրացնենք:

Մարդու կեանքին մէջ եւ այս պարագային մեր քահանայական կեանքի ճանապարհին, ձեռնադրութեան եւ օծման 40-ամեակը, այո, առիթ է տօնախմբութեան, բայց առաւելաբար առիթ է նոր խոստումներու: Ամենէն առաջ մեր աղօթքն է առ Աստուած, որ մշտապէս առաջնորդեց մեզ, որպէսզի մեր հոգու մէջ կրենք իր աստուածային սէրն ու իմաստութիւնը, եւ հասկնալու խորապէս, որ քահանայութիւնը տիտղոսներով ու աստիճաններով չի կրնար իր ճշմարիտ ուղին գտնել, այլեւ միայն ու միայն խոնարհ ծառայութեամբ, քանզի ծառայութիւնն է պսակը կեանքին:

Մեր սրտի աղօթքներուն մէջ կը հաստատենք ամբողջական զօրակցութիւնը մեր ծնողաց, մեր հոգեւոր եղբայրներուն ու հաւատաւոր ժողովուրդին, քանզի եթէ աճեց ու զարգացաւ քահանայութիւնը մեր էութեանը մէջ, ապա այդ կը պարտինք բոլորին, որոնց մէջէն Աստուած մշտապէս խօսեցաւ մեզի հետ: Հաւատացած ենք կեանքի փորձով, որ հաւատաւոր ժողովուրդը անձին մէջ կը խմորէ քահանան ու հովիւը, եւ կարծէք կո-

չում մըն ալ ժողովուրդէն կը ստանանք, որուն պէտք է պատասխանենք սիրով ու խոնարհ սրտով:

Իրօք դժուար է մէկ խօսքի մէջ ամփոփել քառասուն տարիներու կեանքի ճանապարհն ու առաքելութիւնը: Միայն պարզ բառերը գուցէ բաւարար ըլլան արտացոլելու կամ ամփոփելու որդեգրուած նպատակը կեանքին:

Այսօր, քառասուն տարիներ յետոյ, երբ յետադարձ ակնարկ մը կը նետենք անցած կեանքի ճանապարհի վրայ, կրնանք հետեւեալը հաստատել. ինչպէս մեր մանուկ տարիներուն, եւ անցնող ամբողջ շրջանին Աստուծոյ սիրովը ապրեցանք, առաջնորդուեցանք հաւատաւոր հոգեւորականներու կեանքի օրինակով, մեր սիրտը բացինք ժողովուրդին, եւ ժողովուրդը դարձաւ մեր մեծ ընտանիքը, սիրեցինք ծառայել ու աշխատիլ Ս. Էջմիածնի ու Մայր հայրենիքի տեսիլքով, եւ գիտենք, որ Աստուած Ինք էր ճշմարիտ դատաւորը, որուն եւ կը ներկայացնենք հաշիւը մեր քահանայական կեանքին ու առաքելութեան, եւ ոչ այն մարդկանց, ովքեր աստուածներու դերը կ'ուզեն կատարել կէտծ դատաւորներու պաշտօնը տալով իրենք իրենց, եւ որոնք կը պղտորեն մարդկանց միտքն ու հոգին՝ խանգարելով նաեւ եկեղեցւոյ կեանքն ու անդորրը:

«Ընկալցի գՔեզ, Տէ՛ր»:

Միւրեւի բարեպաշտ հաւատացեալներ, ձեր աղօթքներուն ընդէջէն Աստուած մեզ կը կանչէ, որպէսզի շարունակենք մնալ հաւատարիմ մեր ծառայութեան մէջ եւ խոնարհ սրտով ձեր բոլորին սպասաւորն ու հովիւր:

Քահանայութիւնը ի վերուստ տրուած այն շնորհն է, որ անջնջելի է ու ամբողջ կեանքով այն կ'ապրի ձեռնադրութիւն եւ օծում ստացած անձին մէջ: Ահա այդ գիտակցութիւնը կը խոնարհեցնէ մեզի, որպէսզի վերանորոգեալ ուխտով շարունակենք սիրել Աստուած,

եկեղեցին՝ առաքելութիւնը մեր կեանքին, եւ դառնալ սիրոյ կամուրջ Աստուծոյ եւ ձեր միջեւ:

Մեր ջերմ սէրն ու խոնարհումը հաւատաւոր մեր ժողովուրդին, մեր երախտագէտ սիրոյ զգացումները մեր հոգեւոր եղբայրներուն, եւ այսօր մեր աղօթքը՝ մեր հոգեւոր ծնողին Վազգէն Ա. Ամենայն հայոց կաթողիկոսի հոգու խաղաղութեան համար, որուն հոգիէն ճառագայթող սէրը պայծառակերպեց մեր կեանքը՝ այն դարձնելով քահանայակերպ ծառայութեամբ լեցուն կեանք:

Նախախնամութիւնն է երեւի, որ հոգեւոյս Վազգէն Ա. Վեհափառը մեր քահանայական ձեռնադրութիւնը կատարեց Ս. Էջմիածնի Տօնին, որպէսզի Ս. Էջմիածնի խորհուրդով օծուէր նաեւ մեր հոգին, քանզի Ս. Էջմիածնի խորհուրդին մէջ մենք կը տեսնենք Աստուծոյ այցը մեր Մայր հողին՝ Հայաստանին:

Ս. Էջմիածնի խորհուրդին տեսիլքն ու գիտակցութեան ոգին էր, որ առաջնորդեց Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը եւ Ս. Սահակ Պարթեւ Հայրապետը, ստեղծելու համար հայոց այբուբենը՝ յաւերժացնելու համար հայերէնը, որ ինչպէս լորտ Պայրըն կ'ըսէ. «*Հայերէնը Աստուծոյ հետ խօսելու լեզուն է*»: Ս. Էջմիածնի խորհուրդն է, որ Վարդանանց քաջարի զինուորներու եւ Ղեւոնդեանց քահանայից ու Շուշաններու հոգիներուն մէջ ծնունդ տուաւ ընկալելու պաշտպանութեան ու զոհաբերութեան սէրը հաւատքի ու հայրենիքի համար, որ դարձաւ եռանդը մարտունակութեան Սարգստապատի հերոսներուն, որոնք Ս. Էջմիածնի Մայր Տաճարի դօղանջներու առաջնորդութեամբ յաղթանակի ոգով մեկնեցան կռուի դաշտ եւ մեզի վստահեցան ներկայ Հայաստանը: Ահա այս բոլորին եւ տակաւին մեր ազգի ու ս. եկեղեցւոյ կեանքի բոլոր կարեւորագոյն

հանգրուաններուն Ս. Էջմիածինը դարձաւ ուժակա-
նութեան ու ստեղծագործ ոգու հաղորդիչը: Ս. Էջմիա-
ծինը հայ մարդու հոգու ծննդավայրն է եւ անկասկած
աշխարհի չորս ծագերուն ցրուած հայու բեկորներուն
Աստուած պիտի առաջնորդէ դէպի Ս. Էջմիածին, քան-
զի Ս. Էջմիածինը սիրտն է ողջ հայութեան, որուն մէջէն
կը հոսի կեանք ներարկող արիւնը յաւերժական Հա-
յաստանի քարտէզը ներկայացնող երակներուն մէջ,
որոնք քաղաքներն ու գիւղերն են մեր, խոպանացած
մեր հողերը, որոնց մէջ պետք է թափուի նաեւ քրտինքը
հայ մարդուն:

Ս. Էջմիածնի խորհուրդը դարձուցէք ոգին ձեր գա-
ւակաց: Ս. Էջմիածնի խորհուրդէն պարպուած հայը
որք է աշխարհի երեսին: Ս. Էջմիածնի խորհուրդին առ-
ջեւ խոնարհած մնանք, քանզի այն ոչ միայն Մայրն է
ողջ հայութեան, այլեւ՝ Միոնի բարձունքն է գալիք բոլոր
սերունդներուն համար, լոյսի ու յոյսի աղբիւրը, յաղ-
թանակի Փարոսը՝ Նոր Հայաստանին ու ազատատենչ
Արցախին:

Ս. Էջմիածնի Տօնն է այսօր: Եւ ինչպէս պիտի նշա-
նաւորենք ու կարեւորենք այս տօնին իմաստն ու առա-
քելութիւնը: Միասնական պիտի յայտարարենք, որ հայ
քրիստոնէայի հաւատքին տօնակատարութիւնը խոր-
հրդանշող տօն է Ս. Էջմիածնի տօնը: Ազգերը կ'ապրին
սրբութիւններով: Եւ մեր ազգի կեանքի մէջ Ս. Էջմիա-
ծինը հայրենական հողին վրայ խարսխուած Աստուա-
ծահիմն սրբութիւն սրբոցն է: Պատմութեան ընթացքին
քանի-քանի՝ անգամներ թշնամին ասպատակած է Հա-
յաստան, քարուքանդ ու աւերակի վերածած մեր ս. եր-
կիրը, բայց Աստուծոյ աջը հրաշագործ Ս. Էջմիածինը
պահպանած է, որպէսզի Մայրը խօսի գալիք սերունդ-
ներուն:

Պատմական այս մեծ տօնին մենք մեր հայեացքն ուղղենք դեպի Ս. Էջմիածին: Աղօթենք, որ Աստուած անսասան պահե՛ Ս. Էջմիածինը, իր գահակալով ու ողջ հոգեւորականաց դասով ու իր աւագանէն մկրտուած ու կնքուած հաւատաւոր զաւակներով, որոնց ճակատներուն դրոշմուած միւտոնը իր մէջ կը խտացնէ հաւատքը մեր նախնեաց եւ կը լուսաւորէ ճանապարհը նոր կեանքին:

«Ընկալցի գթեզ, Տէ՛ր»:

Փառք քեզի, Տէ՛ր Աստուած, որ կանչեցիր նաեւ մեզ Քու անդաստանիդ մէջ ծառայելու եւ զգալու քաղցրութիւնը Քու աստուածային սիրոյն: Այսօր անգամ մ'ես կը պատասխանենք Քու կանչին, որպէսզի խաչին խորհուրդով շարունակենք ուղեգծել մեր կեանքը:

Յունիս 8, 2020

ՀՈԳԻՒՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Քանի որ մարմնի խորհուրդը մահն է, իսկ հոգիի խորհուրդը՝ կեանք է և խաղաղություն. Քանզի մարմնի խորհուրդը թշնամություն է Աստուծոյ դէմ, որովհետեւ չի հնազանդիր Աստուծոյ օրէնքին, եւ ոչ իսկ կրնայ: Անոնք, որ մարմնի իշխանութեան տակ են, չեն կրնար հաճելի ըլլալ Աստուծոյ» (Հռովմ. 8. 6-8):

Պօղոս Առաքեալի այս խօսքերը կը քաղենք իր Հռովմէացոց ուղղուած նամակէն, եւ մեզի համար յստակ կը դառնայ, որ երբ խօսքը կը վերաբերի մարմնի խորհուրդին, այն կը վերաբերի նիւթին եւ ժամանցելիին, իսկ երբ խօսքը կը վերաբերի հոգիի խորհուրդին, ապա նոյն խօսքը կը վերաբերի Քրիստոսի, որուն աշխարհ գալովը մեղքը պարտութիւն կրեց:

Մեր առջեւ բացուած երկու ճանապարհ կայ. մէկը՝ մարմնի խորհուրդով գծուած ճանապարհն է, որը մեզ կ'առաջնորդէ դէպի մահ, իսկ միւսը՝ հոգիին խորհուրդով գծուած ճանապարհն է, որը մեզ կ'առաջնորդէ դէպի Աստուած:

Աւելի պարզ խօսքերով եթէ ուզենք բացատրել Առաքեալի նամակէն քաղուած այս պատգամը, ապա պէտք է ներկայացնենք հետեւեալ բացատրութիւնը. նիւթական բոլոր արժէքները՝ ոսկի եւ արծաթ, հարստութիւն ու ազահութիւն մեզի կը ներկայանան որպէս մարմնական խորհուրդ, եւ որոնք կորնչական են եւ ժամանակի հետ կու գան ու կ'անցնին, մինչդեռ հոգեւոր բոլոր արժէքները մեզի կը ներկայանան Քրիստոսի կեանքով ու Անոր քարոզած Աւետարանով, որպէսզի

կերտենք անկորնչելի հոգեւոր հարստութիւն, որը հաճելի է Աստուծոյ:

Այս օրերուն բոլորս ալ աւելիով մտածեցինք Աստուծոյ մասին, աղօթեցինք Աստուծոյ եւ կատարեցինք կամքն Աստուծոյ, նաեւ նորոգելով մեր հաւատքի կեանքը: Հետեւաբար, նոյնիսկ համաճարակի այս օրերուն, փորձութեան այս ժամանակի ընթացքին պէտք է տեսնել Աստուծոյ միջամտութիւնը մեր կեանքի մէջ: Թերեւս մեր կեանքի բնականոն ընթացքը խանգարուեցաւ, բայց միաժամանակ առիթը ունեցանք աւելի մօտենալու Աստուծոյ, աւելիով վայելելու մեր ընտանիքներն ու հարազատները եւ կատարելու խոստումը՝ կեանքն ապրելու հաւատքով ու գիտակից արարքներով:

Եւ մեր այսօրուայ պատգամով փառք կու տանք Աստուծոյ, որ առաջնորդեց մեր թեմի հոգեւորականները, որոնք հազարումէկ մօտեցումներով կեանքի անբնական պայմաններու մէջ շարունակեցին իրենց եկեղեցանուէր առաքելութիւնը՝ ի մխիթարութիւն մեր ժողովուրդին:

Սիրելիներ ի Քրիստոս, այսօրուայ Աւետարանի դասը մեզի կը պատգամէ ու կը վերյիշեցնէ, որ կեանքն ապրինք Քրիստոսի հետ, որովհետեւ, ինչպէս Առաքեալը կը յիշեցնէ մեզ, Քրիստոսով կեանք տուող հոգիին օրէնքը կը փրկէ մեզ մեղքի ու մահուան օրէնքէն: Իսկ ինչ որ այսօր կը տեսնենք աշխարհիկ կեանքի մէջ՝ բացակայութիւնն է Քրիստոսի սիրոյն ու երկնային իմաստութեան:

Յունիս 27, 2020

«ՏԷ՛Ր, ԲԱՐԻՕՔ Է ՄԵԶ ԱՍՏ ԼԻՆԵԼ»

Քրիստոսի երկրաւոր կեանքի հանգրուանները ճշմարտապէս աստիճաններ են, որոնք մեզ կը տանին դէպի Աստուած, դէպի սրբութիւն, դէպի ճշմարիտ կեանք: Այսօր Քրիստոսի պայծառակերպութեան Տօնն է, որը կը հրաւիրէ մեզ միանալու մեր Տիրոջ, որպէսզի իր աշակերտներուն հետ բարձրանանք Թափօր լեռ ու Անոր աղօթահրաւեր պայծառակերպութեան խորհուրդին հաղորդ դառնանք: Ինչպէ՞ս բացատրենք Քրիստոսի պայծառակերպութիւնը պարզ բառերով: Աղօթքի հրաւերն է այդ՝ ուղղուած բոլորիս: Վարդապետը, իր իսկ աղօթանուէր կեանքի օրինակը տուաւ իր երեք աշակերտներուն՝ Պետրոսին, Յակոբոսին ու Յովհաննէսին, որպէսզի աղօթքի կեանքը որդեգրէին ու աղօթքի առաջնորդութեամբ կարող դառնային այլակերպել ու պայծառակերպել իրենց կեանքը: Վարդապետը Իր աղօթքին մէջ պայծառակերպեց իր էութիւնը, եւ ինչպէս Աւետարանը մեզ կը հաղորդէ. *«Իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան»*: Եւ աշակերտները ի տես այս հրաշքին Պետրոսի շրթներով արտասանուած այս խօսքը կրկնեցին. *«Տէ՛ր, բարւօր է մեզ աստ լինել»*:

Քրիստոսի այլակերպութիւնը իր աղօթքէն բխած ու ճառագայթող լոյսն էր, լոյսը՝ իր էութեան, սրբութիւնը իր հոգիին եւ ամենէն կարեւորը՝ մարդուն կեանքը հրաշագործող խորհուրդին հրաւերն ու նոյնին ներթափանցումը բոլորիս հոգիներուն մէջ: Եւ ի տես կատարուածին Երկինքէն ձայն մը դարձաւ նոր կեանքին կոչը՝ ուղղուած աշակերտներուն. *«Այս է իմ սիրելի Որդիս, որուն Ես հաճեցայ, Անոր մօտիկ ըրէք»*:

Սիրելի՛ք, Քրիստոսի այլակերպութեան ու պայծառակերպութեան պատկերը կը կրկնուի նաեւ իւրաքանչիւրիս կեանքին մէջ, երբ միութիւն ենք հաստատած Քրիստոսի հետ, մեր կեանքի ճանապարհորդութեան Առաջնորդ ենք ընտրած Աստուածորդին ու մանաւանդ աղօթակից ենք Քրիստոսի: Ահա այդ ժամանակ կը պայծառակերպենք նաեւ մեր հոգեւոր կեանքը եւ մեր էութեանը մէջ կը զգանք ու կ'ապրինք ծնունդը նոր մարդուն:

Այսօր, երբ աշխարհը բազում փորձութիւններու բովէն կ'անցնի, Ճիշդ է, որ մարդը կը զգայ անգոր ու տկար, բայց երբ անձանձրոյթ կը յարատեւենք աղօթքի մէջ, ահա այն պահուն կը տեսնենք Քրիստոսի լուսաւոր ներկայութիւնը եւ աւելին՝ այլակերպութիւնը մեր էութեան: Աղօթքը ոսկի բանալին է, որը կը բանայ մեր սրտին դուռը, որպէսզի Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ զրահաւորուած՝ դառնանք նոր մարդ, նորովի հաւատքով, հզօր տեսիլքներով, մեր մէջ խեղդելու համար չարին խորհուրդներն ու ծնունդ տալու բարիին, ինչ որ հաճելի է Աստուծոյ աչքին եւ ընդունելին մարդկանց համար:

Արդ, սիրելիք, կեանքն ապրինք այնպիսի եղանակով մը, որ իւրաքանչիւր օր ու ժամ դարձնենք լուսաւորեալ կեանք, պայծառակերպուած կեանք, սրբութեամբ լեցուն կեանք եւ տեսնենք մեր առջեւ բացուած դէպի Աստուած բարձրացնող ճանապարհը: Եւ առաքեալին ձայնակից արտասանենք.

«Տէ՛ր, բարւօր է մեզ աստ լինել»:

Եւ Քրիստոս պատասխանեց իր աշակերտներուն՝ ըսելով.

«Ուրքի՛ ելէք, մի՛ վախնաք»:

Չվախնանք կեանքի փորձություններէն: Յարատեւ աղօթենք, եւ այն ժամանակ մեր մէջ պիտի գտնենք Աստուածադիր զօրութիւնը՝ մերժելու տկարութիւնները եւ մեզմէ հեռու վանելու փորձութիւնները: Աղօթքը մեզի կը պարգեւէ Աստուածորոնումի ճանապարհը, քաջութեան տեսիլքը, ճշմարտութեան ու սրբութեան գիտակցութիւնը: Այս օրերուն, մեր կեանքի մէջ ականատես կը դառնանք սուրբերու ու հերոսներու աղօթքի կեանքին, որոնք կ'ապրին Քրիստոսի ներկայութիւնը, հաղորդ կը դառնան Անոր Պայծառակերպութեան, Աստուծոյ սէրն ու հայրենական նուիրումը կը դարձնեն կոչումը իրենց կեանքին ու ձայնակից Տիրջ աշակերտներով կ'ըսեն. «Տէ՛ր, բարօք է մեզ աստ լինել»: Նոր ժամանակներու սուրբերն ու հերոսները մեր քաջարի զինուորներն են, ովքեր վասն Յիսուսի, վասն հայրենեաց մեր հողը վերածած են Թափօր լեռան, նոյն տեղի մէջ պայծառակերպելու իրենց կեանքը՝ Քրիստոսի հետ խաչակից դառնալու ուխտով եւ հրաւեր ուղղելով մեզ ամբօրէն կառչած մնալու մեր քրիստոնէական կոչումին, աղօթանուէր կեանքի խոստումին: Այս է նշանաբանը մեր կեանքին, որուն հրաւերը մեզի կը կարդայ Քրիստոս Աստուածորդին, հրաւեր, որը դարձաւ հաւատքի ու աղօթքի ժառանգութիւնը մեր հայրերէն մեզի վստահուած:

Յուլիս 19, 2020

ՄՐՏԱԲՈՒՆ ԿՈՉ

Միրելի՛ հայորդիք,

Բոլորս կը հետեւինք հայրենիքի մէջ տեղի ունեցող վերջին օրերու խռովեցուցիչ իրադարձութիւններուն: Ռազմատենչ Ատրպէյճան, Յուլիս 12-էն սկսեալ, շարունակաբար կը գնդակոծէ Տաւուշի շրջանի սահմանամերձ շարք մը բնակավայրեր՝ թիրախաւորելով խաղաղ բնակչութեան եւ խաթարելով մեր քոյրերու եւ եղբայրներու կեանքին բնականոն ընթացքը:

Դժբախտաբար, իբրեւ հետեւանք Ատրպէյճանի անմարդկային յարձակումներու, երիտասարդ զինուորներ նահատակուեցան, կան նաեւ վիրաւորներ: Գնդակոծութիւններու պատճառաւ վնասուած են բնակարաններ եւ կենսական նշանակութեան հանրային եւ պետական կառոյցներ սպասարկող շէնքեր, տրանսպորտային միջոցներ եւ գործատեղիներ: Բարոյական վնասէն զատ, պետութեան ու ազգաբնակչութեան հասցուած է նիւթական մեծ վնաս:

Ի հպարտութիւն եւ ի մխիթարութիւն մեզ, հայրենի պետութիւնը անմիջապէս եւ ձեռնհաս կերպով սկսաւ սահմանապահ շրջաններու վերակառուցման աշխատանքներուն: Փառք կու տանք Աստուծոյ, որ հզօր հայրենիք մը ունինք, որ ատակ է պաշտպանել ինքզինք եւ հոգատարել իր ժողովուրդին:

Միրելին՛ք, մեր այս գրութեամբ կոչ կ'ուղղենք ձեզմէ իւրաքանչիւրին՝ համախմբուիլ եւ որպէս հպարտ սփիւռքահայեր թիկունք ըլլալ Մայր Հայրենիքին: Մեր սրբազան պարտքն է սատարել մեր հայրենակիցներուն, մասնակցիլ հայրենաշինութեան եւ երկրի հզօրացման

կարելուր առաքելութեան: Մանաւանդ, մեր գործնական մասնակցութիւնը բերենք սահմանապահ բնակավայրերու վերաշինութեան ծրագրին, քանզի մեր սահմաններու անառիկ, խաղաղ եւ բնականոն կեանքը կ'ապահովեն ոչ միայն մեր քաջարի զինուորները, այլեւ հոն ապրող եւ պայքարող խաղաղ բնակչութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահ տիար Արմէն Սարգսեան կոչով դիմած է ժողովուրդին՝ յորդորելով մեր ողջ ներուժը ուղղել Հայաստան Համահայկական Հիմնադրամի «Սահմանային Համայնքներու Հզօրացում» համահայկական դրամահավաքարշավին՝ յատուկ այս նախաձեռնութեան համար ստեղծուած առցանց հարթակի միջոցով www.himnadram.org: Դրամահավաքի միջոցաւ հաւաքագրուած ողջ գումարը պիտի ուղղուի Տաւուշի սահմանային համայնքներու ամենահրատապ անհրաժեշտութիւն ունեցող սոցիալօնտեսական խնդիրներուն:

Օրեր առաջ կոչով հանդէս եկած էր նաեւ Հայաստանի Հանրապետութեան մեծարգոյ վարչապետ տիար Նիկոլ Փաշինեան: Մեծարգոյ վարչապետը կը քաջալերէ մեր ժողովուրդին իրենց սրաբուխ նուէրները ուղղել «Զինձառայողներու Այսօրվագրութեան Հիմնադրամ»-ին՝ կատարելով առցանց նուիրատութիւն հետեւալ յղումով www.1000plus.am:

Որպէս հոգեւոր առաջնորդ Հայց.Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի եւ Մեքսիքոյի, մեր պատգամն է, որ վասն Հայաստանի խաղաղութեան եւ բարօրութեան ձեր աղօթքները նաեւ գործնական դրսեւորում ունենան՝ որպէս հայրենիքի հանդէպ սիրոյ եւ նուիրումի առհաւատչեայ:

Յուլիս 22, 2020

**«ՓԱՌԱԻՈՐԵՑԷ՛Ք ԶԱՍՏՈՒԱԾ
ԶԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ»**

Պայծառակերպութենէն մինչեւ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը երկարաձգուող ժամանակահատուածին մեզի տրուող պատգամները չափազանց օգտաշատ են հոգին ու միտքը լուսաւորելու տեսակետէն, եւ որոնք մեզի մտածելու տեղիք կու տան առհասարակ կեանքի մասին: Օրուայ աւետարանական պատգամը կը բացատրէ ս. ամուսնութեան խորհուրդը, որն ինքնին քարոզի նիւթ մըն է եւ աւելին, այն յաւիտենական ճշմարտութիւն է, եւ որը մեր քրիստոնէական հաւատքի կեանքին մէջ արեան կանչն է:

Ամուսնութեան խորհուրդին մեկնակէտը սուրբ ընտանիքն է, որն ինքնին եկեղեցւոյ մանրակերտն է, ուր ներկայ է Աստուած:

Օրուայ աւետարանական երկրորդ պատգամը կը քաղենք Պօղոս Առաքեալի Կորնթացոց ուղղեալ նամակէն, որուն վրայ եւ կը կեդրոնացնենք շեշտը օրուայ մեր խորհրդածութեան:

«Փառաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն մէջ» (Ա. Կորնթ. 6:20):

Առաքելական այս պատգամը ուրիշ կերպ կարելի չէ ըմբռնել, քան որպէս հրաւեր՝ հոգեւոր արթնութեան, կոչ՝ հաւատքը վերապրելու, եւ պատրաստակամութիւնը՝ մեր մէջ վերհաստատելու Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնը:

Առաքեալին խօսքը, որոշապէս մտածելու առիթ կու տայ մեզի, որ մարդը, իւրաքանչիւրս, Աստուծոյ կողմէ ստեղծուած ըլլալով, միայն ֆիզիքական ներկա-

յութին մը չենք, այլեւ մեր մարմիններուն մէջ կը կրենք հոգեւորը, որուն համար անհրաժեշտ է օգտագործել հաւատքի ուժը, որպէսզի քաջ ըմբռնենք, որ մեր մէջ ներկայ է Աստուած ինք, եւ աւելին՝ երբ աղօթքով կը լսենք ներսէն եկող Աստուծոյ ձայնը, ապա մեր կեանքի ընթացքը կ'ուղղենք դէպի սրբութիւն:

«Փառաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն մէջ»:

Առաքեալի այս խօսքը կանխող բառերը ինչքա՛ն դիպուկ են եւ ցնցող. *«Չէ՛ք գիտեր, թէ ձեր մարմինները տաճար են Ս. Հոգիին, որ ձեր մէջն է եւ զոր ընդունած էք Աստուծմէ»:*

Վստահաբար, այս խօսքը մտածելու տեղիք կու տայ, որ աղօթքով իջնենք մեր հոգիին խորքը եւ լաւագոյնս ըմբռնենք, որ մեզի տրուած մարմինները տաճար են Ս. Հոգիին բնակութեան, զորս մեզի է տրուած Աստուծոյ կողմէ:

Բոլորս ալ շատ լաւ գիտենք մեր բնական վայրերը մաքուր պահել ու պահպանել՝ մեզի համար ստեղծելով կենցաղային հանգիստ ու հաճելի պայմաններ: Ինչքա՛ն առաւել եւս անհրաժեշտ է մաքուր պահել մեր մարմինները, որ տաճար են Ս. Հոգիին: Եւ ինչքա՛ն մաքուր են մեր հոգիները, այնքան աւելի նոյն մաքրութիւնը կը ներշնչէ մեր շուրջը գտնուողները, որովհետեւ մեր խօսքն ու գործը կ'ըլլայ արդար ու բարի եւ անով իսկ կը փառաւորենք զԱստուած:

«Փառաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն մէջ»:

Առաքեալին այս խօսքը կը դառնայ իրական, երբ մեր մարմիններուն մէջ կը զգանք եւ կ'ապրինք Ս. Հոգիին ներկայութիւնը այս դժուարին ժամանակներուն, երբ Աստուծոյ պարգեւած շնորհները կեանքի կը

կոչենք, որպեսզի յաղթենք փորձությունները եւ մեր մէջ փառաւորենք զԱստուած:

ԶԱստուած փառաւորելու համար մարդը պիտի հրաշագործէ իր կեանքը, եւ որո՞նք են մեր կողմէ առնուելիք քայլերը: Եւ թէ ինչքանո՞վ մարդը իր մէջ ունի հոգեւոր ուժականութիւնն ու հաւատքի զօրութիւնը ապրելու համար քրիստոնէական կեանքով, քանզի այդօրինակ կեանքով միայն զԱստուած կը փառաւորենք: Պատասխանը այն է, որ մարդն անկասկած իր մէջ ունի աստուածային պարգեւները հաւասարապէս, ըլլայ այն հոգեւոր ուժականութիւն, հաւատքի զօրութիւն եւ տակաւին բազում պարգեւներ, որոնք պարտ ենք կեանքի կոչել: Եւ եթէ աստուածային պարգեւները մեր մէջ կ'ապրեցնենք, ապա մեր կեանքը հրաշագործած ենք, այն մօտեցուցած Աստուծոյ եւ մեր մէջ փառաւորած զԱստուած:

Ուրեմն, ձեր սրտերուն մէջ աղօթքով ամուր պահէք Առաքեալի խօսքը՝ *«Փառաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն մէջ»*, եւ այն ժամանակ պիտի տեսնէք, որ նոյն աղօթքի զօրութեամբ պիտի ունենաք հոգեւոր արթնութեան պահը, հաւատքին ուժը գործնականացնելու գիտակցութիւնը եւ ձեր էութեան մէջ ապրելու Աստուծոյ ներկայութիւնը:

Օգոստոս 2, 2020

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ԼՍԵԼ

«Ս. Մարիամ Աստուածածինը ինը ամիս Աստուածորդուն կրելով իր մէջ՝ մարդկութեան վերադարձրեց Աստուծոյ խօսքը լսելու շնորհը»:

Մբ. Գրիգոր Տաթևացի

Աստուածածնի երկինք վերափոխման Տօնն է, որ մեզ ի մի կը հաւաքէ՝ սերտելու ու հասկնալու համար Ս. Կոյսին կեանքին առաքելութիւնն ու կոչումը: Քրիստոնէական եկեղեցին դարերով գովերգած է Ս. Կոյս Մարիամի պատարագեալ կեանքին տիպարը, որպէս ընտրեալը շատերուն մէջէն, որ սիրով ու հաւատարմութեամբ պատասխանեց Աստուծոյ կանչին՝ դառնալու համար Աստուածածին ու Աստուածամայր: Աւետարաններուն մէջ ան մեզի կը ներկայանայ Մայրական իր սրբակենցաղ կեանքով ու վարքով: Իսկ եկեղեցւոյ հայրերը ինչքան խոնարհումով կը ներբողեն անոր ներկայութիւնը. *«մաքուր՝ ինչպէս լոյս», «կենաց անմահութեան ծառ», «երկնային տաճար»* (Մբ. Գրիգոր Նարեկացի):

Դարեր շարունակ եկեղեցին Աստուածամայրը դասած է առաջին սուրբերու շարքին, որպէս մարմնաւորեալ Քերովբէ: Եւ ինչքան մեր հոգեւոր կեանքին սլաքը կ'ուղղենք դէպի Ս. Կոյս Աստուածածինը, այնքան խորապէս կ'ըմբռնենք, որ ան եղած է եւ պիտի շարունակէ մնալ յաւիտեան ներշնչումի աղբիւրը բոլոր մայրերու համար: Անհրաժեշտ չէ երկարապատում նախադասութիւններով գովքը հիւսել Աստուածամօր, այլէ քաւարարուել միայն արտասանելով մէկ հիմնական սահմանում մը բառի մը մէջ ամփոփուած. *«խոնարհութիւն»*:

Խոնարհութեան մէջ կը ծնի մայրն ու մայրութիւնը, եւ մայրը կը դառնայ իր կեանքով Աստուծոյ խօսքին պատգամաբերը: Այսօրուայ աշխարհի կեանքը դէպի բարին առաջնորդելու համար մենք պէտքը ունինք միայն Աստուածամօր կեանքին հետամուտ մայրեր: Եւ փառք Աստուծոյ՝ ունինք: Բայց օրուայ խորհուրդը՝ խոնարհութեան հրաւերը ուղղուած է անխտիր բոլորիս: Բոլորս պիտի ապրինք խոնարհ կեանքով ու միշտ պատրաստ Աստուծոյ խօսքը տարածելու: Եւ մեր կեանքի մէջ Աստուածամօր ներկայութիւնը կը մարմնաւորուի նաեւ եկեղեցոյ կեանքով ու առաքելութեամբ, որովհետեւ ինչպէս մայրն է դաստիարակը ընտանիքէն ներս, ապա նոյնն է դերը նաեւ եկեղեցոյ համայնքէն ներս:

Աստուածամօր Վերափոխման տօնին մեր ս. եկեղեցին կը կատարէ նաեւ խաղողի օրհնութիւնը, որն իր մէջ կ'ամփոփէ նաեւ Աստուծոյ տուած պարգեւներու խորհուրդը: Մենք կ'ուզենք փոխանցել այն պատգամը, որ ինչպէս հողը կը դառնայ արգասաբեր ու խաղող կուտայ այգիներուն մէջ, ահա այդպէս ալ մեր կեանքը, որպէս բարի հող, խաղող պիտի տայ, որն իր մէջ պիտի կրէ Աստուծոյ խօսքն ու շունչը: Ուրեմն՝ տօնախմբենք Աստուածամօր Վերափոխումը եւ իր կեանքի պատկերը դարձնենք մեր կեանքի պատկերը:

Օգոստոս 16, 2020

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՈԳԻՆ

«Ասիկա ամէն բան լաւ ըրաւ, որովհետեւ խալէրուն լսել կու տայ եւ համբերուն՝ խօսիլ» (Մարկոս. Է):

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը լեցուն է բազում պատգամներով, որոնք մարդկային կեանքը կը լուսաւորեն Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ, բայց ամենէն երեւելին այն է, որ Աստուծոյ ներկայութիւնը կ'ամրապնդէ մեր մէջ քրիստոնէական նկարագիրն ու ինքնութիւնը: Եւ որո՞նք են պատգամները եւ կամ ի՞նչ ձեւերով կ'արտայայտուին Քրիստոսի կեանքին ընդմէջէն: Պատգամները մեզի կը հասնին Քրիստոսի առակներով, բժշկութիւններով ու հրաշքներով, քանզի իւրաքանչիւրը իր մէջ կը կրէ կեանքէն առնուած որոշակի դաս մը, որը կը սրբագրէ մեր առօրեան, մեր քայլերուն առջեւ կը տարածէ լոյսի ճանապարհը, որպէսզի կորստեան չմատնուինք: Եւ իրօք, եթէ Քրիստոսի աւետարաններէն ճառագայթող պատգամներով համեմենք մեր կեանքը, ապա Աստուածատուր մեր կեանքը կը դառնայ քաղցրահամ, խաղաղաբոյր ու օգտակար բոլորի համար:

Այսօրուայ ընթերցումը մենք կը քաղենք Մարկոսի Աւետարանէն, որտեղ մեզի կը ներկայացուի բժշկութեան հրաշքը խուլ ու համր մարդու մը համար: Ժողովուրդին մէջէն մարդիկ կը լսեն Յիսուսի ներկայութեան մասին, ապա անոր մօտ կը բերեն մարդ մը, որ ի ծնէ խուլ էր եւ համր, որպէսզի Յիսուս անոր վրայ դնէ իր ձեռքը եւ բժշկէր:

Ակնկալուածք կը կատարուի: Յիսուս կը հրաշագործէ, ու դառնալով խուլ ու համրին, կը պատուիրէ՝

ըսելով. «*Եփփաթա*», որ կը նշանակէ՝ բացուէ՝: Եւ ան-
միջապէս բացուեցաւ անոր լսելիքը, քակուեցան լեզ-
ուին կապերը, եւ ան ուղիղ կը խօսէր:

Երբ կը կարդանք կատարուածի մասին, անմիջա-
պէս կը յայտարարենք՝ ըսելով. «Հրաշք էր կատարուածը»:
Այո, կատարուածը հրաշք էր, եւ սակայն անհրաժեշտ
է թափանցել նաեւ կատարուածին խորքը: «*Անհկա
ամէն բան լաւ ըրաւ, որովհետեւ խուլերուն լսել կու
տայ եւ համրերուն՝ խօսել*»: Այս տողին մէջ պէտք է
տեսնել ու հասկնալ ոչ միայն զարմանքը ականատես-
ներուն, այլեւ՝ ըմբռնել այն, որ մենք բոլորս առհասա-
րակ խուլ ենք լսելու համար Աստուծոյ խօսքերը, եւ
համր կը մնանք՝ քաջ ու համարձակ խօսելու համար
Արարչին պատգամները: Եւ իրօք, խուլ ենք, երբ կը
լսենք ու անտես կ'առնենք լսուածը, եւ համր ենք, երբ
չենք ուզեր արտասանել Աստուծոյ խօսքը:

Կ'ապրինք այնպիսի աշխարհի մը մէջ, ուր ան-
տարբերութիւնը ամէն օր կը ծաւալի, որուն որպէս հե-
տեւանք հոգեւոր ու բարոյական արժեքները կ'ոտնա-
կոխուին, մարդիկ կը դժուարանան մէկզմիւսին մէջ
տեսնելու Աստուծոյ պատկերը եւ ապա յարգելու միմ-
եանց: Եւ դեռ այնքա՛ն իրավիճակներ կը հանդիպին,
որոնց հետեւանքով ալ աշխարհը իր մեծ ընտանիքով
կորսնցուցած է իր խաղաղութիւնը: Դեռեւս բառացիօրէն
խուլ չենք կամ համր չենք, բայց բոլորս ալ պէտք է լսենք
Քրիստոսի խօսքը, երբ կ'ըսէ. «Եփփաթա (բացուէ՛)»:
Բանա՛նք մեր լսելիքը, քակե՛նք մեր լեզուին կապերը,
որպէսզի լսենք եւ խօսինք արդարութիւնը:

ՔԱԻ ԼԻՅԻ ՈՐ ՊԱՐԾԵՆԱՍ

«... Քաւ լիցի, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցով մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս ես մեռած եմ այն աշխարհին համար»:

(Գաղատացոց 6:14-18)

Պօղոս Առաքեալին խօսքն է սա՝ ուղղուած իր ժամանակին նորահաստատ Գաղատացոց քրիստոնէական համայնքին: Խօսք մը, որ կը բացատրէ խորհուրդը խաչին, որուն մէջ է ամփոփուած Քրիստոսի պատարագեալ կեանքով նուիրականացած քրիստոնէական հաւատքի ոգին ու վարդապետութիւնը: Առաքեալի համար խաչը պարծանքն է ու հպարտութիւնը, որովհետեւ ան խաչին մէջ կը տեսնէ Քրիստոսի ներկայութիւնը, որ աշխարհ եկաւ պարտութեան մատնելու մեղքը եւ մարդկութիւնը առաջնորդելու դէպի նոր կեանք: Եւ դարեր շարունակ ողջ քրիստոնէայ մարդկութիւնը իր հայեացքը ուղղեց խաչեալ Քրիստոսի վրայ, որպէսզի իր մէջ արթնացնէր պատարագումի ոգին ու գիտակցութիւնը, որպէսզի իր էութեանը մէջ խեղդէր մեղքին մտածումը: Եւ, անշուշտ, ժամանակ առ ժամանակ անհատ մարդն ու հաւաքականութիւնը ունեցաւ տկարութեան պահեր եւ մեղքի մէջ մնաց այն պահուն, երբ իր հայեացքը շեղեց Քրիստոսի անձին վրայէն: Բայց նոյն անհատը եւ հաւաքականութիւնը քանի իր էութեանը խորքին արմատացուցած էր խաչին խորհուրդը, աղօթքի կեանքով սնունդ տուաւ իր հաւատքին, երբ խոստումը կատարեց քալելու Քրիստոսի հետ եւ իր կեանքով նմանակից դառնալու Քրիստոսի:

Խաչվերացի տօնն է այսօր մեր ս. եկեղեցւոյ մէջ, եւ ինչպէս մեր ս. եկեղեցւոյ հայրերը եւ նախնիք խաչին խորհուրդով կը պարծենային եւ խաչը դարձուցին հրամայականը, նպատակը, ուղին եւ առաքելութիւնը իրենց կեանքին, ահա այսօր հերթը մերն է, որ խաչին մէջ տեսնենք նպատակն ու առաքելութիւնը մեր կեանքին:

Խաչը՝ Քրիստոս Աստուածորդու ներկայութեան խորհրդանիշն է իւրաքանչիւրիս համար: Խաչը՝ կը ներշնչէ մեզ գոհողութեան գիտակցութեամբ, այնպէս, ինչպէս Քրիստոս գոհաբերեց իր կեանքը մարդկութեան հոգիներու փրկութեան համար: Խաչին մէջ մենք տեսնենք մեր ամբողջ էութիւնը՝ այն դարձնելով նաեւ մեր հոգու հայելին: Խաչին խորհուրդը կը միաւորէ ընտանիքները եւ նոյնին առաջնորդութեամբ կը կազմաւորուին համայնքները: Խաչին տեսիլքը կը լուսաւորէ մարդուն միտքն ու հոգին, որպէսզի մեր կեանքով դառնանք Քրիստոսի նմանակից: Խաչին զօրութիւնն ու առաջնորդութիւնը իր մէջ կ'ամփոփէ նաեւ մեր ազգի պատմութիւնը իր բոլոր հանգրուաններով: Խաչին մէջ ծնունդ առաւ Հայոց սրբութիւն սրբոց Ս. Էջմիածինը, գաղափարաւորութեամբ հայրենիքի գիտակցութիւնը, հայոց այբուբենի եւ ուրոյն մշակոյթի զարգացումը: Խաչին իմաստութիւնը հայ քրիստոնեայի կեանքին մէջ արմատաւորեց հոգեւոր ու բարոյական արժէքներով կեանքն ապահովագրելու գիտակցութիւնը:

Ի՞նչ է պատգամը Խաչվերացի տօնին: Պարզ բառերով՝ հրաւեր մըն է այս տօնը նորոգելու մեր քրիստոնէական կոչումը, որպէսզի մեր կեանքն ապրինք Աստուծոյ հետ: Եւ ինչպիսի՞ քայլեր յանձն պիտի առնենք. Առաջինն այն է, որ պիտի կարդանք Աստուածաշունչը, մեր զաւակներուն պիտի սորվեցնենք աղօթել ու եկեղեցի առաջնորդել, որպէսզի եկեղեցին դարձնենք երկ-

բորդ տունը իրենց կեանքին մէջ: Կարելոր է նաեւ, որ բոլորս ըմբռնենք, որ իւրաքանչիւրիս տունը խաչով օրհնուած մանրակերտն է մեր ս. եկեղեցւոյ, ուր ներկայ է Աստուած իր սիրով ու իմաստութեամբ:

Ահա այս գիտակցութեամբ է, որ դարեր շարունակ մեր նախնիք եկեղեցիներ են կառուցած՝ ամրագրելու համար մեր ներկայութիւնը որպէս ապրող ու շնչող եկեղեցի քարեղէն շէնքին մէջ: Նոյն այս ոգով թեմական այս կառոյցէն ներս միասնաբար կառուցեցինք նոր եկեղեցիներ, եւ Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարը դարձաւ պսակը բոլորին:

Այսօր կը տօնախմբենք Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի օծման 10-ամեակը: Տասը տարիներ շարունակ նորակառոյց այս Տաճարը սերունդներու կեանքին մէջ դարձաւ աղօթքի հրաւիրող սրբազան տունը: Մայր Տաճարը համախմբեց մեր ժողովուրդի զաւակունք, որպէսզի դառնանք ամուր մեր տեսիլքին մէջ՝ պահելու մեր քրիստոնէական հաւատքը եւ ազգային ոգին: Մայր Տաճարը, Առաջնորդարանի համալիրով դարձաւ մեղուաբոյն մը, ուրկէ ներս մտնողը վստահաբար հոգեւորապէս կը կերպարանափոխուի՝ իր կեանքը կապելով Աստուծոյ հետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորհուրդի, Մայր հայրենիքի եւ մեր սրբազան արժէքներու հետ: Այս բոլորը իր մէջ ամփոփող խորհրդանիշը խաչն է: Խաչով ենք յաղթած կեանքի բոլոր փորձութիւնները, խաչով զօրացած պատրաստ ենք դիմագրաւել նոր մարտահրաւերները:

Խաչվերացի տօնին, երբ խաչին խորհուրդով կը լեցնենք մեր հոգիները, եւ փառք կու տանք Աստուծոյ, որ շնորհ տուաւ մեզ կառուցելու այս Մայր Տաճարը, մենք մեր սրտի աղօթքը կը վերառաքենք առ Աստուած անխտիր բոլոր անոնց համար, ովքեր իրենց միտքն ու

հոգին են դրած Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի երազը իրականացնելու սրբազան առաքելութեանը մէջ: Արեւմտեան թեմէն ներս Ս. Ղեւոնդեանց Առաջնորդանիստ մայր Տաճարը՝ իր եկեղեցիներով, հոգեւորականներով ու պատկան մարմիններով, հաւաքական աշխատանքով կը շարունակէ առաւել եռանդով իր առաքելութիւնը՝ Աստուծոյ խօսքին քարոզութեամբ ու հոգեւոր ձեռնարկումներով:

Մայր Տաճարի օծման 10-րդ տարեդարձը խթանն ու մղիչ ոգին պիտի հանդիսանայ, որպէսզի առաւել ընդարձակենք մեր աշխատանքները: Առաքելութեան դաշտը անսահման է, եւ ամէն օր կը զգանք, որ դեռ ինչքան աւելին պիտի կատարենք մեր ս. եկեղեցւոյ հաւատացելոց հասնելու եւ յատկապէս մեր զաւակաց կեանքը լուսաւորելու համար քրիստոնէական հաւատքով ու խաչին խորհուրդով:

Միւրելիներ ի Քրիստոս, եկեղեցւոյ առաքելութիւնը կը պսակուի յաջողութեամբ, երբ միասնաբար աղօթենք, միասնաբար լծուինք աշխատանքի, այլապէս մեր ուսերուն դրած եւ սպասուածը կը դժուարանանք կատարելապէս իրականացնել: Հոգեւորականներ եւ ծնողներ ձեռք-ձեռքի պիտի տանք եւ խաչին խորհուրդը պիտի փոխանցենք մեր զաւակաց, մանաւանդ այս դժուարին ժամանակներուն: Եւ այնպէս պիտի դաստիարակենք մեր զաւակները, որ խաչին խորհուրդով պարծենան, խաչին լոյսը կրեն իրենց սրտին վրայ, որպէսզի ս. խաչին զօրութեամբ մշտապէս քայլեն Աստուծոյ գծած ճանապարհէն: Տարեդարձները կ'իմաստաւորուին միայն այն ժամանակ, երբ մեր հոգեւոր էութեանը մէջ կ'ապրինք նոր կեանքին տեսիլքը: Եւ երբ կ'արտասանենք մեր հայրերու պատգամները, ապա այդ բոլորը պէտք է ապրինք այն գիտակցութեամբ, որ հրաւեր են կեանքը ապրելու նոր խոստումներով:

ԱՍՏՈՒԾՄՈՎ ՀԱՐՍԱՆԱԼ

«Արդ դուք հետամուտ եղեք Աստուծոյ Արքայութեանը
եւ այդ ամէնը աւելիով կը տրուի ձեզի»:

Քրիստոսի այս պատգամը ուղղուած է բոլորիս, որպէսզի մեր հոգեւոր կեանքին կիզակէտը դարձնենք Աստուծոյ թագաւորութիւնը, Աստուծով հարստանալու գիտակցութիւնը: Օրուայ Աւետարանի դասը կը քաղենք Ղուկասու Աւետարանի 12-րդ գլուխէն (13-21 հմբ.), ուր Քրիստոսի մօտեցող երիտասարդը կը կամենայ, որ վարդապետը միջամուխ ըլլայ իր եւ եղբօր միջեւ տիրող կացութեան եւ անոր պարտաւորեցնէ, որ իր հարստութիւնը բաժնէ երկուսին միջեւ: Որպէս պատասխան Քրիստոս կ'ըսէ հետեւեալ խօսքը. «*Ո՛վ մարդ, ինձ ո՛վ դատաւոր կամ բաժանարար կարգեց ձեզ վրայ...: Տեսէ՛ք, որ զգոյշ լինե՛ք ամէն տեսակի ազահութիւնէն, որովհետեւ մարդու կեանքը իր կուտակած հարստութեան մէջ չէ*»:

Եւ Քրիստոս իր խօսքն ուղղելով ժողովուրդին՝ կը պատմէ մեծահարուստի մը մասին հետեւեալ առակը.

«Հարուստ մարդու մը արտերը տուին առատ բերքեր, եւ ան կը մտածէր ինքնիրեն՝ ըսելով. «*Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ՝ ուր բերքերս ժողովեմ*»: Եւ ըսաւ. «Սա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ աւելի՛ մեծերը, հոն պիտի ժողովեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս, եւ պիտի ըսեմ անձիս. «*Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ գուարճացի՛ր*»: Բայց Աստուած ըսաւ անոր. «*Անմի՛տ, այս գիշեր անձդ*

պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաներդ»։ «Այսպէս է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»։

Մեծահարուստին կերպարը, բնական է, չի կրնար ներշնչել մեզ։ Իր էութեամբ ժխտական կերպար մըն է ան, որովհետեւ իր կեանքին նպատակն էր դարձուցած նիւթն ու հարստութիւնը, եւ այն աւելի ընդարձակելու միտումն ունէր։ Եւ առակին մէջ կը հանդիպինք այն տողերուն, երբ մեծահարուստը իր հոգին կ'աւանդէ առանց իր կեանքը հարստացնելու Աստուծոյ։

Այս առակը ինչպէս բոլոր ժամանակներու, այնպէս ալ այսօրուայ մարդկութեան պատկերը կը ներկայացնէ։ Երբ պարպուած ենք հաւատքի կեանքէն, ապա անոր տեղը կու գայ լեցնելու նիւթն ու հարստութիւն դիզելու մտահոգութիւնը, որ բնականօրէն ժամանակաւոր ու կորստական արժէքն է։

Քրիստոս կը պատգամէ բոլորիս, որ Աստուծոյ հարստանանք, եւ այն ժամանակ աւելիո՛վ պիտի տրուի մեզի։ Հետամուտ ըլլանք Աստուծոյ, եւ մեր կեանքը մշտապէս ուղեգծենք Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ։ Չմանուինք այն եղբայրներուն, ովքեր հարստութեան համար իրարմէ կը բաժանուին, եւ ոչ ալ այն մեծահարուստին, որուն գլխաւոր մտահոգութիւնը շտեմարաններն ընդարձակելն էր, որպէսզի իր հարստութիւնը ամբարէր։ Չմոռնանք, որ անցաւոր աշխարհէն մեզի հետ տանելիք բան չունինք։ Էականն այն է, որ մեր կեանքին ճանապարհը դարձնենք Աստուծոյ, եւ այն ժամանակ հոգիով երջանիկ պիտի մնանք։

ԿՈՉ ԱՐՅԱԽԻ ՀԱՄԱՐ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Ամերիկայի Համահայկական խորհուրդը խստորէն կը դատապարտէ վերջին ժամերուն Ատրպէյճանի կողմէ հրահրուած պատերազմական յարձակումը ազատատենչ ու անկախ Հայաստանի Հանրապետութեան ու անկախ Արցախի Հանրապետութեան վրայ: Համապատասխանօրէն կը դատապարտենք ամօթալի այս արարքը, որը հրահրուած է Թուրքիոյ կողմէ:

Մինչ Հայաստան ու Արցախ ջանադիր կը հետապնդեն խաղաղութիւն եւ երկխօսութիւն, Ատրպէյճանը կը քաջալերէ պատերազմը: Ինչպէս միշտ, հայ-ամերիկեան համայնքը կը մնայ միացեալ իր զօրակցութեան մէջ հանդէպ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց: Այս զօրակցութիւնը անվերապահ է եւ անպայմանական, որովհետեւ զոյգ հանրապետութիւնները մահու-կենաց պայքար կը մղեն՝ ապահովելու համար իրենց գոյութենականութիւնը ընդդէմ իրենց թշնամիներուն:

Մենք կ'ողջունենք քաջարի մեր զինուորներու՝ Հայոց բանակի եւ Արցախի պաշտպանութեան բանակի հերոսական կեցուածքը, որոնք կը պայքարին ապահովագրել տարածաշրջանի ներգրաւած իրավիճակը եւ բնակչութեան ապահովումը:

Կոչ կը յղենք միջազգային հանրութեան, ներառեալ Ամերիկայի Կոգրեսը, Միացեալ Նահանգաց Նախագահն ու Միացեալ Նահանգաց Կառավարութեան ենթակայ բաժանմունքները, որպէսզի անվերապահօրէն դատապարտեն Ատրպէյճանի կողմէ ի գործ դրուած յարձակումները եւ յարգելու Section 907 եւ United States Freedom

Support Act-ը՝ արգիլելու համար Ամերիկայի Միացեալ Նահանգաց կողմէ Ատրպէյճանին յղուած օգնութիւնը:

Մենք կը հաւատանք «Մէկ ազգ, մէկ նպատակ» լոգունգին, որուն մէջ մենք կը տեսնենք գրաւականը մեր մէկ ապագայի: Մենք պիտի հետամուտ ըլլանք ստեղծուած կացութեան եւ պիտի համատեղենք մեր գաղութի բոլոր միջոցները՝ օգնելու համար Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան:

Մեր կոչն է, որ իւրաքանչիւրս իր ուսերուն վրայ զգայ ազգային պարտականութիւնը՝ մասնակցելու armenianfund.org դրամահաւաքին, եւ իր գործնական մասնակցութիւնը բերելու Ատրպէյճանի հիւպատոսարանի դիմաց բողոքի ցոյցին, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2020-ին:

ՄԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԱՂՕԹՔՆ ԵՆ ԿԵԱՆՔԻՆ

Հայոց պատմութեան վճռորոշ պահերուն մեր ժողովուրդի նուիրեալ զաւակունք եղած են միշտ միահամուռ եւ անձնուէր, պատարագած են իրենց կեանքը յանուն հայրենիքի անսասանութեան:

Այսօր, Հայաստանն է ի մասնաւորի Արցախը անգամ մ'եւս թիրախ են դարձած թշնամիին սանձարձակ յարձակման: Հայ զինուորը, Հայոց բանակը ոտքի է կանգնած անգամ մ'եւս տէրը կանգնելու համար մեր նախնեաց սրբազան հողին եւ ամրագրելու մեր հաւատաւոր ժողովուրդին ապահովութիւնն ու անդորրը:

Հայաստանի ու Արցախի հայոց բանակի զինուորները աղօթքն են մեր կեանքին: Անոնց ծառայութիւնը հայոց բանակին մէջ պատգամ ու հրաւեր է ուղղուած բոլորիս, որպէսզի բոլորով ու միասնական մնանք զօրավիզ յաւերժական Հայաստանին ու Արցախին:

Այս վճռական պահին, երբ Արցախը յարձակման կ'ենթարկուի Ատրպէյճանի կողմէ բացայայտ զօրակցութեամբը Հայոց ցեղասպանութեան հեղինակ թուրք կառավարութեան, բոլորս պարտ ենք միական ու միախորհուրդ զօրավիզ ըլլալ ու նուիրաբերել «Հայաստան» համահայկական հիմնադրամին, որպէսզի գործնապէս մեր հաւատքն արտայայտենք ի սէր մեր հայրենիքին ու Արցախին ու ի մասնաւորի Հայոց Զինուորին:

Նոր Մարդարապատ է մեր կեանքի մէջ: Թող բոլորիս սրտերուն մէջ արձագանգ դառնայ հայ քաջարի ու նահատակ զինուորներուն աղօթքը, ովքեր հաւատա-

ցին վաղուան Հայաստանին՝ Արցախով հզօր հայրենիքին:

Մեր հոգու հայեացքն ուղղենք դէպի Հայաստան-Արցախ, մնանք արթուն եւ անձնուիրաբար կատարենք մեր պարտականութիւնը: Նահատակ մեր զինուորներու անմահ յիշատակին առջեւ խոնարհումով խորապէս զգանք վասն հաւատքի, վասն հայրենեաց անոնց պատարագումի ոգին:

Մփիւռքը հայաշխարհով է հզօր, եւ այսօր տալու պահն է, երբ Մայր Հայաստանը արինաբամ է: Ջոհեալ նահատակները ինչքան քաջ էին, այնքան եւ քաջ են անոնց մայրերը, որոնք անշէջ կարօտով՝ նուիրաբերեցին իրենց զաւակունք յանուն մեր արդար դատին:

Խոնարհինք մեր երիտասարդ նահատակ զինուորներու յիշատակին առաջ, քանզի անոնցմէ ամէն մէկուն կեանքը իր հոգու մէջ կը կրէր հայրենիքը:

Յաղթանակը մեր բարոյական կեցուածքին մէջ է: Մնանք հաւատարիմ մեր նախնեաց հաւատքին, չմնանք անտարբեր, վայրկեան առ վայրկեան ապրինք հաւատքով, մեր մէջ կրենք ցաւը մեր հայրենակիցներուն, բայց մնանք հպարտ ու անկոտրում մեր կամքի ու յարատեւելու պայքարին մէջ:

Լսենք Հայրենիքէն հասնող պատգամը Հայոց Հայրապետի, Հանրապետութեան նախագահի ու Վարչապետի ու Արցախի նախագահի, ու մնանք համախումբ մեր աղօթքին մէջ, քաջարի մեր պայքարին մէջ, որպէսզի անսասան պահենք հայրենիքը՝ նահատակ մեր զինուորներու արեամբ նուիրագործուած:

Թող հայրենական ոգին ու քրիստոնէական հաւատքն ու սէրը ուղղորդեն մեր կեանքը՝ դառնալու մէկ սիրտ ու հոգի, յանուն մեր հայրենիքի անվտանգութեան,

որպեսզի գալիք սերունդներուն յաւերժական ժառանգը
մնայ Հայաստանը:

Աստուած մեզի հետ, Աստուծոյ պարգեւած թան-
կագին հայրենիքը պաշտպանելու սրբազան պարտա-
կանութիւն ունինք:

Մեպտեմբեր 28, 2020

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ ՍՈՒՐԲ Է

Մեր հաւատքի կեանքը գործնապէս արտայայտելու կոչ ու հրաւեր կը ստանանք Մայր Հայրենիքէն՝ Հայաստան-Արցախէն:

Վճռորոշ պահի մը առջեւ է կանգնած Մայր Հայաստանն ու Արցախը, եւ յանուն ազատութեան քաջարի ու հերոս մեր երիտասարդ զինուորները անձնուիրաբար իրենց կեանքը կը զոհաբերեն հայրենեաց:

Ինչ է մեր պարտքը, եթէ ոչ գործնապէս ցոյց տալ մեր աղօթքը: «Հայաստան» համահայկական հիմնադրամը դարձնենք գլխաւոր միջոցը՝ ի մի հաւաքելու մեր նուիրաբերումները, որպէսզի դառնանք հզօր մեր կեցուածքին մէջ: Հեռու մնանք անհատական նախաձեռնութիւններէ, որպէսզի չտկարանանք եւ ամբողջական զօրակցութիւն ցոյց տալով «Հայաստան» հիմնադրամին՝ յարգած ըլլանք յիշատակը ի սեր հայրենի սուրբ հողին զոհաբերած հայ զինուորին:

Հարիւրէ աւելի քաջ զինուորներ արդէն զոհաբերուած են ռազմի դաշտին: Անոնցմէ ամէն մէկը իր մէջ կը կրէր հայրենի սուրբ հողին սերն ու տեսիլքը: Տասնեակներով վիրաւորներ խնամքի կարօտ են: Արթուն պահենք մեր խիղճը եւ այս պահուն գործնապէս ապրինք մեր հաւատքը: Եւ աւելին՝ ամէն տեղ ու ամէն վայրկեան միմեանց յիշեցնենք մեր հայրենանուէր պարտականութեանց մասին: Ռազմի դաշտին մեր քաջ հերոսները՝ հերոսներու զաւակները հայրենիքին կ'ընծայաբերեն «գոյի չափ զկեանս իւրեանց», իրենց ամբողջ կեանքը:

Մեր աղօթքը կը բարձրացնենք մեր հայրենիքի՝ Հայաստան-Արցախի խաղաղութեան համար, Հայոց

պետականության եւ Հայոց բանակի ապահովութեան
ու մեր ժողովուրդի ստեղծագործ ու խաղաղ կեանքի
համար: Գալիք օրերը պիտի ըլլան աղօթքի ու նուիրա-
բերումի օրեր, մինչեւ յաղթանակը դարձնենք մեր ար-
դար ձեռքբերումը:

Հոկտեմբեր 1, 2020

ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

Այսօր աշխարհասփիւռ հայութիւնը, Ս. Էջմիածնէն մինչեւ չորս ծագերը աշխարհի դարձած է մէկ աղօթք՝ համագգային զօրակցութեան, յանուն Արցախի եւ Հայաստանի պաշտպաններու:

Իր աղօթքով բոլորս արթնութեան կ'առաջնորդէ Վեհափառը: Իրենց քաջութեամբ մեր հզօր զինուորները յոյս ու հաւատք կը ներշնչեն մեզ, չնայած այն տառապանաց, որոնց բովին մէջէն կ'անցնին: Մենք այսօր կ'ապրինք պատմութեան ամենէն ծանր ժամանակահատուածը: Լինելութեան հարցականին առաջ ենք կանգնած եւ գիտենք, որ մեր բոլոր զինուորները մէկ բռունցք դարձած ոտքի են ելած ի սէր Արցախի եւ Հայաստանի: *«Մահ իմացեալ անմահութիւն»* հաւատամբը դրոշմած իրենց հոգիներուն խորքը՝ հայ զինուորներ կռուի դաշտ կը մեկնին, քանզի քաջ կը գիտակցեն, որ ազգովին օրհասական պահի առաջ ենք կանգնած: Եթէ հարկն է՝ Հայոց բանակին պիտի զինուորագրուի ողջ սփիւռքահայութիւնը: Քանզի առանց հզօր Հայրենիքի դժուար թէ գոյատեւէ:

Ինչպէս մեր նախնեաց, այնպէս ալ այսօր եւ յաւիտեան մեր կեանքի ճանապարհորդութիւնը կը կոչուի Պայքար: Պայքար յանուն հաւատի եւ հայրենեաց: Մինչ մեր երիտասարդները կը պատարագեն իրենց կեանքը, մենք ամէր օր եւ ամէն վայրկեան աւելի պիտի միաբանուինք եւ զօրանանք, որովհետեւ անցնող օրերը մեզ ցոյց տուին, որ զօրութիւնը մենք մեր մէջ պիտի կերտենք:

Այս երեկոյ բոլորով շարունակենք աղօթել մեր հայրենեաց պաշտպանների համար: Մինչ մենք այս խա-

դադուրեան մէջ աղօթք կը բարձրացնենք, Արցախի ողջ տարածքին գիշեր չունին մեր եղբայրներն ու քոյրերը: Բոլորս պիտի դառնանք մէկզմիւսին յիշեցում կատարելու համար, եթէ մեր հոգու պարտքը կատարած ենք «Հայաստան Համահայկականին»:

Վաղը, սիրելիներ, Ս. Պատարագի աղօթքին պիտի ընթերցուի անելի քան երկու հարիւր երիտասարդներու սուրբ անունները: Եւ պիտի խոնարհինք անոնց օրհնեալ յիշատակի առջեւ եւ պանծացնենք քաջութիւնը մեր հերոս զինուորներուն ու անոնց ծնողաց:

Մեր կեանքը նման է Քրիստոսի կեանքին: Խաչի ճանապարհէն կը քայլենք, բայց քաջ գիտենք, որ վաղուան արշալոյսը մեր ձեռքերով պիտի կերտենք:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ

Հոգեկան անխառն գոհունակություն է տեսնել եւ վկայել կամաւորական ծառայութիւնը անթիւ ու անհամար մարդկանց, որոնք անցնող արդէն երեք շաբաթներու ընթացքին ի սէր Հայրենիքի ու մեր ժողովուրդին, ինքնաբոյի ծառայութեան մէջ մնացին ի սէր մեր նահատակ զինուորներու եւ երբէք անհրաժեշտութիւնը չզգացին հրաւեր ստանալու ներկայ ըլլալու առաջնորդարանէն ներս կազմակերպուած ձեռնարկներուն սուրբ նպատակի մը համար:

Անտարբերութիւնը անկասկած ամենէն անհասկնալի երեւոյթն է ըլլայ եկեղեցիէն ներս, եւ առհասարակ հասարակական կեանքէն ներս: Ո՛ր է իմաստը աղօթքին ու հաւատքի գիտակցութեան, երբ այն չունի իր գործնական արտայայտութիւնը: Քանզի աղօթքը առանց գործի միայն բառ ու խօսք է շրթներուն վրայ դրուած:

Ինչքա՛ն մխիթարուած ենք, որ ողջ գաղութը ոտքի է կանգնած եւ հայ մարդիկ իրենց աշխատանքային ժամերէն դուրս ի գին ամէն գոհողութեան կամաւորաբար կը ծառայեն ու կը խոնարհին այս անգամ ի մասնաւորի հայ զինուորի յիշատակին առջեւ:

Ճշմարտապէս գէթ մեզի համար Առաջնորդարանի տանտերի կոչումը կրնանք շնորհել այն մարդկանց, ովքեր այս տան մէջ ընծայաբերեցին իրենց սրտաբոյի եւ անվարձայատոյց ծառայութիւնը:

Թող Աստուած օրինէ ազգն ու եկեղեցին եւ բոլոր այն մարդիկ, ովքեր հաւատքով ու անձնուէր գիտեն ընծայաբերել իրենց կեանքը որպէս անկեղծ ու ճշմարիտ խոնարհում հայ զինուորի յիշատակին:

ԱՂՕԹՔԻ ՀՐԱԻԷՐ

Աղօթքի հրաւերով կը դիմենք ձեզ, սիրելի՛ բարեպաշտ հայորդիք, որպէսզի լիակատար կերպով զգանք Աստուծոյ ներկայութիւնը եւ աւելին՝ աղօթքը դարձնենք բանալին հոգեւոր արթնութեան ու հաւատքի վճռակա-նութեան, եւ ամենակարեւորը՝ մեր աղօթքը միացնենք մեր քաջարի զինուորներուն:

Մեր կեանքի ամենէն վճռորոշ պահն է: Կանգնած ենք Գողգոթայի ճանապարհին ու Քրիստոսի հետ կը քայլենք դէպի խաչելութիւն: Եւ ինչպէ՞ս կրնանք անտարբեր ու հանգիստ մնալ, երբ վտանգի առաջ է կանգ-նած մեր ամբողջ ազգը ի Հայաստան եւ ի սփիւռս աշ-խարհի: Խաղաղասէր ու ստեղծարար մեր ժողովուրդի զաւակունք անարդար յարձակումի են ենթարկուած եւ այս պահուն Արցախի բարձրունքներուն հերոսաբար իրենց կեանքը կը զոհաբերեն մեր երիտասարդները, որոնք հայրենիքի տեսիլքը կ'ամրագրեն մեր հոգիներ-րուն մէջ: Հայոց ցեղասպանութիւնը կը շարունակուի, բայց մեր քաջարի ու սուրբ երիտասարդները ի խնդիր բոլոր ժամանակներու հայրենիքին՝ իմացեալ մահուամբ անմահութիւնը կը կերտեն:

Սիրելիներ՛ք, հսկումի այս երեկոյեան բոլորով ծնկա-չոք աղօթենք, որ Աստուած իր Աջը պահէ մեր հայրե-նիքի վրայ ու պահպանէ մեր զինուորներն ու հայոց բանակը: Մեր կեանքի ճանապարհը աշխարհի չորս ծագերուն դարձած է պայքար յանուն արդարութեան: Մեր ապրելու ոճը պիտի փոխենք կտրուկ ձեւով ու այլեւս բարոյական իրաւունքը չունինք, որ նիւթակա-նացած այս աշխարհի հոսանքը խաթարէ մեր ինքնու-թիւնը՝ հայրենիքով ու հաւատքով ապրելու գերագոյն

գիտակցութիւնը: Քանզի հայրենիքով ու հաւատով ապրելու գերագոյն գիտակցութիւնը մեր այսօրինակ կեանքը կը տանի հասցնելու մեր նախնեաց կեանքին: Հոգեւոր ու ազգային յեղափոխութիւն պիտի ապրինք, պիտի զրկենք մենք մեզ անկարեւոր ծախսումներէ, որպէսզի միասին վերակերտենք ու վերապրեցնենք հայրենի հողն ու ժողովուրդը: Նոր ժամանակներու մէջ պէտք ունինք Վարդաններու ու Շուշաններու: Եւ փառք Աստուծոյ, որ այսօր ողջ ժողովուրդը ոտքի է կանգնած: Կռուի դաշտ կը մեկնին իրենց որդւոյ հետ նոյնիսկ ծնողները: Մեր պայքարը սուրբ նպատակ ունի: Մենք կ'ուզենք ապրիլ Աստուծոյ տուած հողին վրայ, եւ երիտասարդներու արեամբ նուիրականացած հողը պահելու սրբազան պարտք ունինք:

Միւրեկի՝ հայորդիք, այս երեկոյ կը սկսինք եռօրեայ ծումապահութեան ու պահեցողութեան կամաւորաբար, այն զգացողութեամբ, որ ի միութիւն ենք Արցախի բարձունքներուն արթուն կանգնած մեր զաւակներուն: Կռուի դաշտին զոհուած նահատակ զինուորները լոյսն են մեր կեանքին: Իսկ կռուի դաշտէն յաղթական տուն վերադարձող հայ զինուորին մայրերն ու հայրերը, եղբայրներն ու քոյրերը մենք պիտի դառնանք: Օտարին տուած փշրանքներով հայրենիքը չի կրնար ոտքի կանգնիլ: Ինչ որ կ'ուզենք տեսնել՝ այն հրաշքը, որ կը սպասենք, մեր ձեռքերով պիտի ստեղծենք: Միշտ պիտի յիշենք Աւետարաններու մէջ արձանագրուած այրի կնոջ կերպարը, որ տաճարի գանձանակին մէջ դրաւ գոյի չափ զկեանս իւր: Եթէ զաւակներն ենք Հայաստանին ու Արցախին, ապա չմոռնանք, որ մեր զաւակներն են նաեւ Հայաստանն ու Արցախը:

Խոկումի այս երեկոյեան, ձեր աղօթքներուն մէջ լսեցէք ցաւն ու տառապանքը հայոց հպարտ մայրերուն

ու հայրերուն, որոնք իրենց հոգեհատորները ընծայեցին հայրենիքին: Այնպէս աղօթեցէք, որ ձեր սրտին զարկն զգան անոնք ու գօտեպնդուին եւ մխիթարուին, որ զաւակներ ունին նաեւ հեռաւոր այս ափերուն: Աստուծոյ կանչն է, որ մնանք միաբան ու սիրով, միմեանց զօրավիզ եւ այնքան հզօր, որ ամբողջ աշխարհը զարթնի իր լոռիքեան մէջ թաղուած մեղքէն: Պատգամ ունինք տալիք ողջ աշխարհին, որ ինչպէս 105 տարիներ առաջ ցեղասպանութիւնը մնաց անպատիժ, անոր չհետեւին նոր ցեղասպանութիւններ մեր կեանքի մէջ կամ այլ ազգերու կեանքի մէջ:

Սիրելի՛ հայորդիք, այս երեկոյն սկսեալ մինչեւ կիրակի Ս. Պատարագի աւարտը հոգեւորապէս կապուած մնանք աղօթքով ու ծոմապահութեամբ, որպէսզի՝ զօրանանք մեր ուխտին մէջ, յեղափոխենք մեր կեանքը՝ ուր որ ալ գտնուինք մեր առօրեայի ընթացքին եւ մեր խօսքին մէջ խառնենք յաղթանակի ոգին մեր նահատակ զինուորներուն, քաջութիւն ներշնչենք մեր կոռուղ զինուորներուն, որոնք տիւ ու գիշեր խաչին խորհուրդով են լցուած, որոնք իրենց ընտանիքներու կարօտը իրենց սրտերուն կոխ կը մղեն անարդարութեան դէմ:

Աղօթենք մեր հայրենիքի ու եկեղեցւոյ համար, հայոց պետականութեան ու բանակի համար, աղօթենք, որ երիտասարդ ընտանիքներ նահատակ զինուորներու յիշատակը յարգեն նոր զաւակներու ծնունդ տալով, որպէսզի լուսաւորենք հողը հայրենեաց:

Հայ քրիստոնեային հաւատքը անչափելի է: Հայուն հայրենասիրութիւնը սուրբ է ու անարատ: Հայուն էութիւնը կը դրսեւորուի խաղաղ ու ստեղծագործ կեանքով, ինչպէս անցեալին է եղած եւ այսօր ու յաւիտեան: Զմոռանանք՝ Հայաստանը դրախտավայր է, տունը բոլորիս եւ Աստուծոյ: Ամէն:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Անցնող շաբաթները բոլորիս համար եղան իրօք տառապալից, ի տես Արցախի մէջ ծաւալուած իրավիճակին ու հարիւրաւոր զոհեալներու: Յաւ ի սիրտ, բուն կռիւները կը շարունակուին եւ օրեցօր կը շատանան նահատակ Հայ զինուորները, որոնց շարքերուն արդէն իսկ ակնառու կը դառնան Հայ հոգեւորականներու մարտունակ ներկայութիւնը՝ ընդհուպ մինչեւ նահատակութիւն:

Մայր Հայաստան եւ աշխարհասփիւռ հայութիւնը միակամ եւ հաստատակամ հոգեւոր եւ ազգային զարթօնք մը կ'ապրի՝ դէմն առնելու համար մեր ազգի առաջ ծառացած մեծ վտանգին:

Մահուկենաց կռիւ կը մղուի, եւ սակայն աշխարհը կը մնայ լուռ եւ անտարբեր:

Սիրելիներ, այս վճռորոշ պահին ու գալիք ժամանակներուն մեր առջեւ կը դրուի հիմնական հրամայական. մեր մէջ ստեղծելու ներքին միասնականութիւն եւ անկոտորում ուժ: Ինչքան միաբանուինք, այնքան զօրութիւն կը գտնենք մեր մէջ եւ նոյնը կը ներշնչենք մեր զինուորներուն:

Հայրենիքը Հայուն կեանքը ուղեգծող հեռանկարն է: Այդ տեսիլքն են ունեցած մեր նախնիք, ովքեր Քրիստոսադրոշմ հաւատքի լոյսով սերունդներու կեանքեր են ամրագրած, որպէս անկորնչելի ժառանգը գալիք երիտասարդներու համար:

Սիրելի հայորդիք, մեր նահատակները նոր ժամանակներու սուրբերն են մեր կեանքի: Անոնց թափած արիւնը Հայոց նուիրական հողին մէջ Ս. Միւռնն է,

որը մեր հոգիներուն մէջ պիտի վերածուի լոյսի եւ օրինութեան եւ դառնայ պատկերը Հայրենիքի:

Մեր Ժողովուրդը միշտ քայլած է Գողգոթայի ճանապարհին՝ իւր հոգու մէջ փայփայելով յաղթանակած կեանքը, յարութեան շունչով լեցուն կեանքին խորհուրդը:

1918 թուականին, եթէ Հայրենիք են ազատագրած մեր քաջամարտիկ հերոսները Մարդարապատի, պատճառը միայն այն է, որ կռուի դաշտ են մեկնած Սբ. Էջմիածնի Սկիհէն Սբ. Հաղորդութեամբ պայծառակերպրւած հոգով ու սիրով՝ կերտելու համար հիմքը գալիք բոլոր Հայաստաններու:

Այս երեկոյեան, թող մեր աղօթքի ձայնը հասնի Արցախի բարձունքներուն յանուն ազատութեան մաքառող զինուորներուն, որոնց նահատակութիւնը կշռքի մէկ նժարին աւելի ծանր կը կշռի, քան այն ինչ որ մենք բոլորով կը կատարենք:

Մեր հոգու պարտքը պիտի ըլլայ նմանուիլ Աւետարաններու մէջ մեզ ներկայացող Այրի Կնոջ, որ տաճարի գանձանակի մէջ դրաւ հոգու ամբողջ զօրութեամբ. “Գոյի չափ զկեանս իւր”:

Ուրեմն, հրաշակերպէնք մեր կեանքը խոնարհումովը հայ զինուորի, Հայոց բանակի առաջ, աղօթք բարձրացնենք այսօր մանաւանդ Հայոց պետականութեան անսասանութեան համար:

Նոյեմբեր 02, 2020

ՄԻՐՈՅ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱԻՐ

Մեր ազգի եւ հայրենիքի կեանքը այս օրերուն լուրջ մարտահրաւերներու առաջ կը գտնուի: Բոլորս ալ ինչ որ չափով մը իրազեկ ենք ներկայի իրադրութեանց: Անհատներ ու կազմակերպութիւններ, ինչպէս նաեւ պատասխանատուութիւն առած պետական այրեր կամ այլ անհատներ իրավիճակներու մասին դատումներ կամ վերլուծումներ կը կատարեն՝ բնականօրէն որպէս հայ ժողովուրդի զաւակ իրենց մտահոգութիւնը արտայայտելու համար:

Մենք, որպէս հոգեւոր Առաջնորդը Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի, հիմնականին մէջ մշտապէս խաղաղութեան ու սիրոյ համերաշխութեան պատգամ յղեցինք այն քաջ համոզումով, որ արձանագրուած ներկայի երեւոյթները անպայմանօրէն իրենց արդար լուծումը կը գտնեն ժամանակին, որուն համար ալ անհրաժեշտ է պահպանել հաւատքի կենսունակութիւնը, հայրենական տեսիլքը եւ վճռակամ պայքարի ոգին:

Ներկայիս իրավիճակը կը պահանջէ, որ ունենանք լման տուեալներ՝ համապատասխան ամբողջական պատկերը ընկալելու եւ վերլուծելու համար, որուն որպէս հետեւանք պէտք է ըլլալ համբերատար, հիմնական եւ արագ եզրահանգումներ կատարելէ առաջ: Յարգենք մեր նահատակ զինուորներու յիշատակը եւ ապագան կերտենք տուն վերադարձած զինուորներու տեսլականով:

Ազգովին կը գտնուինք պատմութեան ամենէն օրհասական պահի մը առջեւ, եւ պարտ ենք սիրոյ ու համերաշխ ոգով պատասխանել որոշակի այս ժամանակի մէջ մեր առջեւ ծառացած մեծ խնդրին:

Միբելի հայորդիք, կը հրաւիրենք բոլորդ աղօթքի, որպէսզի խոնարհումով յարգենք բարի յիշատակը մեր քաջ նահատակներուն, որոնց անձնուէր պատարագումը կը պարտաւորեցնէ բոլորս, որպէսզի մնանք միաբան սիրոյ մէջ՝ ըմբռնելու համար այն ճշմարտութիւնը, որ ճշմարիտ յաղթանակը կը տեսնենք մեր ազգի գոյութենականութեանը մէջ, որով եւ կրնանք իրականացնել մեր նախնեաց տեսիլքներն ու արդար սպասումները:

Թող Ամենակարողն Աստուած օրինէ մեզ բոլորս, եւ մենք բոլորով մեր հայեացքն ուղղենք դէպի հայրենիք:

ՄԻՐՈՅ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

«Միրէ՛քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ մտքովդ եւ ամբողջ զօրութեամբդ»: Երկրորդը, որ աստր նման է, ասիկա է. «Միրէ՛ ընկերդ քու անձիդ պէս» (Մարկոս, 12:22):

Մարկոսի Աւետարանէն քաղուած այս պատգամը Քրիստոսի կողմէ արտասանուած ոսկի պատուիրանն է, զորս իր ժամանակին ինք ուղղեց օրէնքի ուսուցիչներուն եւ այնուհետեւ նոյն պատուիրանն է ուղղուած բոլորիս: Քրիստոսի այս պատուիրանը եկեղեցւոյ հատաւցելոց կեանքը հոգեւորապէս կը հարստացնէ մեր հոգեւոր աշխարհը եւ բոլորս կ'առաջնորդէ դէպի ճշմարիտ կեանք: Վերցնենք առաջին պատուիրանը.

«Միրէ՛քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ մտքովդ եւ ամբողջ զօրութեամբդ»: Մերը Աստուծոյ հանդէպ էական է, որովհետեւ մեզ կը կապէ Աստուծոյ հետ, մեզ կը յիշեցնէ այն մասին, որ ստեղծուած ենք Աստուծոյ պատկերին համաձայն, որով եւ պարտաւորութիւն ունինք մեր մէջ կրելու Աստուծոյ ներկայութիւնը, որպէսզի մեր խորհուրդներն ու գործերը ըլլան Աստուծոյ կամքին համաձայն եւ հաճելի Աստուծոյ եւ մարդկանց Աչքին:

Մեր ազգի զաւակունք այս պատգամի առաջնորդութեամբ են ապրած իրենց կեանքը եւ մշտապէս հատաւցած, որ Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ գիտակցուած կեանքը մեզ անպայմանօրէն կը տանի դէպի ճշմարտութիւն եւ յաղթանակ:

Քրիստոս երբ կը խօսի մեզի Առաջին Պատուիրանի մասին, ապա մեզ կ'ուսուցանէ նաեւ մեր կողմէ առնուելիք գործնական քայլի մասին. «Միրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»:

Ահաւասիկ պատգամ մը, որ այս օրերուն ինչքա՛ն անհրաժեշտ է մարդկութեան հոգեւոր կեանքը նոր մակարդակի մը վրայ բարձրացնելու համար: Որովհետեւ եթէ մեր մէջ չգտնենք սիրոյ չափն ու տարողութիւնը՝ սիրելու մեր ընկերը մեր անձին պէս, ապա խորքին մէջ ոչ միայն հեռացած ենք մարդկութենէն, բայց Աստուծմէ: Թերեւս շատերս հարց տանք մենք մեզի, թէ ինչքանով է կարելի գործնականացնել Քրիստոսի այս պատուիրանը:

Պատասխանը չափտի դժուարանանք տալ, որովհետեւ ամէն օր մեր շուրջ ականատես կը դառնանք այնպիսի մարդկանց, ովքեր իրենց ընկերը կը սիրեն իրենց անձին պէս: Եւ սիրել կը նշանակէ նուիրուիլ եւ զոհուիլ ընկերին համար: Եւ երբ կը խօսինք ընկերոջ մասին, ապա քաջ պիտի գիտակցինք, որ ընկերը սիրելու գիտակցութիւնը այսօր պէտք է հասկնալ ամբողջական ու ամենալայն իմաստով: Այսօր մերօրեայ իրականութեան մէջ նուիրեալ «ընկերը» մեր ծնողներն են, ովքեր ամբողջ սրտով ու հոգով են նուիրուած իրենց զաւակաց համար: Մերօրեայ իրականութեան մէջ հայրենիքին նուիրեալ «ընկերը» մեր քաջարի զինուորներն են, ովքեր ամբողջ սիրով նուիրուած են հողին ու մեր ժողովուրդի զաւակաց կեանքի խաղաղութեանը համար: Այսօր օրերը մեր բոլորի կեանքին մէջ ինչքա՛ն ցաւի ու տառապանքի օրեր են եղած, ապա նոյնքան եւս հոգեւոր զարթօնքի օրեր են, որովհետեւ կը տեսնենք, թէ ինչպէս մեր երիտասարդ զինուորները իրենց սէրը գործնապէս ցոյց կուտան «ընկեր»ին նկատմամբ: Քանզի զինուորին համար հայրենիքը իր «ընկերն» է,

ուղեգիծը իր կեանքին, եւ այդ գիտակցութեամբ պատ-
րաստ է ընծայաբերել իր կեանքը յանուն հայրենիքի:
Մեր զինուորները իրենց կեանքով կ'ապրին Քրիստոսի
Աւետարանը: Իրենց համար Քրիստոսի Աւետարանէն
ճառագայթող խօսքերը միայն իմաստուն բառեր չեն,
այլեւ՝ կեանք ներշնչող պատգամ:

Ահաւասիկ երկրորդ շաբաթն է, որ մեր ազգն ի Հա-
յաստան եւ սփիւռս աշխարհի պայքար կը մղէ ի պաշտ-
պանութիւն հայրենիքի: Մեր երիտասարդ զինուորները
իրենց կողքին ունին նաեւ հայ երիտասարդ հոգեւորա-
կանները, որոնցմէ շատերը կռուի դաշտ մեկնած կա-
մաւորաբար, որովհետեւ լսած են պատգամը Քրիս-
տոսի. «Պիտի սիրես քու ընկերը քու անձին պէս»:

Ուրեմն լսէ՛նք Քրիստոսի պատգամը եւ դառնանք
նուիրեալ ծնողներ ու ընկերներ, բայց մանաւանդ մեր
զինուորներու կեանքին մէջ տեսնենք ճշմարիտ քրիս-
տոնեան, ով գիտէ իր «ընկերը» սիրել իր անձին պէս, ով
կը գիտակցէ, որ անհրաժեշտ է նուիրուիլ ու նահա-
տակուիլ յանուն իր հայրենի հողին:

Սիրելի՛ հաւատացեալ հայրենակիցներ, գալիք
օրերն ու ժամանակները պիտի ըլլան դժուարին, բայց
երբեք յուսահատուելու չենք: Այլեւ ընդհակառակը, քաջ
գիտակցելով, որ մեր երիտասարդ զինուորները յանուն
հայրենիքի ու ազատատենչ Արցախին մահու-կենաց
կռիւ կը մղեն, մենք բոլորով, որպէս եկեղեցւոյ զաւակ-
ներ, հայրենեաց որդիք պիտի մնանք միախորհուրդ:
Մեր թեմի հեգեւորականներն իրենց հաւատացեալնե-
րով, անխտիր քաջալեր են եղած միշտ եւ այսօր աւե-
լիով՝ յանուն մեր հայրենիքի անսասանութեան: Պայ-
քարի այս ճանապարհով պիտի շարունակենք մեր
կեանքը: Մեր նահատակ զինուորները (տասնեակնե-
րով) կը լեցնեն մեր հոգիները հպարտութեան արդար

զգացողութեամբ: Քաջ կը գիտակցինք, որ կեանքն այլեւս բոլորիս համար նոյնը չի կրնար ըլլալ: Այսօր աւելիով հասկցանք, որ մեր երկրի օրհասական պահին դուրսէն բարեկամներ չկան եւ միայն մեր մէջ պիտի ստեղծենք ամուր միաբանութիւն եւ բացարձակ հաւատարմութիւն դէպի հայրենիքն ու խոնարհում հայ զինուորին առաջ:

Թող այս գիտակցութեամբ մեր յարգանքի տուրքը ընծայենք Թարգմանչաց սուրբերու փաղանգին, որոնց տեսիլքով սերունդներ կերտեցին հայոց եկեղեցին ու հայրենիքը՝ մէկ ամբողջութիւնը Աստուծմէ մեզի ընծայուած:

Շարունակենք մնալ աղօթքի մէջ, քանզի աղօթքը կը պարտաւորեցնէ մեզի մնալ զգաստ ու միշտ արթուն՝ ծառայելու մեր մայր երկրին ի գին ամէն զոհողութեան, ինչպէս այրի կինը, որ տուաւ «գոյի չափ զկեանս իւր»:

ԽԱՉԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Որովհետեւ կորստեան մատնուածների համար խաչի քարոզութիւնը յիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներու համար՝ Աստուծոյ զօրութիւնը»:

(Ա. Կորնթ. 1:17-24)

Կորստեան մատնուածները անոնք են, ովքեր հեռացած են Աստուծմէ եւ աննպատակ կեանք կ'ապրին, եւ փրկուածները անոնք են, ովքեր կեանքը կ'ապրին Աստուծոյ խօսքին համաձայն:

Այս խօսքերը Պօղոս Առաքեալի հոգիէն են բխած, որպէս հաւատամքը իր կեանքի, որն եւ ուղեգծեց իր հաւատքի ճանապարհը, մտածողութիւնն ու առաքելութիւնը: Ինք քարոզեց խաչին խորհուրդը, որուն մէջ եւ տեսաւ Քրիստոսի ներկայութիւնը, Անոր պատարագեալ կեանքը մարդկանց հոգիներուն փրկութեանը համար: Ինչպէս Առաքեալը կ'ըսէ շատերու համար, ի մասնաւորի խաւարի մէջ մնացողաց համար խաչին քարոզչութիւնը յիմարութիւն է, քանզի կը դժուարանան ըմբռնել խորհուրդը Աստուածորդու փրկագործութեան, Անոր պատարագումին խաչին վրայ՝ ի սէր մարդկութեան: Պահ մը կանգ առնենք այստեղ եւ ձեզի հետ խորհինք այն մասին, թէ ի՞նչ պիտի ըլլար պատկերը այն ընտանիքին, ուր ծնողներ հեռու մնային խաչի խորհուրդէն եւ իրենց կեանքի որպէս օրինակ չվերցնէին Քրիստոսի կեանքի մտատիպարը: Հնտանիքի կեանքին մէջ ծնողները կը զոհաբերեն իրենց կեանքը իրենց զաւակաց համար, որովհետեւ կ'ապրին խաչին խորհուրդով, եւ խաչին մէջ կը գտնեն Աստուծոյ ներկայութիւնն ու զօրութիւնը: Այս է պատճառը, որ ի

տարբերութիւն կեանքն աննպատակ ապրող մարդոց, կորստեան մատնուածներու, որոնց համար խաչի քարոզութիւնը յիմարութիւն է, իսկ մեզ՝ հաւատով ապրողներու համար, փրկուածներու համար՝ Աստուծոյ զօրութիւն:

Միրելինէ՛ր ի Քրիստոս, այսօր Հայց. Եկեղեցին կը քարոզէ խաչի խորհուրդի մասին: Առաքելի պատգամը մեզ կ'առաջնորդէ հանդիպման Քրիստոսի հետ, որ պէսզի ընտրենք դէպի Աստուած տանող ճանապարհը, որը լուսաւորէ եւ մեզ կ'ուղղորդէ դէպի բարին, գեղեցիկն ու ճշմարիտը: Զգոյշ ըլլանք եւ կեանքն ապրինք Աստուծոյ հետ, որովհետեւ զԱստուած մերժող իմաստուններու իմաստութիւնը կորստեան պիտի մատնուի, եւ նոյնպէս Աստուծմէ հեռացած հանճարներու մտածումները պիտի արհամարհուի: Ուրիշ խօսքով՝ մարդկանց իմաստութիւնը հաստատուած պիտի ըլլայ Աստուծոյ հանդէպ հաւատքի վրայ: Մարդը եւ ի մասնաւորի քրիստոնէայ հաւատացեալը իր կեանքը պիտի ապրի Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ, որպէսզի վայելէ այս աշխարհի գեղեցկութիւնն ու բարիքները եւ աւելին՝ խաղաղութիւն: Այսօրուայ իրականութիւնը ցոյց կու տայ բոլորիս, որ երբ մարդը եւ մարդիկ պարպուած են Աստուծոյ սէրէն ու իմաստութենէն, ոչ միայն իրենք են խաւարի մէջ, այլեւ վտանգ են իրենց շրջապատին մէջ: Անհրաժեշտ չէ, որ օրինակներով խօսինք, որովհետեւ այս օրերուն ի մասնաւորի մեր շուրջ թիւով շատ են այն մարդիկ, ովքեր հոգիով բոպիկ են եւ իրենց մէջ կը գործէ չարը եւ բնականաբար այդպիսիներ կը խանգարեն մարդկանց խաղաղ կեանքը:

Ճշմարիտ է, որ մեր սուրբ եկեղեցւոյ զաւակունք անցեալին ու այսօր ապրած են խաչին խորհուրդովը, Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ, եւ սակայն հա-

ւատքէն հեռու մնացած մեր դրացիք խանգարած են մեր խաղաղ կեանքը ու մեր վրայ պարտադրած են պատերազմ, որուն պատճառով ալ ինչքա՛ն ծանր կորուստներ ենք տարած, բայց հոգեւի՛ն չենք տկարացած: Դուք ծնողներ էք, եւ եթէ վտանգի ենթակայ են ձեր զւակները, անշուշտ պիտի պաշտպանէք, որովհետեւ Աստուած ձեզ է վստահած այդ պարտականութիւնը: Ահա նոյնն է պարագան նաեւ մեր երկրի համար, հայրենիքի համար, անօրէն թշնամին կ'ուզէ ոչնչացնել մեզ, բայց ուրիշ էլք չկայ, քանզի խաչի խորհուրդով ենք զրահած մեր հոգին ու միտքը:

Ահաւասիկ ամիս մըն է արդէն, որ մեր ս. եկեղեցւոյ եւ հայրենիքի կեանքը կորսնցուցած է իր խաղաղութիւնը, մեր ամբողջ ազգը աղօթքի մեջ է, եւ միայն կ'ուզենք տեսնել խաղաղութիւնը, բայց առանց զիջելու մեր արդար իրաւունքները:

Միբեւի՛նէ՛ր ի Քրիստոս, մեր հոգեւոր պատգամն է, որ շարունակենք քարոզել խաչին խորհուրդը եւ ապրինք նոյն խաչին խորհուրդով: Մեր աղօթքն ու հաւատքն ապրինք գործնապէս ի գին ամէն զոհողութեան: Հայ քրիստոնէայի ինքնութեան խարիսխը Հայաստան-Արցախն է՝ Ս. Էջմիածնի ոգեղէն ժայթին վրայ հիմնուած: Մշտապէս ձեր հոգու հայեացն ուղղէք դէպի Հայաստան, ուր երիտասարդներ, դեռ հազիւ զարունը թեւակոխած՝ իրենց կեանքը կը զոհաբերեն յանուն հաւատի ու հայրենիքի:

Մեր երիտասարդները կորստեան մատնուածներ չեն, ովքեր խաչին քարոզչութիւնը յիմարութիւն կը համարեն: Մեր երիտասարդ զինուորները աղօթքն են մեր կեանքի, հաւատքի զօրութիւնն են մեր կեանքի, ովքեր մեզ կը պատգամեն ապրելու Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ, հոգեւոր ու բարոյական արժէքներով եւ գի-

տակցական մահով անմահութիւնը կը կերտեն: Գեղեցիկ ու իմաստաւորուած է կեանքը, երբ այն նկարագիր ունի, իր մէջ կը կրէ Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը, Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող լոյսը, հայրենական ոգին, բարիին գիտակցութիւնը, հաւատքի զգացողութիւն, սուրբ ընտանիքով ապրելու տեսիլքը, որովհետեւ այս բոլորը հեռու կը պահեն մարդը պատերազմէն եւ մեզ կը դարձնեն ճարտարապետները խաղաղութեան:

Մեր աղօթքն է առ Աստուած, որ խաչին խորհուրդը զօրացնէ բոլորս, Ս. Խաչին զօրութիւնը խաղաղութիւն պարգեւէ համայն աշխարհին եւ այսօր ի մասնաւորի մեր հայրենիքին ու հեռու պահէ մեր զինուորները մահուան վտանգէն ու փորձութիւններէ: Հաւատացէ՛ք, ու ձեր աղօթքը կ'ամրապնդէ հայ զինուորը եւ կը դառնայ սուրբ խաչին զօրութիւնը զինուորի սրտին: Եւ կեանքն այնպէս ապրինք, որ իւրաքանչիւրս մեր գործնական աղօթքով տէր ու պաշտպան դառնանք հայ զինուորին ու ընտանիքին: Եւ յիշենք մանաւանդ, որ եթէ հայ զինուորը իր կեանքը կը զոհաբերէ, ապա ինչպէս եւ ինչքա՛ն պիտի վճարենք մենք, որպէսզի մեր տուածը դառնայ համարժէք անոր զոհաբերումին, նահատակութեան: Ուրեմն, հայ զինուորը ճշմարտապէս ապրեցաւ խաչին խորհուրդով: Մնացածը կը թողունք ձեզ: Աղօթքով պատասխանեցէք: Ամէն:

Հոկտեմբեր 24, 2020

ԿՈՉ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Հայրենիքում ստեղծուած քաղաքական զար-գացումները ցաւալի կացութեան առջեւ են կանգնեցրել բոլորիս: Ցաւն ապրում ենք ազգովին՝ թէ՛ հայրենիքում, թէ՛ սփիւռքում: Դառը իրականութիւնը աւելի է ւալեկոծել մեր ժողովրդի կեանքի ընթացքը, որը տեւական ժամանակ արդէն խաթարուած էր թշնամու սանձազերծած պատերազմի պատճառով: Ուշի ուշով հետեւում ենք հայրենիքում ընթացող զարգացումներին, ուր հարկի եւ անհարկի գործերն ու խօսքերը, դժբախտաբար, հեռու են համազգային նպատակներ հետապնդող քայլերից: Ոստի, Արեւմտեան թեմի առաջնորդութիւնը, հոգեւոր դասը եւ պատկան մարմինները կոչով դիմում են ձեզ՝ բոլորիս հրաւիրելով ողջախոհութեան, միասնականության եւ համերաշխութեան: Այո՛, այսօր, առաւել քան երբեւէ, մեր միասնականութիւնն ու համերաշխութիւնը, ազգային երազների իրականացման համար մեկտեղուած մեր ջանքերը միայն կարող են առաջնորդել մեզ դէպի նոր ապագայ՝ սերունդներին պարգեւելով խաղաղ եւ ապահով հայրենիք: Յիշենք՝ վեցշաբաթեայ պատերազմի ընթացքում մեր միասնութեան մասին, ինչի շնորհիւ կարողացանք տարբեր ճակատներում «կռուել» եւ օգտակար լինել հայրենիքին թէ՛ նիւթապէս, թէ՛ բարոյապէս:

Միքելի՛ եղբայրներ եւ քոյրեր, պիտի գիտակցենք, որ պատերազմը բնաւ էլ չի աւարտուել: Ունենք այսօր նոր մարտահրաւեր, որի դէմ պիտի պայքարենք մեր միասնականութեամբ եւ համերաշխութեամբ, որպէսզի կարողանանք, մեր ուժերի չափով, սատարել մեր հայրենիքին ու մեր ժողովրդին:

Մենք շարունակելու ենք աղօթել եւ խնկարկել մեր քաջարի նահատակ զաւակների հոգիների խաղաղութեան համար: Մեր գութն ու կարեկցանքը գործի վերածելով՝ ձեռք պիտի մեկնենք նրանց ընտանիքներին՝ սփռփելով նրանց ցաւն ու վիշտը: Խոնարհուում ենք այն բոլոր զինուորների առջեւ, որոնք անկոտրուն հաւատքով մինչեւ վերջ կռուեցին՝ յաղթելով մահը, եւ ապրելով անմահութեան մէջ: Նրանք մեր պատմութիւնը զարդարեցին հերոսական նոր էջերով:

Իւրաքանչիւրիս պարտքն է ուշադրութեան կենտրոնում պահել նաեւ մեր վիրաւոր զինուորներին. Դաժան պատերազմը նրանցից շատերին դարձրել է հաշմանդամներ, ինչը ենթադրում է վիրաբուժական բարդ միջամտութիւններ եւ երկարատեւ բուժման ընթացք: Մենք պարտաւոր ենք օգնել իրենց կեանքը յանուն մեզ զոհասեղանին դրած հերոս տղաներին:

Միբեյիներ, եւս մէկ անգամ, կոչով դիմում ենք ձեզ, համախմբուել եւ միաբանուել մեր հայրենիքի ապագան կերտող ազգօգուտ աշխատանքների շուրջ: Ձերծմանք անհարկի շահարկումներից, որոնք խաթարելու եւ շեղելու են մեզ դարաւոր մեր արժէքներից եւ մեր երազներից: Ձեռք ձեռքի տուած ընթանանք դէպի այսօրուայ հայրենիքի հզօրացման եւ կայունացման սրբազան առաքելութեանը: Մենք վստահուում եւ ապաւինում ենք մեր ժողովրդի ողջախոհ մտքին եւ նրանից ծնուած ազգօգուտ ծրագրերի հաւաքական յաջողութեանը:

ԻՆՉՊԷՍ ՓՈԽՈՒԵՑԱԻ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ

Մեպտեմբեր 27, 2020 թուականին սկիզբ առած պատերազմը Արցախի դեմ Ատրպեյճանի նախադարձակումովը ցնցեց մեր հայրենական կեանքը, մանաւանդ երբ հազարաւոր քաջ երիտասարդներ նահատակուեցան յանուն հաւատի ու հայրենիքի, ու բոլորիս հոգիները ցաւի մէջ ընկղմուեցան:

Իրերու էութեան եւ ի մասնաւորի գալիքի մասին հազարումէկ վերլուծումներ կը տարածուին, որոնք եւ որոշապէս ծայրահեղ զգայնութիւններու տեղիք կու տան, առաւել եւս իրարմէ հեռացնելով մեր ազգի զաւակունք: Թող բոլորիս հոգիներուն ու սրտերուն մէջ լեցուի սերն աստուածային ու իմաստութիւնը մեր Տիրոջ, որպէսզի մնանք միաբանեալ՝ յաղթելու համար չարին զօրութիւնը:

Հայրենիքը պիտի մնայ հզօր եւ ճշմարիտ ժառանգը նորահաս սերունդներուն, եթէ երբեք անկեղծ սրտով խոնարհինք մէկզմիւսի առջեւ եւ միմեանց սիրենք այն սիրով ու նուիրումով, որուն տեսիլքին մղումով հայ զինուորը իր կեանքը պատարագեց: Այս բոլորին հակառակը կը նշանակէ անպատուել յիշատակը մեր անմեղ նահատակներուն: Լսենք Աստուծոյ կանչը եւ կատարենք Անոր կամքը:

ՎԵՐԱՊՐԵՑՆԵՆՔ ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ

Օրուայ Աւետարանական դասը կարդացինք Ղուկաս Աւետարանչի 13-րդ գլուխէն, ուր մեզի կը պատմուի երեք դէպքեր Քրիստոսի կողմէ: Ղուկաս Աւետարանչի կողմէ մեզի ներկայացուած երեք պատմութիւններն ալ որոշապէս կարելի է կապել մեր ազգի կեանքին հետ, մանաւանդ այս վերջին ժամանակահատուածին մէջ արձանագրուած իրադրութեանց:

Առաջին պատմութեամբ մեզի կը խօսի «Ապաշխարութեան անհրաժեշտութեան» մասին: Կարդանք այն ուշադրութեամբ եւ ականջ տանք մեզի տրուած պատգամին.

«Ոմանք այն ատեն ներկայ գտնուելով՝ պատմեցին անոր Գալիլիացիներուն մասին, որոնց արիւնը Պիղատոս իրենց զոհերուն հետ խառնեց: Յիսուս ըսաւ անոնց. «Կը կարծէ՞ք թէ այն Գալիլիացիները բոլոր Գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որոնք այսպիսի բաներ քաշեցին: Ձեզի կ'ըսեմ. Ո՛չ. հապա եթէ չապաշխարէք, ամենքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: Կամ թէ այն տասներորդ հոգին, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ զանոնք մեռցուց. կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդոցմէ աւելի պարտաւոր էին: Ձեզի կ'ըսեմ. Ո՛չ. հապա եթէ չապաշխարէք, ամենքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք»:

Ովքե՞ր էին Գալիլեացիք, որոնք պատժի ենթարկուեցան Պիղատոսի ձեռամբ: Կը կարծուի, որ յեղափոխականներ էին, որ դէմ էին Հռոմէական կայսրութեան: Բայց զգոյշ ըլլանք եւ անոնց պատիժը չփորձենք մեկնաբանել որպէս աստուածային դատաստանի նշաններ՝ ուղղեալ միայն Գալիլեացոց: Քրիստոս ապաշ-

խարութեան կը հրաւիրէ բոլորս, որպէսզի կորստեան չմատնուինք:

Այս օրերուն մեզ անհրաժեշտ է ապաշխարել: Ապաշխարել գէթ մեր կեանքին մէջ կը նշանակէ ապրիլ Քրիստոնէական հաւատքը, մեր մէջ սերմանել սիրոյ միաբանութիւնը, մէկգմիւսի հանդէպ ցուցաբերել անպայմանական յարգանք: Եւ Քրիստոսի այս պատգամը մեզի կը տրուի նահատակ մեր զինուորներու տեսիլքով, որովհետեւ բարոյական իրաւունքը չունինք մեր հայրենի իրականութեան մէջ եւ արտաշխարհի մէջ միմեանց նկատմամբ ցատումով ապրիլ, երբ ազգն ամբողջ արինաքամ է: Անշուշտ պէտք է համբերութեամբ սրբագրենք մեր սխալները, յարգանքը պարտադրենք միմեանց նկատմամբ եւ ուժերու ամբողջ լարումով վերակերտենք մեր հայրենիքն ու մանաւանդ Արցախ աշխարհը:

Դուկասի Աւետարանէն մեզի տրուած երկրորդ պատմութեամբ կը ներկայացնէ «Անպտուղ թզենիին» առակը:

Այս առակն ալ ըսաւ. «Մարդ մը իր այգիին մէջ տնկուած թզենի մը ունէր, եկաւ անկէ պտուղ քաղելու եւ չգտաւ: Ուստի ըսաւ այգեպանին. «Ահա երեք տարի է, որ կու գամ այդ թզենիին վրայ պտուղ կը փնտռեմ ու չեմ գտներ, ա՛լ ատիկա կտրէ, ինչո՞ւ համար գետինը խափանէ»: Անիկա պատասխան տուաւ ու անոր ըսաւ. «Տէ՛ր, այս տարի ալ ատիկա թող տուր, մինչեւ ատոր բոլորտիքը բրեմ ու թրիք դնեմ: Եւ եթէ պտուղ տայ՝ աղէկ, ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ ատիկա»:

Թզենին մեր ազգի ծառն է: Եթէ այսօր «անպտուղ» է, ապա այդ չնշանակէր, որ մեր մէջ պիտի տկարանայ հաւատքի ուժը եւ հայրենական տեսիլքը: Մեր ազգի պատմութեան մէջ շատ անգամներ արձանագրած ենք

տկարութեան նշաններ եւ պարտութիւններ, բայց Աստուած խօսած է մեր հայրերուն եւ պատգամ յղած, որ տկարութիւնն ու պարտութիւնը միշտ ալ եղած են ժամանակաւոր: Մթափուելու պահն է, եւ մեր թերութիւններէն տրուելով պարտ ենք խոստում տալու, որ մեր մէջ պիտի ամրապնդենք հաւատքին կոչումը եւ Քրիստոսի Յարութեան խորհուրդին ակնդէտ ամրացնենք մեր կամքը՝ յարատեւելու եւ թզնւոյն ծառը, որ հայրենիքն է, վերակերտելու ի գին ամէն զոհողութեան, իմաստութեամբ, ծառայութեամբ ու նորովի տեսլականով:

Վերջապէս, Ղուկասի Աւետարանէն մեզի տրուած երրորդ պատմութեամբը «Հաշմանդամ կնոջ բժշկութիւնն է»:

«Շաբաթ օրը ժողովարաններէն մէկուն մէջ կը սորվեցնէր: Հոն կին մը կար, որ հիւանդութեան ոգի մը ունէր տասնութ տարիէ ի վեր ու կծկտած էր եւ ամենեւին չէր կրնար շիտակ կայնիլ: Յիսուս զանիկա տեսնելով՝ իրեն կանչեց եւ ըսաւ անոր. «Ո՛վ կին, դուն քու հիւանդութենէդ արձակուած ես»: Ու ձեռքը անոր վրայ դրաւ եւ իսկոյն շտկուեցաւ ու փառք կու տար Աստուծոյ:

Այս պատմութեան մէջ մենք մեզ տեսնենք եւ հաւատքի մէջ մնանք անկոտորում: Մենք մեր պարտքը կատարենք եւ հաւատանք, որ յարատեւութեամբ պահել-պահպանելով մեր հայրենիքն անպայմանօրէն ոտքի պիտի կանգնինք: Հաշմանդամ կնոջ շուրջինները անհաւատներն են, մինչ հիւանդ կինը, թէեւ հաշմանդամ, իր հոգիին մինչեւ խորքը մնաց քաջ ու հաստատակամ:

Հայու ոգին անկոտորում է: Մարդկային է, երբ պահ մը տկար կը զգանք ու յուսալքուած ի տես վերջին իրադրութեանց: Բայց յանուն մեր քաջ նահատակ զինուորներուն ոտքի կանգնինք եւ մեր հոգեւոր սպառազինութեամբ արժեւորենք մեր քաջ ու երիտասարդ զինուոր-

ներու պատարագումը: Քրիստոսի Աւետարանը կեանքի գիրքն է, որ մեզի կը հաղորդէ յաւիտենական ճշմարտութիւններ: Մեր կեանքի հայելին դարձնենք այն, եւ այն ժամանակ մեր մէջ պիտի վերընծիւղուի նոր կեանք: Մերժենք ժամանակաւոր տկարութիւնները եւ հետամուտ ըլլանք նոր արշալոյսի խորհուրդին, որուն համար պէտք է ապաշխարել, այսինքն ապրիլ հաւատքով, պէտք է յարատեւել՝ կամքը գործի վերածելով. վերջապէս յանձնառու ըլլալու Աստուծոյ ձեռքերուն:

Միրելիներ ի Քրիստոս, Աստուածաշունչ մատենանր եւ ի մասնաւորի Քրիստոսի Աւետարանը՝ կեանքի գիրքը կը լուսաւորէ մեր կեանքը: Մեր ամբողջ միտքն ու սիրտը կեդրոնացնենք Աստուծոյ վրայ եւ մտածենք հազարումէկ ձեւերուն մասին, թէ ի՞նչ ձեւով մեզմէ իւրաքանչիւրը իր կեանքը կրնայ վերածել հոգեւոր սնունդի, յոյսի ու սիրոյ ճառագայթումի, հայրենակերտումի սրբազան ու նուիրական առաքելութեան մէջ: Մեկդի դնենք հայուն պատիւ չբերող բոլոր տեսակի այն պատկերաւոր հայեոյանքներն ու խօսքերը, եւ մեր կեանքի վայրկեանները ամբողջութեամբ նուիրենք Աստուծոյ ժողովուրդին ծառայութեամբ: Այսօր հայրենիքը ծանրաբեռնուած է գաղթականներով, ամենուրեք որդեկորոյս ծնողները երազը կ'ապրին իրենց նահատակ զաւակաց, երկիրն արիւնաքամ է, երեք տասնամեակներ շարունակ իշխանութիւններուն չյաջողուեց ամրացնել հիմքերը նորանկախացեալ հայրենիքին, եւ ի տես այս բոլորին հայ Մփիւռքը պատրաստակամ է իր ծառայութիւնը շարունակել բերելու յանուն հայրենիքին: Ուրեմն, բոլորով անխտիր մեր հաւատքին սլաքը դարձնենք դէպի կամքը Աստուծոյ, որուն հաւատացին մեր երիտասարդ նահատակ զինուորները: Փառք ու պատիւ անոնց յիշատակին. ամէն:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳԻՐ
ՆՈՐ ՏԱՐՈՒՈՅ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ
ՏՕՆԵՐՈՒ ՍԵՄԻՆ

Միբեցեալ եղբայր ի Քրիստոս,

Մեր ամանդութիւնը կը շարունակենք եւ գալիք Նոր Տարուոյ եւ Ծննդեան սեմին ձեզի կը յղենք մեր հոգեւոր խորհրդածութիւնը՝ անդրադարձ կատարելով անցնող տարւոյն վրայ եւ պատրաստակամ ոգով ու հաւատքով դիմաւորելու Նոր Տարին՝ Քրիստոսի սուրբ Ծննդեան խորհուրդով լուսաւորուած:

Արդարեւ, 2020 տարին իրօք աշխարհի կեանքին մէջ եւ առաւել եւս մեր ազգի զաւակաց ու հայրենիքի համար եղաւ անսովոր տարի մը: Համաճարակը ցնցեց ամբողջ աշխարհը եւ այն բաւական չէր, երբ մեր ազգը դէմ առ դէմ գտնուեցաւ Արցախեան պատերազմի ու անոր առթող մարտահրաւերներուն առաջ: Հայրենիք ապրող ու արտաշխարհի մեր հայրենակիցները բնականօրէն ապրեցան յուսահատութեան ու ցաւի զգացումներ: Առանց սակայն անդրադառնալու եղելութեանց, մենք կ'ուզենք մեր խօսքը ամրագրել հաւատքին ներշնչուած ուժին վրայ եւ յուսադրուած նայելու նոր արշալոյսի տեսիլքին, զորս պարտ ենք կերտել մեր իսկ ձեռքերով:

«Ի Քեզ, Տէ՛ր, յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան»:

Մեր անկոտրում յոյսը պիտի հաստատենք Աստուծոյ վրայ: Պարտ ենք սերտել անցեալը եւ քրիստոնէական սիրով ու հաւատով, փոխադարձ յարգանքօք ու համերաշխ տրամադրութեամբ տեսնելու լուսաւոր ապա-

զան: Արցախեան պատերազմի նախօրէին եւ յաջորդող օրերուն բոլորս ալ իրազեկ դարձանք տիրող իրավիճակին, երբ ազգի զաւակունք խորապէս կը սզային իրենց կորուստները, մեր ընտիր երիտասարդներու նահատակութիւնը: Այս ընթացքին, ի տես մեր ազգամիջեան վէճերուն եւ անմիաբանութեան, որոշապէս յստակ դարձաւ, որ քրիստոնէական սերն ու հաւատքը ոչ մէկ ձեւով կը ներգործէր մեր հոգեւոր կեանքի ու արեան մէջ:

Սիրելի հոգեւոր եղբայրներ, մեր խնդրանքն է, որ տիւ ու գիշեր մեր ժողովուրդի զաւակունք առաջնորդենք դէպի մեր Ս. Եկեղեցին՝ Աստուծոյ տունը, ուր մեր խօսքն ու գործը պիտի ըլլան Աստուծոյ կամքի համաձայն: Այսօր մեր հայրենիքը կը գտնուի շատ ծանր վիճակի մը մէջ եւ անոր գլխաւոր պատճառներէն մէկը նախկին իշխանութեանց մէջ պատասխանատուութիւն յանձն առած անձանց ազահոթիւնն ու աւազակութիւնն է, որուն որպէս հետեւանք երկիրը մնաց անպաշտպան թշնամիին դէմ ու տնտեսապէս քայքայուեցաւ:

Մեր պարտքն է յուսադրել մեր ժողովուրդը եւ նորահաս սերունդներու հոգիներուն մէջ վառ պահել քրիստոնէական հաւատքն ու հայրենասիրութեան ոգին: Հայ հոգեւորականը իր հոգին ու սիրտը պիտի բանայ բոլորին եւ առաջնորդէ եկեղեցւոյ զաւակունք դէպի ճշմարիտն ու բարին: Մեզի է վստահուած այս առաքելութիւնը, որպէսզի Քրիստոսի հօտը չցրուի: Մեզ հարկաւոր է ներքին միաբանութիւն, սիրով ու հաւատքով շաղախուած կեանք: Ժամանակի մէջ ապրող ու գործող անարդար մարդիկ երբեք պատճառ չպիտի դառնան, որ մեր հոգու հայեացքը շեղենք մեր Մայր երկրի վրայէն: Մեր գոյութիւնը պայմանաւորուած է գերագոյն սրբութիւններ՝ հայրենիքով ու Ս. Էջմիածնով:

Միբեյիներ ի Քրիստոս, մեր յոյսը հաստատելով Աստուծոյ վրայ՝ մեր բարի առաքելութիւնը շարունակենք ի խնդիր մեր թեմի եկեղեցիներուն բարեգարդմանը, որպէսզի իւրաքանչիւր հայ հաւատացեալի էութիւնը լեցնենք Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ: Աստուծոյ խօսքին քարոզչութեամբ լուսաւորենք բոլորի կեանքը եւ պատգամ հաղորդենք, որպէսզի քրիստոնէական հաւատքը դարձնենք հիմքը հայ ընտանիքին:

Նոր Տարուոյ եւ Ս. Ծննդեան տօներու սեմին ձեզ ի բոլոր սրտէ կը մաղթենք քաջառողջ երկար կեանք, որպէսզի ձեր քահանայական կեանքով հոգեւոր մխիթարութիւն պարգեւէք մեր բարի հաւատացելոց:

Դեկտեմբեր 15, 2020